

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼԵԶՎԱԿՐԹԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՐՎԱԳԻԾ

ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ
«ԼԻՆԳՎԱ»
2008

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF RA
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА



ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱԼՍԱՐԱՆ

YEREVAN STATE LINGUISTIC UNIVERSITY
AFTER BRUSOV

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
ЛИНГВИСТИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ
ИМ. В.Я.БРИУСОВА

Լեզվաբանական կրթության
հիմնահարցեր
Պրակ 1

Issues of Linguistic Education
Vol. 1

Вопросы лингвистического
образования
Вып. 1

ՀՏԴ 801 : 37.01
ԳՄԴ 81 + 74
Հ 247

Ձեկույցը պատրաստված է Հայաստան-Եվրախորհուրդ համագործակցության ծրագրի շրջանակներում

Հ 247 Հայաստանի Հանրապետության լեզվակրթական քաղաքականության ուրվագիծ. Ազգային զեկույց: –Եր.: Լինգվա, 2008. –140 էջ:

Ազգային զեկույցը պատրաստող հեղինակային խումբ (ստեղծվել է ՀՀ ԿԳ նախարարի 05.11.2007թ. N 210311/1012հրամանով)

Սուրեն Ջուլյան - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան (ԵՊԼՀ), ռեկտոր, ծրագրի ազգային համակարգող, խորհրդատու

Մելանյա Աստվածատրյան – մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊԼՀ, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ծրագրի ղեկավար (գլուխ 1-3, 5, 10, 12)

Աիրա Թովուզյան – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊԼՀ, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոն (գլուխ 8.2 - 8.5, 9.4)

Ներսես Գևորգյան – Կրթության և գիտության նախարարի խորհրդական, ԵՊԼՀ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն (գլուխ 11)

Գայանե Թերզյան - ԵՊԼՀ, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոն (գլուխ 4; 6; 7; 8.1)

Մերոբ Խաչատրյան – Կրթության ազգային ինստիտուտ, հայագիտության և սոցիալ-մշակութային առարկաների բաժին (գլուխ 9.1-9.3, 9.5-9.6)

ԳՄԴ 81 + 74

Ծրագրի փորձագետ

Կարեն Մելքոնյան - ՀՀ ԿԳ նախարարություն, Կրթական ծրագրերի իրականացման գրասենյակ (ԾԻԳ)

Թարգմանիչ

Արայիկ Ջրաղացյանյան - ԵՊԼՀ, անգլերենի հաղորդակցման ամբիոն

Ծրագրի գծով օգնական

Բելլա Այունց - ԵՊԼՀ, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոն

ISBN 978-99939-56 -005 -2

© «Լինգվա», 2008թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	7
1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	7
2. ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ԼԵԶՎԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	9
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՀՀ)	12
Ընդհանուր տեղեկություններ	12
3.1. Աշխարհագրական դիրքը	12
3.2. ՀՀ վարչատարածքային բաժանումը	13
3.3. Ժողովրդագրական տվյալներ	13
4. ՀՀ ԼԵԶՎԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ	14
4.1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն	14
4.2. Օրենքներ	15
4.2.1. Հայաստանի Հանրապետության օրենքը լեզվի մասին	15
4.2.2. Հայաստանի Հանրապետության օրենքը գովազդի մասին	17
4.2.3. Հայաստանի Հանրապետության օրենքը հեռուստա- տեսության և ռադիոյի մասին	17
4.2.4. Հայաստանի Հանրապետության օրենքը մշակութային օրենսդրության հիմունքների մասին	18
4.2.5. Հայաստանի Հանրապետության օրենքը կրթության մասին	19
4.2.6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք	20
4.3. Ենթօրենսդրական ակտեր	21
4.3.1. Հանրակրթության պետական կրթակարգ	21
4.3.2. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ	22
4.3.3. Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքա- կանության պետական ծրագիրը	24
4.3.4. Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2008-2015 թվականների պետական ծրագիրը	26
4.4. Հայաստանի միջազգային պարտավորությունները	28
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ	30
5.1. Ընդհանուր նկարագիր	30
5.2. Պատմական ակնարկ	31

5.3. Լեզվական իրավիճակը խորհրդային տարիներին (մինչև 1990 թ.).....	32
5.4. Լեզվական իրավիճակը 1990-ականներից հետո.....	33
5.5. Երկլեզվություն.....	33
5.6. ՀՀ ժողովրդագրական իրավիճակը	35
6. ՀԱՅԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱ ԵՎ ԴԱՍԱԿԱՆԴԱՍԱԼ ԼԵԶՈՒ	38
6.1. Հայերենը՝ որպես պետական լեզու.....	38
6.2. Հայերենը՝ որպես ուսումնական առարկա	41
6.2.1. Հայերենը՝ որպես մայրենի լեզու.....	42
6.2.2. Հայերենը՝ որպես օտար կամ երկրորդ լեզու	45
6.2.3. Հայոց լեզվի գնահատման համակարգը	46
7. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	48
7.1. Հայերենը՝ որպես կրթության լեզու	48
7.2. Այլ լեզուները՝ որպես կրթության լեզու	49
II. ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	51
8. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ	51
8.1. Նախադպրոցական կրթություն	52
8.1.1. Նախադպրոցական կրթության վիճակը	52
8.1.2. Լեզուների ուսուցումը նախադպրոցական հաստատություններում.....	54
8.1.3. «Կոնկրետ դեպքերի հետազոտություն» (Case Study) .	55
8.2. Դպրոցական կրթություն	56
8.2.1 Բարեփոխումները հանրակրթության ոլորտում.....	57
8.2.2. Թվեր, փաստեր.....	60
8.2.3 Լեզվական քաղաքականությունը հանրակրթությունում.....	64
8.2.4 Օտար լեզուների դասավանդումը դպրոցում	64
8.2.5. Երկլեզու և եռալեզու ուսուցմամբ դպրոցներ	72
8.2.6. Գնահատման գործընթաց	72
8.3. Ոչ պետական դպրոցները Հայաստանում	73
8.4. Հատուկ կրթությունը Հայաստանում.....	74
8.4.1. Օտար լեզուն հատուկ դպրոցներում	75
8.4.2 Ներառական կրթություն.....	75
8.5. Լեզվական կրթության ձևերը արտադասարանական- արտադպրոցական կրթության մեջ (լրացուցիչ կրթություն)	76

9. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	78
9.1. Միջին մասնագիտական կրթություն	79
9.1.1. <i>Լեզուների ուսուցումը միջին մասնագիտական հաստատություններում</i>	79
9.2. Բարձրագույն մասնագիտական դպրոց	80
9.2.1. <i>Ընդունելության քննություններ լեզուներից</i>	83
9.2.2. <i>Դիմորդների բաշխվածությունը ըստ բնակության վայրի</i>	86
9.2.3. <i>Քննությունների արդյունքները</i>	89
9.2.4. <i>Ընդունելության քննություններին ներկայացվող բովանդակային պահանջները</i>	91
9.3. Լեզուների ուսուցումը բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում	92
9.3.1. <i>Լեզուներ սովորող ուսանողների և դասավանդողների կազմը</i>	92
9.3.2. <i>Լեզուների ուսուցումը որպես մասնագիտություն</i>	93
9.3.3. <i>Լեզուների ուսուցումը այլ մասնագիտության զուգորդումով</i>	95
9.3.4. <i>Լեզուների ուսուցումը ոչ լեզվաբանական ֆակուլտետներում</i>	96
9.3.5. <i>Լեզվի ուսուցումը հեռակա համակարգով</i>	97
9.4. Մանկավարժական կրթություն և մասնագիտական զարգացում	98
9.5. Լեզվի մասնագետների պահանջարկը աշխատաշուկայում	99
9.6. Հետբուհական կրթություն	101
9.6.1. <i>Լեզվաբանական մասնագիտություններ</i>	101
9.6.2. <i>Ոչ լեզվաբանական մասնագիտություններ</i>	102
9.6.3. <i>Ասպիրանտների և ներկայացվող բովանդակային պահանջները</i>	102
10. ՏՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՄ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵՁՈՒՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	104
10.1. ՀՀ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները	104
10.2. Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվական իրավունքները	106
10.3. Փոքրամասնությունների հանրակրթությունը Հայաստանում	109

10.3.1. Նախադպրոցական կրթություն.....	109
10.3.2. Տարրական դպրոց.....	110
10.3.3. Միջին դպրոց.....	112
10.3.4. Ավագ դպրոց.....	113
10.4. Մասնագիտական կրթություն.....	114
10.4.1. Միջին մասնագիտական կրթություն.....	114
10.4.2. Բարձրագույն մասնագիտական կրթություն.....	114
10.5. Խարտիայի պահանջներում չընդգրկված լեզուների իրավիճակը.....	116
11. ՀԱՐԱՏԵՎ / ՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (LIFE LONG LEARNING)	118
11.1. Հարատև կրթության համակարգը Հայաստանում.....	118
11.2. Հասարակական կազմակերպություններ.....	119
III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵԶՎԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ	121
12. ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	121
12.1. Դրական միտումներ լեզվակրթության քաղաքականության մեջ.....	121
12.2. Ի՞նչ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել (տեսլականը և առաջարկներ).....	127
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	131
ԼԵԶՎԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	131
ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐ, ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ	131
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	132
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ	133
ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԸ	134
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՄ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	134
ՀԱՎԵԼՎԱԾ 1	136
ՀԱՎԵԼՎԱԾ 2	139

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2002 թվականին Եվրախորհրդի լեզվաքաղաքականության բաժինը սահմանել է անդամ երկրներում լեզվաքաղաքականության մշակման սկզբունքները և մեթոդները:

Եվրոպայի խորհրդի՝ կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողովի 2005թ. հոկտեմբերի որոշմամբ հաստատվել է Հայաստանի առաջարկը՝ միանալու «Լեզվական կրթության քաղաքականության ուրվագիծ» («Language Policy Profile») ծրագրին, որը Հայաստանում սկսվել է 2007թ. գարնանը:

Ծրագրի նպատակն է

- վերլուծել և գնահատել լեզվական կրթության վիճակը բոլոր ոլորտներում՝ անդրադառնալով նրա և՛ ուժեղ, և՛ թույլ կողմերին.
- քննարկել Եվրախորհրդի լեզվաքաղաքականության հիմնարար սկզբունքների հետագա զարգացումը և իրականացումը Հայաստանում.
- մշակել Հայաստանում լեզվաքաղաքականության ընդհանուր հայեցակարգը.
- խթանել հասարակության բազմալեզվության զարգացումը, այդ թվում՝ նաև տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսուցումը.
- նպաստել անհատների բազմալեզվությանը և ողջ կյանքի ընթացքում լեզուներ սովորելու ձգտմանը (նախադպրոցականից մինչև չափահասության տարիքը և հետագա ողջ կյանքի ընթացքում).
- բազմալեզվության զարգացմանը նպաստելու արդյունքում հասնել այն բանին, որ իրական դառնա միասնական Եվրոպայի գաղափարը.
 - դյուրացնել մարդկանց փոխադարձ շփումները.
 - նպաստել մարդկանց՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի իրականացմանը.

2007 թ. ապրիլին տեղի ունեցավ Եվրախորհրդի ներկայացուցիչ փորձագետների (Յոհանա Պանտիեր և Էլիզիթ Քինգ) առաջին այցը Հայաստան՝ գործընթացը ծրագրելու և ազգային զեկույցը մշակող հայ մասնագետներին օժանդակելու նպատակով:

ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով նախարարության և Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ներկայացուցիչներից ստեղծվեց

աշխատանքային խումբ, որի առաքելությունն է նախապատրաստել լեզվակրթության քաղաքականության մասին ազգային զեկույց:

Եվրախորհրդի ներկայացուցիչ փորձագետների (Յոհանա Պանտիեր, Էլիդիր Քինգ, Ժան-Կլոդ Բեակո, Մարիա Ստոիչևա, Դոլորես Սոլե Վիլանովա) երկրորդ այցը Հայաստան տեղի ունեցավ 2008 թվականի ապրիլի 12-18-ը: Նրանք բազմաթիվ հանդիպումներ ունեցան Հայաստանի ազգային զեկույցը պատրաստող հեղինակային խմբի, կրթության և գիտության նախարարի և այլ պաշտոնական անձանց, լեզվակրթության քաղաքականության ոլորտի մասնագետների հետ, եղան Երևանի և մարզերի տարբեր դպրոցներում և բուհերում, ազգային փոքրամասնությունների համայնքներում և նրանց դպրոցներում, մասնակցեցին ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին:

Ազգային զեկույցը պատրաստող հեղինակային խմբի և լեզվակրթության ու լեզվաքաղաքականության ոլորտի մասնագետների հետ քննարկեցին Ազգային զեկույցի նախնական տարբերակը, պարզաբանումներ ու առաջարկություններ արեցին:

Ձեկույցի հիման վրա Եվրախորհրդի փորձագետների հետ համատեղ պետք է ստեղծվի Հայաստանի լեզվական կրթության քաղաքականության վերջնական զեկույց-ուրվագիծը:

2. ԵՎՐԱՆՈՐՀՐԴԻ ԼԵԶՎԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Եվրոպան բազմալեզու է և մշակութային առումով՝ բազմազան: Ուստի, թե՛ համաշխարհային շուկայում իր տնտեսության մրցունակությունն ապահովելու և թե՛ եվրոպացիների միջև փոխըմբռնման հասնելու համար այն արդյունավետ հաղորդակցության կարիք ունի: Իսկ դրա համար կարևոր է վարվող լեզվական քաղաքականությունը: Էական է լեզվաքաղաքականության ներդրումը սոցիալական քաղաքականության մեջ, մասնավորապես այն, որի նպատակն է եվրոպական ընդհանրության գիտակցության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական արժեքների սերմանումը:

Ժամանակակից լեզուների բնագավառում Եվրախորհրդի գործունեության քաղաքական կանոններն են.

- Ձինել բոլոր եվրոպացիներին միջազգային ասպարեզում առավել ակտիվ տեղաշարժերի և ավելի սերտ համագործակցության մարտահրավերներին դիմագրավելու միջոցներով ոչ միայն կրթության, մշակույթի ու գիտության, այլ նաև առևտրի ու արդյունաբերության բնագավառներում:
- Ավելի արդյունավետ միջազգային հաղորդակցության միջոցով նպաստել փոխըմբռնմանն ու հանդուրժողականությանը, ազգային ինքնության և մշակութային բազմազանության նկատմամբ հարգանքին:
- Պահպանել ու զարգացնել Եվրոպայի մշակութային կյանքի հարստությունն ու բազմազանությունը՝ ազգային, տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների (այդ թվում՝ նաև հազվադեպ ուսուցանվող լեզուների) փոխադարձ ավելի խորը իմացության միջոցով:
- Բավարարել բազմալեզու և բազմամշակույթ Եվրոպայի կարիքները՝ զարգացնելով լեզվական ու մշակութային արգելքները հաղթահարելու և միմյանց հետ հաղորդակցվելու եվրոպացիների կարողությունները¹:

Լեզվական կրթության քաղաքականության մշակման տեսանկյունից պետք է հաշվի առնել բազմալեզվության երկու կողմը.

¹ CEFR, p.3

- **անհատի** բազմալեզվություն. նրա կողմից մի քանի լեզուների իմացություն (plurilingualism)
- **հասարակության** բազմալեզվություն. տվյալ երկրում, տարածաշրջանում տարբեր լեզուների համագոյակցություն (multilingualism):

Եվրախորհուրդն իր համընդհանուր նպատակին՝ «իր անդամների ավելի սերտ միասնության հասնելու» համար «մշակույթի բնագավառում որդեգրել է միասնական քաղաքականությունը»: Ժամանակակից լեզուների ոլորտում Եվրախորհուրդը գործում է փոխհամաձայնության և շարունակականության հիման վրա՝ հավատարիմ մնալով հիմնական սկզբունքներին.

- **Լեզվական և մշակութային բազմազանություն.** Եվրոպայում բազմաթիվ լեզուների և մշակույթների հարուստ ժառանգությունը համընդհանուր գանձ է, որը պետք է պաշտպանել ու զարգացնել, ուստի կրթական լուրջ ջանքեր են անհրաժեշտ, որպեսզի այդ բազմազանությունը հաղորդակցության խոչընդոտից վերածվի փոխադարձ հարստացման և փոխըմբռնման աղբյուրի:
- **Բոլոր լեզուների համարժեքության ընդունում.** հարգալից վերաբերմունք բոլոր, այդ թվում նաև ազգային փոքրամասնությունների և հարևան ժողովուրդների լեզուների նկատմամբ:
- **Ազգամիջյան և միջմշակութային արդյունավետ հաղորդակցություն.** որն ապահովվում է Եվրախորհրդի կողմից մշակված միասնական մեթոդաբանական հիմքի վրա («Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ»),
- **Բնակչության ազատ տեղաշարժ, փոխըմբռնում և համագործակցություն.** միայն եվրոպական ժամանակակից լեզուներն ավելի լավ իմանալով է հնարավոր դյուրացնել տարբեր մայրենի լեզուներ ունեցող եվրոպացիների հաղորդակցությունն ու փոխներգործությունը՝ նպաստելով բնակչության ազատ տեղաշարժմանը, փոխըմբռնմանն ու համագործակցությանը, ինչպես նաև կանխակալ կարծիքների ու խտրականության հաղթահարմանը:
- **Շարունակական (հարատև) կրթություն.** այսօր լեզուների ուսուցումը դիտարկվում է որպես շարունակական խնդիր ողջ կյանքի համար, ուստի խիստ կարևոր է դառնում զարգացնել երիտասարդների՝ դպրոցից դուրս նոր լեզվական փորձառություն ձեռք բերելու շարժառիթները, կարողություններն ու վստահությունը, ինչը շարունակական կրթության կարևոր նախապայմանն է:

Հայաստանի լեզվակրթության քաղաքականությունը նույնպես պետք է ուղղված լինի ինտեգրմանը համաշխարհային, նախ և առաջ համաեվրոպական միասնական կրթական տարածք՝ անպայման հաշվի առնելով կրթության, մշակույթի ազգային առանձնահատկություններն ու ավանդույթները:

Հայաստանի Հանրապետությունն ակտիվորեն զարգացնում է իր միջազգային հարաբերությունները, ինչի արդյունքում հասարակության բոլոր խավերի կողմից օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացման անհրաժեշտություն է ծագում: Մեծանում է օտար լեզուների դերը միջազգային ասպարեզում պետության հեղինակության բարձրացման, հայ ժողովրդի հոգևոր արժեքների հետ համաշխարհային հանրության ծանոթացման գործում: Չնայած աճող պահանջարկին, Հայաստանում բնակչության օտար լեզուների իմացությունը բավարար մակարդակի վրա չի գտնվում:

Միաժամանակ, ուսուցման-ուսումնառության գործող համակարգը դեռևս չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, հետևաբար բավարար և լիարժեք չի ապահովում օտար լեզուների ներուժի օգտագործումը՝ որպես մարդու հոգեկան զարգացման, արժեքային համակարգի և բազմալեզու անձնավորության ձևավորմանը նպաստող գործոն: Ուստի պահանջվում է արմատապես վերանայել լեզվական կրթության հայեցակարգը թե՛ հանրակրթության, թե՛ մասնագիտական կրթության ոլորտներում:

Լեզվի և լեզուների իմացությունը նոր պայմաններում այլևս մասնագիտություն չէ, դա պարտադիր է ցանկացած մասնագետի համար: Ոչ մասնագիտական լեզվական կրթությունն այլ խնդիրներ պետք է լուծի. հաղորդակցվելու, այսինքն՝ տեղեկույթի ձեռքբերման, մշակման, պահպանման և փոխանակման, ինչը ենթադրում է լեզվական կրթության ավելի խոր և անմիջական ներառումը տվյալ մասնագիտության կրթական ռազմավարության մեջ:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՀՀ) Ընդհանուր տեղեկություններ



3.1. Աշխարհագրական դիրքը

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Հարավային Կովկասում:

Տարածքը՝ 29,74 հազար քառ. կմ է,
ծովի մակարդակից միջին բարձրությունը՝ 1,800 մետր:
Մայրաքաղաքը Երևանն է:

Հայաստանի Հանրապետության հարևան երկրները.

հյուսիսում՝ Կրաստանը,
արևելքում՝ Ադրբեջանը,

հարավում՝
հարավ-արևմուտքում՝
արևմուտքում՝

Իրանը,
Նախիջևանը (Ադրբեջան),
Թուրքիան:

3.2. ԳՂ վարչատարածքային բաժանումներ

Հայաստանը միասնական (ունիտար) պետություն է: Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները:

Հայաստանի Հանրապետությունն ունի 10 մարզ.

Արարատի մարզ, Արագածոտնի մարզ, Արմավիրի մարզ, Գեղարքունիքի մարզ, Լոռու մարզ, Կոտայքի մարզ, Շիրակի մարզ, Սյունիքի մարզ, Վայոց Ձորի մարզ, Տավուշի մարզ:

Մարզի կարգավիճակ ունի նաև մայրաքաղաք Երևանը:

3.3. Ժողովրդագրական տվյալներ

Բնակչությունը՝ 3,210,000 (2001թ. մարդահամարի տվյալներով)
Հայաստանից դուրս ապրում է ավելի քան 5 մլն մարդ, ովքեր իրենց մայրենի լեզուն համարում են հայերենը:

Էթնիկ կազմը (2001թ. մարդահամարի տվյալներով)
Հայեր՝ 97.8%

Ազգային փոքրամասնությունները. ռուսներ (0.5%), եզդիներ (1.3%), քրդեր (0.05%), ասորիներ (0.1%), հույներ (0.04%), ուկրաինացիներ (0.05%), հրեաներ և այլ ազգություններ (0.1%):

4. ՀՀ ԼԵԶՎԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում մի շարք օրենքներ և օրենսդրական ակտեր են կանոնակարգում կրթության (այդ թվում նաև՝ լեզվակրթության ոլորտը), ինչը ներառում է նաև ազգային փոքրամասնությունների՝ մայրենի լեզվով կրթություն ստանալու, ազգային լեզուն ու մշակույթն ազատ զարգացնելու իրավունքները:

4.1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 05.06.2005)

ՀՀ Սահմանադրությունը մեր պետության արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը համարում է այդ քաղաքականության իրականացումը միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով (Հոդված 9), ինչը ենթադրում է միջազգային իրավունքի նորմերի գերակայություն բոլոր ոլորտներում:

Սահմանադրությունը Հայաստանի Հանրապետության պետական լեզու է հռչակում հայերենը (Հոդված 12), ինչը, սակայն, չի սահմանափակում այլ լեզուների իրավունքները, քանի որ Սահմանադրության մեջ ամրագրվում է նաև բոլոր մարդկանց հավասարությունը օրենքի առջև և արգելում է խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից և այլն (Հոդված 14.1), ինչպես նաև արգելվում է իրավունքների և ազատությունների օգտագործումը ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն քարոզելու նպատակով (Հոդված 47):

Սահմանադրությունը հաստատում է յուրաքանչյուր մարդու՝ իր ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունքը, ինչպես նաև ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունքը (Հոդված 41):

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների շարքում սահմանադրությունը սահմանում է նաև ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ իր ազատագրկման պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպ-

քուն՝ նաև մեղադրանքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվելու իրավունքը (Հոդված 16, կետ 7):

Քանի որ հայ ժողովուրդը պատմական հանգամանքների բերումով դարեր շարունակ մեծաքանակ Սփյուռք է ունեցել և հայոց լեզուն ու հայ մշակույթը ձևավորվել ու զարգացել են նաև հայ Սփյուռքում, ուստի Սահմանադրության մեջ ամրագրվել է նաև հայկական պետության պարտավորությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստելու հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը (Հոդված 11):

4.2. Օրենքներ

4.2.1. Հայաստանի Հանրապետության օրենքը լեզվի մասին (ընդունվել է 17.04.1993)

Լեզուների, լեզվակրթության և լեզվաքաղաքականության հիմնական սկզբունքները սահմանվում են «Լեզվի մասին» ՀՀ օրենքում: Այս օրենքը կարգավորում է լեզվավիճակը, պետական իշխանության և կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների լեզվահարաբերությունները:

Օրենքը նշում է, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները և որ պետությունն աջակցում է իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանն ու տարածմանը: Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը (Հոդված 1):

Օրենքը սահմանում է, որ ՀՀ տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է (Հոդված 2), ինչը, սակայն, չի ոտնահարում այլ լեզուների իրավունքները, քանի որ նույն հոդվածը սահմանում է նաև, որ Հայաստանի ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ (Հոդված 2):

Օրենքը սահմանափակում է օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատությունների հիմնադրման իրավունքը՝ այն վերապահելով միայն Հայաստանի Հանրապետության կառավարությանը (Հոդված 2):

Բացի այդ, պետական լեզվի կարգավիճակից է բխում նաև օրենքի այն դրույթը, որ ՀՀ նախնական և միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունը և հայոց լեզվի ուսուցումը պարտադիր են (Հոդված 2):

Օրենքում սահմանվում են ՀՀ քաղաքացիների լեզվական պարտականությունները և հաստատությունների լեզվական իրավունքներն ու պարտականությունները:

Քաղաքացիների լեզվական պարտականությունների մասին դրույթը նախ և առաջ վերաբերում է պաշտոնատար անձանց, ինչպես նաև սպասարկման առանձին ոլորտներում աշխատող ՀՀ քաղաքացիներին, որոնք պարտավոր են տիրապետել հայերենին: Բացի այդ, ՀՀ-ն ներկայացնող անձանց պաշտոնական ելույթների լեզուն պետք է լինի հայերենը (եթե դա չի հակասում տվյալ միջազգային ատյանում ընդունված կարգին): (Հոդված 3):

Հաստատությունների լեզվական իրավունքները և պարտականությունները տարածվում են ՀՀ տարածքում գտնվող ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների վրա, որոնք թեև այլ երկրների պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հաղորդակցվում են փոխադարձաբար ընդունելի լեզվով, սակայն ՀՀ տարածքում պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները պարտավոր են. գործավարությունը կատարել հայերեն, համագումարներում, նստաշրջաններում, ժողովներում, գիտաժողովներում, հրապարակային ատենախոսությունների և պաշտոնական ու զանգվածային այլ միջոցառումների ժամանակ ապահովել ոչ հայերեն ելույթների զուգահեռ հայերեն թարգմանությունը, ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները ձևավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով (Հոդված 4):

Ինչ վերաբերում է ՀՀ տարածքում գտնվող արտասահմանյան պետական մարմիններին, ձեռնարկություններին, հիմնարկներին ու կազմակերպություններին, ապա նրանք պարտավոր են պետական վերահսկողության ենթակա փաստաթղթերը զուգակցել հայերենով (Հոդված 4):

Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների կազմակերպությունները նույնպես իրենց փաստաթղթերը, ձևաթղթերը, կնիքները պետք է ձևավորեն հայերեն՝ իրենց լեզվով գուգահեռ թարգմանությամբ (Հոդված 4):

Թեև օրենքում նշվում էր, որ պետական լեզվաքաղաքականությունն իրականացվելու է ՀՀ կառավարության, իշխանության և կառավարման տեղական մարմինների կողմից (Հոդված 5), սակայն ՀՀ լեզվաքաղաքականության մասին կոնկրետ պետական ծրագիրն ընդունվել է միայն 2002 թվականին:

4.2.2. Հայաստանի Հանրապետության օրենքը գովազդի մասին (ընդունվել է 30.04.1996)

Գովազդի մասին ՀՀ օրենքում նույնպես համապատասխան դրույթներ կան լեզվի մասին (Հոդված 5): Այստեղ սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունում գովազդի լեզուն հայերենն է, սակայն, «անհրաժեշտության դեպքում, որպես լրացում, գովազդատուի հայեցողությամբ գովազդի շարադրանքը կարող է գուգորդվել նաև այլ լեզուներով՝ համեմատաբար փոքր տառերով»: Հոդվածը նշում է նաև, որ սույն դրույթը չի տարածվում օտար լեզուներով տպագրվող թերթերի, հատուկ հրատարակությունների, ապրանքանիշերի և մակնիշների վրա, և որ գովազդի հայերեն շարադրանքը տեղեկատվության ծավալով չպետք է զիջի այլ լեզվով հրապարակվող տարբերակին:

4.2.3. Հայաստանի Հանրապետության օրենքը հեռուստատեսության և ռադիոյի մասին (ընդունվել է 09.10.2000)

Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենքը կանոնակարգում է նաև եթերում հնչող լեզուները: Հեռուստառադիոհաղորդումների լեզվին վերաբերող հոդվածը (Հոդված 5) սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումների լեզուն հայերենն է, բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի: Հեռուստառադիոընկերությունները պարտավոր են ապահովել իրենց հաղորդումների լեզվի անաղարտությունը:

Նույն հոդվածը սահմանում է նաև, որ օտար լեզուներով հեռուստառադիոհաղորդումները, գեղարվեստական, վավերագրական և մուլտիպլիկացիոն կինոնկարները, ինչպես նաև հայերեն հաղորդումների օտարալեզու դրվագները (հատվածները) պետք է

հեռարձակվեն հայերեն համաժամանակյա թարգմանությամբ՝ ծայնային կամ լուսագրային եղանակով:

Հոդվածն առանձին անդրադառնում է այլ լեզուների ուսուցման նպատակով կազմակերպվող հեռուստառադիո-դասընթացներին, որոնք, ինչպես նաև երգերը և երաժշտական այլ ժանրերի ստեղծագործությունները կարող են եթեր հեռարձակվել առանց հայերեն թարգմանության: Այս դրույթները, սակայն, չեն տարածվում արտերկրի համար հեռարձակվող հեռուստառադիո-հաղորդումների և ազգային փոքրամասնությունների լեզուներով տրվող հաղորդումների վրա:

Առանձին հոդվածով սահմանվում են հանրային հեռուստառադիոընկերության կարգավիճակը և գործունեության սկզբունքները (Հոդված 28), ըստ որոնց հանրային հեռուստառադիոընկերությունը կարող է եթերային ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար: Նման հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ՝ շաբաթական մինչև մեկ ժամ, իսկ ռադիոյով՝ օրական մինչև մեկ ժամ ժամաքանակը:

4.2.4. Հայաստանի Հանրապետության օրենքը մշակութային օրենսդրության հիմունքների մասին (ընդունվել է 20.11.2002)

Մշակութային օրենսդրության հիմունքների մասին ՀՀ օրենքում հատուկ սահմանվում է (Հոդված 6), որ օրենքի կարգավորման ու պաշտպանության առարկա մշակութային արժեքների շարքում են նաև լեզուները, բարբառները, խոսվածքները, ազգային ավանդույթներն ու սովորույթները, պատմաաշխարհագրական տեղանունները և այլն:

Օրենքում առանձին հոդվածով (Հոդված 8) սահմանվում է ազգային փոքրամասնությունների մշակույթների նկատմամբ վերաբերմունքը, ըստ որի Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, պետական ծրագրերի իրականացման միջոցով նպաստում է նրանց կրոնի, ավանդույթների, լեզվի, մշակութային ժառանգության, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման համար պայմանների ստեղծմանը:

4.2.5. Հայաստանի Հանրապետության օրենքը կրթության մասին

«Կրթության մասին» ՀՀ օրենքը կանոնակարգում է կրթության բնագավառում պետական քաղաքականությունը, դրա սկզբունքները, այդ թվում նաև կրթության ոլորտում լեզվաքաղաքականությանն ու լեզվակրթությանն առնչվող խնդիրները:

Ըստ այս օրենքի՝ կրթության բնագավառում պետական քաղաքականության գերակայություններից է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն:

Կրթության բնագավառում պետական քաղաքականությունը հիմնվում է ազգային դպրոցի վրա, որի գլխավոր նպատակն է մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանի զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումը: ՀՀ կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը (Հոդված 4):

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կարևոր սկզբունքներից են.

- կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության դաստիարակությունը և այլն.
- կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին.
- միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը.
- սփյուռքում հայապահպան կրթական գործունեությանն աջակցելը.
- ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը և այլն: (Հոդված 5)

Միևնույն ժամանակ օրենքը սահմանում է նաև կրթական իրավունքի պետական երաշխիքները (Հոդված 6), այն է՝ պետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից:

Ուսուցման լեզուն (Հոդված 7)

Հայաստանի Հանրապետությունում կրթությունն իրականացվում է «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան (վերևում տե՛ս օրենքի 2-րդ հոդվածը):

Կրթության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջների շարքում (Հոդված 11) օրենքը սահմանում է, որ այն պետք է ապահովի ոչ միայն սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան, այլ նաև ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը, սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը, ինչն անհնար է առանց օտար լեզուների ուսուցման բարձր մակարդակի ապահովման:

Արդեն նախադպրոցական կրթության հիմնական խնդիրների շարքում օրենքը ամրագրում է մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների ուսումնասիրման նախադրյալների ապահովման անհրաժեշտությունը (Հոդված 17), իսկ հանրակրթության հիմնական խնդիրների շարքում՝ «համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, ազգային մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատի և քաղաքացու» ձևավորման կարևորությունը:

4.2.6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք (ընդունվել է 06.12.1985)

Օրենքի՝ «Կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումները» գլխում (14) սահմանվում է վարչական տուգանքի նշանակում, եթե ՀՀ ուսումնական հաստատություններում չի ապահովվում առարկաների հայերեն դասավանդումը կամ միջնակարգ-մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում չեն ապահովվում հայոց լեզվի ուսուցումը կամ հայոց լեզվի ընդունելության քննությունները (Հոդված 189.2.):

4.3. Ենթաօրենսդրական ակտեր

4.3.1. Հանրակրթության պետական կրթակարգ (ընդունվել է 27.05.2004թ., ՀՀ Կառավարության N 20 արժանագրային որոշման համաձայն)

Հանրակրթության պետական կրթակարգն ընդգրկում է կրթական քաղաքականության հիմնական դրույթները, դաստիարակության, ուսուցման, ուսումնառության և գնահատման ընդհանուր սկզբունքները: Այս փաստաթղթի ընդունումը պայմանավորված է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի իրացման ու պաշտպանության, կրթության համակարգի գործառության և զարգացման համար իրավական երաշխիքների ու մեխանիզմների ապահովման անհրաժեշտությամբ:

Փաստաթղթում կրթությունը հռչակվում է երկրի զարգացման ու հզորացման, ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոն ու երաշխիք:

Կրթակարգի հիմնական գործառույթների թվում կարևորվում են կրթության բնագավառում քաղաքականության միասնականության ապահովումը. կրթության որակի բարելավման, ինչպես նաև անհատի պահանջունքներին և միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխանության ապահովումը:

Վերլուծելով հանրակրթական համակարգի բարեփոխման անհրաժեշտությունը թելադրող գործոնները՝ Կրթակարգը մասնավորապես նշում է կյանքի բոլոր ոլորտներում տեղի ունեցող համակարգային փոփոխությունները, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, մշակութային, սոցիալական գործոններով:

Սահմանելով հանրակրթության կազմակերպման հիմնական սկզբունքները՝ Կրթակարգը մասնավորապես ընդգծում է ազգայինի հենքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ գույությունը, կրթության իրականացումը ՀՀ պետական լեզվով, հայոց լեզվի, հայ ժողովրդի մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանը նպատակաուղղված լինելը, ազգային ինքնության և միասնության ապահովումը: Միևնույն ժամանակ նշվում է նաև ՀՀ-ում կրթության աշխարհիկ բնույթը, խտրականությունից ու սահմանափակումներից զերծ լինելը, բոլորին հավասարապես մատչելի լինելը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

Կրթակարգում, «Կրթության մասին» ՀՀ օրենքից ելնելով, ամրագրվում է նաև, որ ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքն իրացվում է հանրակրթության միջոցով:

Փաստաթղթում որպես պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է ներկայացվում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի նարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը: Այդ տեսանկյունից հանրակրթական դպրոցի շրջանավարտին ներկայացվում են մի շարք պահանջներ, մասնավորապես՝

- իր հայրենիքը ճանաչելու, հայրենասեր լինելու, պետական լեզվին՝ հայերենին լիարժեք տիրապետելու, համաշխարհային քաղաքակրթության մեջ հայ ժողովրդի ու հայոց պետության դերը գիտակցելու, ազգային մտածողության և ինքնագիտակցության կարևորությունը

- միևնույն ժամանակ դրա կողքին ընդգծվում են նաև համաշխարհային քաղաքակրթության նվաճումները ճանաչելու, համամարդկային արժեքները հարգելու, ինչպես նաև առնվազն երկու օտար լեզուներով հաղորդակցվելու, հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաներից օգտվելու կարողությունները:

4.3.2. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ (ընդունվել է ՀՀ Կառավարության 17.06.2004 N 900-Ն որոշման համաձայն)

Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը սահմանում է կրթության բովանդակության կառուցվածքը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն չափը, սովորողներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, գնահատման ձևերն ու սանդղակը:

Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը մշակվում է հանրակրթության պետական կրթակարգում սահմանված սկզբունքներին համաձայն:

Միջնակարգ կրթության պետական չափորոշիչին համապատասխան

- ստեղծվում են ուսումնական առարկաների չափորոշիչներ ու ծրագրեր, օրինակելի ուսումնական պլաններ և ուսումնական գործընթացը կանոնակարգող նորմատիվ այլ փաստաթղթեր.

- կազմակերպվում են ուսուցիչների և մանկավարժական ղեկավար կադրերի պատրաստումը, մասնագիտական կատարելագործումը և ատեստավորումը.
- գնահատվում են հանրակրթության արդյունքները.
- վերանայվում են ծրագրերը, դասագրքերը և այլ ուսումնական նյութեր.
- միջնակարգ կրթության պետական չափորոշիչը տեղայնացվում է դպրոցական բաղադրիչով՝ ելնելով դպրոցի առանձնահատկություններից:

Միաժամանակ սահմանվում է, որ առարկայական չափորոշիչը մշակվում է հանրակրթության պետական կրթակարգում ամրագրված հիմնական սկզբունքների համաձայն, իսկ առարկայական չափորոշիչի հիման վրա մշակվում են ուսումնական առարկաների պետական ծրագրերը, որոնք հիմք են ծառայում դասագրքերի, ձեռնարկների և ուսումնական այլ նյութերի ստեղծման համար:

Միջնակարգ կրթության պետական չափորոշիչի համաձայն սահմանվում է նաև միջնակարգ կրթության բովանդակությունը, որը ներկայացվում է ուսումնական բնագավառներով և բովանդակային բաղադրիչներով:

Չափորոշիչում լեզուները ներկայացված են երկու առանձին ուսումնական բնագավառներով՝

- հայոց լեզու, գրականություն
- օտար լեզուներ:

Թեև ազգային առանձնահատկություններից ելնելով հայոց լեզուն ներկայացված է որպես առանձին ուսումնական բնագավառ, սակայն կրթության բովանդակության բաղադրիչները ընդհանուր են բոլոր՝ ինը ուսումնական բնագավառների համար: Դրանք են՝

- գիտելիքների համակարգ,
- կարողություններ և հմտություններ՝
- արժեքային համակարգ:

ՀՀ կառավարության որոշմամբ (10.01.2008թ. N 111 – Ն) փոփոխություն և լրացում է կատարվել Միջնակարգ կրթության պետական չափորոշում, ըստ որի այսուհետ հանրակրթական դպրոցում «Օտար լեզուներ» բնագավառը ներկայացվում է **երեք օտար լեզվով, որոնցից մեկը ռուսերենն է:** Օտար լեզուների ընտրության կարգը և ըստ դասարանների դրանց դասավանդման հերթականությունը սահմանվում են օրինակելի ուսումնական պլանով»:

Այսպիսով, միջնակարգ դպրոցը հնարավորություն է ստանում պետական ֆինանսավորմամբ ուսուցանելու 3-րդ օտար լեզուն: Այս փոփոխությունը կնպաստի շատ դպրոցներում ավանդաբար ուսուցանվող ֆրանսերեն և գերմաներեն լեզուների պահպանմանը:

ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 8-ի որոշման համաձայն մեկ այլ փոփոխություն է մտցվել պետական չափորոշիչ՝ հարակրթական դպրոցի հենքային ուսումնական պլանների պարզաբանումներում, ինչի համաձայն հենքային ուսումնական պլաններում կարելի է նախարարության համաձայնությամբ փոփոխություն մտցնել «նախարարության կողմից երաշխավորված ծրագրերով, դասագրքերով և այլ ուսումնական գրականությամբ առանձին առարկաների խորացված ուսուցում իրականացնելու համար»:

4.3.3. Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության պետական ծրագիրը (հաստատվել է 18.02. 2002)

Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության պետական ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից (N138 որոշմամբ):

Ծրագիրը նախատեսված է գրական հայերենի կանոնարկման, ազգային փոքրամասնությունների լեզվական խնդիրների, կրթության համակարգի, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների, օտար լեզուների ուսուցման համակարգի, պաշտոնական խոսքի, զանգվածային լրատվության միջոցների լեզվի, հրապարակային գրվածքների, մշակույթի ոլորտների համար:

Ծրագրի հիմնախնդիրներն են

- Գրական հայերենի կանոնակարգումը
- Համակարգչային համացանցում հայերենի լիածավալ ներկայության ապահովում
- Պետական լեզվով կրթության և դաստիարակության ապահովում
- Հայերենի հանրային ուսուցման ապահովում ոչ հայախոսների համար
- Աջակցություն ՁԼՄ-ների լեզվական անաղարտության ապահովմանը Գործավարության և հրապարակային գրվածքների լեզվական ձևավորման օրենսդրական պահանջների կատարման ապահովում:

(այս հարցերի մասին ավելի մանրամասն տե՛ս «Չայերենը՝ որպես պետական լեզու» բաժնում)

✓ **Հայաստանի ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովում լեզվի բնագավառում**

Օրագրում ընդգծվում է, որ ազգային փոքրամասնությունների լեզուները ՀՀ լեզվամշակույթի անբաժան մասն են, նրա հարստությունը և որ այդ լեզուների նկատմամբ պետական հոգածությունը մեր երկրի ժողովրդավարացման հետագա ընթացքի և քաղաքացիական հասարակության զարգացման համար հանգուցային նշանակություն ունի:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ ՀՀ քաղաքացիների իրավունքները լեզվի բնագավառում երկբնույթ են՝ ազգային և հասարակական: Ազգային մակարդակում ապահովվում է մայրենի լեզվի իմացության, դրանով կրթվելու և այն գործածելու իրավունքը, հասարակականում՝ պետական լեզվի՝ հայերենի իմացության և գործածության՝ ՀՀ բոլոր քաղաքացիների իրավունքն ու պարտականությունը:

Այդ իրավունքների ապահովման համար ծրագիրը նախատեսում էր

- համակողմանի աջակցություն ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանմանն ու զարգացմանը,
- աջակցությունն ազգային փոքրամասնությունների միջև արդյունավետ լեզվական հաղորդակցմանն ու փոխըմբռնմանը՝ Եվրախորհրդի լեզվաքաղաքական նորմերին համապատասխան,
- մայրենի լեզվով կրթություն և դաստիարակություն ստանալու՝ ազգային փոքրամասնությունների իրավունքի ապահովման նպատակով տվյալ ազգության մտավորականության գիտամանկավարժական ներուժի ներգրավում,
- աջակցություն ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման աշխատանքներին,
- ազգային փոքրամասնությունների լեզուների դասագրքերի ստեղծման հնարավորությունների վերլուծություն և հրատարակչական ծրագրի մշակում:

✓ **Աջակցությունը Սփյուռքի հայապահպանմանը**

Սփյուռքում իրականացվելիք լեզվական քաղաքականության հիմնական նպատակն այն է, որ հայոց պետությունը, ելնելով համայն հայության ամբողջականության գիտակցումից, ազգային շահերը ներկայացնողի իր գործոնով պետք է վճռական

դերակատարություն ունենա Սփյուռքի հայապահպանման գործում:

✓ **ՀՀ-ում օտար լեզուների ուսուցման բարելավում**

Ծրագիրը կարևորում է մեր ժամանակներում քաղաքացիների՝ օտար լեզուների իմացության հարցը՝ միաժամանակ ընդգծելով, որ միասնականացման գործընթացները պետք է ծառայեն ոչ թե ժողովուրդների միաձուլմանը, այլ սեփական արժեքների անկողմնակալ և արժանապատիվ գնահատման, համաշխարհային հոգևոր մշակույթին առնչվելու, ազգային և համամարդկային ներդաշնակ զուգակցման նպատակին:

Ծրագրում նշվում է պետական լեզվի հարաբերությամբ օտար լեզուների օրենսդրորեն համահավասար դերը՝ միևնույն ժամանակ նշելով, որ տարբեր պատճառներով հասարակության վերաբերմունքը դրանց նկատմամբ կարող է տարբեր լինել: Հայաստանում, պատմական հանգամանքների բերումով, կարևորվում է ռուսերենի դերը:

Ավանդաբար լինելով մեր տարածքում ուսուցման և շփման երկրորդ լեզուն, նպաստելով համաշխարհային գիտության և մշակույթի նվաճումներին հաղորդակից դառնալուն՝ ռուսերենը հատուկ դեր ունի Հայաստանի հասարակական կյանքում:

Բացի այդ, վերջին տարիներին Հայաստանի ազատականացման և միջազգային հարաճուն շփումների հետևանքով անգլերենը, ակնհայտորեն ընդլայնելով իր գործառության սահմանները, վայելում է հասարակական բարձր պահանջարկ: Կրթական համակարգում դա հաճախ տեղի է ունենում մյուս օտար լեզուների հաշվին: Ուստի ծրագիրը կարևորում է կրթության համակարգում բոլոր օտար լեզուների հավասար բաշխվածությունն ապահովելը:

4.3.4. Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2008-2015 թվականների պետական ծրագիրը

Պետական ծրագրի այս նախագիծը դեռևս քննարկման փուլում է: Ծրագրում կարևոր շեշտադրումներ կան Հայաստանի կրթական համակարգի զարգացման հեռանկարների առումով, որոնք ենթադրում են նաև լեզուների ուսուցման մակարդակի բարելավում և բազմալեզվության զարգացում:

Ծրագիրը մասնավորապես կրթության զարգացման մարտահրավերների տեսանկյունից կարևորում է այն հանգամանքը, որ Հայաստանը գտնվում է մշակույթների և քաղաքակրթությունների հատման սահմանագծում, ինչի հետևանքով Հայաստանն ու

հայությունը պատմականորեն ձեռք են բերել կարևորագույն հատկանիշներ և գործառույթներ, ինչպես՝ քաղաքակրթությունների միջև յուրօրինակ «կամրջի» դերակատարումը, երբ յուրացնելով թե՛ արևելյան, թե՛ արևմտյան արժեհամակարգերից բխող նորամուծությունները, հայ ժողովուրդը դարեր շարունակ կարողացել է դրանք իր մեջ վերակառուցելով մատչելի ու ընթեռնելի դարձնել տարբեր աշխարհաքաղաքական միջավայրերի համար:

Միաժամանակ, գտնվելով մի տարածաշրջանում, որտեղ խաչվում են տարբեր աշխարհաքաղաքական ուժերի շահեր, Հայաստանը որդեգրել է միջազգային ակտիվ ներգրավման ռազմավարություն: Սա մի կողմից ենթադրում է կրթության բնագավառի ակտիվ մասնակցությունը գլոբալ և տարածաշրջանային գիտակրթական գործընթացներին, մյուս կողմից՝ խնդիր է առաջադրում կրթությանը՝ զարգացնել նման մասնակցության ներուժը, ապահովել լեզվական և միջմշակութային շփումների դժվարությունների հաղթահարումը:

Սահմանելով կրթության զարգացման գերակայությունները՝ ծրագիրը մասնավորապես ընդգծում է կրթության բովանդակության և չափորոշիչների բարելավման անհրաժեշտությունը: Բովանդակային բարեփոխումներում, մասնավորապես՝

- առաջնայնություն է տրվելու մայրենի և օտար լեզուներով հաղորդակցման, ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման, և այլ կարողություններին ու հմտություններին,

- մշակվելու են մայրենի և օտար լեզուների, հայագիտական և այլ առարկաների ուսուցման ընթացքում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ուսուցման և կիրառման համակողմանի բարելավման հայեցակարգերը,

- բարձրագույն կրթության մեջ ընդլայնվելու են օտար լեզուներով որոշ մասնագիտական առարկաների դասավանդման և այլալեզու մասնագիտական գրականության օգտագործման հնարավորությունները:

Ծրագրում առանձնակի կարևորություն է տրվում միջազգային ցանցերում մասնակցության ընդլայնմանը:

Հայաստանի կրթական համակարգի եվրոպական ինտեգրացմանը միտված քաղաքականությունը և մասնակցությունը բարձրագույն կրթության բարեփոխումների ոլորտում առաջնայնություն համարվող Բոլոնիայի գործընթացին շարունակում են մնալ միջազգային համագործակցությունը և ցանցերում ակտիվ մասնակցության ներուժը խթանող գործոններ: Շարունակելով

ջանքերն այդ ուղղությամբ՝ պետությունը զուգահեռաբար կաջակցի քաղաքացիների, խմբերի և հաստատությունների մրցունակության և համագործակցության կարողությունների հզորացմանը՝ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ մակարդակներում: Ուսանողներին և բուհերին նպատակային կրթաթոշակների, դրամաշնորհների և վերապատրաստման ավելի մեծ հնարավորություններ կընձեռնվեն, որոնք միտված կլինեն արտասահմանյան լավագույն համալսարանների հետ փոխանակման ծրագրերի և համագործակցության զարգացմանը: Կիրախուսվեն և աջակցություն կստանան նաև Հայաստանի և արտերկրի դպրոցների միջև փոխանակումները:

4.4. Հայաստանի միջազգային պարտավորությունները

Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարման հիմքը միջազգային իրավունքի և ՀՀ ներպետական իրավունքի փոխհարաբերության կանոնակարգումն է ՀՀ օրենսդրությամբ: ՀՀ Սահմանադրության համաձայն «Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել» (Հոդված 6):

Հետևաբար Հայաստանի պետական օրենսդրության մաս են կազմում նաև ՀՀ կողմից ստորագրված միջազգային համաձայնագրերը:

Անկախության հռչակումից (1991) հետո Հայաստանի Հանրապետությունը 1992 թվականի մարտին դարձել է ՄԱԿ-ի անդամ պետություն: ՀՀ-ն ակտիվորեն անդամակցում է նաև մի շարք միջազգային կազմակերպությունների (ԵԱՀԿ, ՅՈՒՆԵՍԿՕ և այլն): 2001թվականի հունվարի 25-ից Հայաստանը դարձել է Եվրոպայի հորհրդի լիիրավ անդամ:

ՀՀ-ն ստորագրել է մարդու իրավունքների պաշտպանության մասին մի շարք միջազգային համաձայնագրեր ու հռչակագրեր, որտեղ, ի թիվս այլոց, նշվում են նաև մարդու լեզվական ու նշակութային իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունն ու պետության պարտավորությունները:

Հայաստանի Հանրապետությունը Եվրախորհրդին իր անդամակցության արարողության պահին ստորագրեց «Մարդու իրա-

վունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի եվրոպական կոնվենցիան, և նրա թիվ 1, 4, 6, 7 արձանագրությունները:

Հայաստանը ստորագրել է նաև «Եվրախորհրդի մշակութային համաձայնագիրը», «Ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին» շրջանակային կոնվենցիան (1997թ. հուլիսի 25-ին, երբ ՀՀ-ն դեռևս Եվրոպայի Խորհրդի անդամ չէր), «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան» (2001թ. դեկտեմբերի 28), Եվրախորհրդի Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի մասին «Ընդլայնված մասնակի համաձայնագիրը» (Enlarged Partial Agreement of the ECML, 2001թ.):

Հայաստանը, լինելով Եվրախորհրդի «Ընդլայնված մասնակի համաձայնագրի» անդամ, ակտիվորեն մասնակցում է Ժամանակակից լեզուների Եվրոպական կենտրոնի (ԺԼԵԿ-ECML, Գրագ) աշխատանքներին:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

5.1. Ընդհանուր նկարագիր

Հայաստանի Հանրապետությունը էթնիկ առումով միատարր պետություն է (97,8% հայեր), որը, սակայն, չի ձգտում միալեզվությամբ:

Հայաստանի լեզվական իրավիճակը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ և «Լեզվի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն Հայաստանում պետական լեզուն հայերենն է, որի գործառնությունները սահմանվում են «Լեզվի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև մի շարք այլ օրենքներով («Կրթության մասին», «Գովազդի մասին», «Զանգվածային լրատվության մասին» և այլն), ՀՀ լեզվական քաղաքականության պետական ծրագրով և այլ օրենքներով ու ենթաօրենսդրական ակտերով (ավելի մանրամասն տես «ՀՀ լեզվակրթության օրենսդրական հիմքերը» բաժինը): Մինևույն ժամանակ Սահմանադրությունը հաստատում է նաև ազգային փոքրամասնությունների՝ իրենց լեզուն ու մշակույթը պահպանելու և զարգացնելու իրավունքները:

Ազգային օրենսդրության մաս են կազմում նաև ՀՀ կողմից ստորագրված միջազգային համաձայնագրերը, Եվրախորհրդի մշակութային համաձայնագիրը և Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան: Իրավական այս երկու հիմքերի վրա ՀՀ կառավարությունը 2002թ. փետրվարին ընդունեց «Հայաստանի Հանրապետության լեզվաքաղաքականության պետական ծրագիրը», որտեղ նշված էին պետական կամ ազգային լեզվի, փոքրամասնության լեզուների, ինչպես նաև օտար լեզուների գործածության հիմնական ոլորտներն ու գործառնությունները:

Ինչպես սահմանում է «Լեզվի մասին օրենքը», Հայաստանի Հանրապետությունում միակ պետական լեզուն հայերենն է, որը Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնության (97,8%) մայրենի լեզուն է:

Ժամանակակից գրական հայերենն ունի երկու ճյուղ՝ արևելահայերեն և արևմտահայերեն, որոնք ձևավորվել են Հայաստանի և հայ ժողովրդի քաղաքական երկփեղկման արդյունքում: Առաջինը ձևավորվել է ներկայիս Հայաստանում, երկրորդը՝ նախկին Արևմտյան Հայաստանի տարածքում և Սփյուռքում:

5.2. Պատմական ակնարկ

Հայաստանի Հանրապետությունը տեղավորված է Հայկական բարձրավանդակի վրա: Այդ տարածքը հնագույն ժամանակներից ի վեր բնակեցված է եղել հայերով, որոնց լեզուն՝ հայերենը, հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղերից մեկն է: Հայերենը հնագույն պատմություն ունեցող լեզու է և լեզվագործածության առավել կարևոր ոլորտներում՝ պաշտոնական, գիտական, գեղարվեստական, կրոնական, մշակութային և այլն, ձևավորված լեզվական ավանդույթներ ունի: Բաժանված լինելով պետականորեն, հաճախ նաև տարածքային առումով՝ հայերը միշտ ջանացել են պահպանել ու զարգացնել իրենց լեզուն՝ որպես ազգային ինքնության առավել էական գործոն ու արժեք:

Ժամանակակից հայոց լեզուն զարգացման երկար ուղի է անցել: Հայերենն աշխարհի հնագույն լեզուներից մեկն է և բազում փոփոխությունների է ենթարկվել: Հայերենի՝ մեզ հասած հնագույն տարբերակը գրաբարն է (հնագույն գրավոր տեղեկությունների լեզուն), որն էլ նոր գրական լեզվի հիմքն է դարձել:

Նոր գրական լեզուն այսօր դրսևորվում է երկու տարբերակով (արևմտահայերեն և արևելահայերեն), շատ են նաև բարբառները, որոնց կողմերը երբեմն նույնիսկ չեն հասկանում միմյանց:

Նման բարդ լեզվական իրավիճակը պայմանավորված է եղել երկրի տարածքային-տնտեսական մասնատվածությամբ: Այդ իսկ պատճառով աստիճանաբար ձևավորվել են միջտարածքային ենթաբարբառներ, ընդհանուր «քաղաքացիական» խոսակցական մի լեզու արարատյան խոսվածքի և մեկն էլ արևմտահայ խոսվածքի հիման վրա: Ավելի ուշ այս միջբարբառային խոսվածքների հիման վրա ձևավորվել են հայերեն գրական լեզվի երկու տարբերակները՝ արևմտահայերենն ու արևելահայերենը, որոնք միաժամանակ զուգահեռ գործում էին պատմական Հայաստանի տարբեր տարածքներում:

Հայաստանում լեզվի սոցիալական տարբերակումն ավելի է բարդանում ժամանակակից գրական հայոց լեզվի երկու տարբերակների գոյությամբ, գրական և խոսակցական լեզուների զգալի տարանջատվածությամբ, բազմաթիվ բարբառների գոյությամբ և գրական հայերենի վրա դրանց ազդեցությամբ:

Քաղաքներում լեզվական իրավիճակը հատկանշական է նրանով, որ սոցիալական խմբերից յուրաքանչյուրը շփվում ու հաղորդակցվում է հայերենի իր տարբերակով:

Այդուհանդերձ, վերջին մի քանի դարերի ընթացքում հայերենը, մասնավորապես արևելահայերենը, հնարավորություն չի ունեցել նորմալ զարգանալ լեզվագործածության բոլոր ոլորտներում և անխուսափելիորեն կորցրել է իր կարևորագույն գործառույթները պաշտոնական, գիտական և բարձրագույն կրթության ոլորտներում:

5.3. Լեզվական իրավիճակը խորհրդային տարիներին (մինչև 1990 թ.)

Խորհրդային տարիներին Հայաստանում, ինչպես մյուս խորհրդային հանրապետություններում, ռուսաց լեզուն մայրենի լեզվի հետ զուգահեռ համարվում էր պետական լեզու, հաճախ նաև «երկրորդ մայրենի» լեզու: Ռուսերենը հայերենին զուգահեռ, երբեմն նաև ավելի, քան հայերենը, տարածված էր պետական, կուսակցական կառույցներում, պաշտոնական, գործնական, կրթության, սպասարկման ոլորտներում, զանգվածային լրատվամիջոցներում, հաճախ նույնիսկ ներընտանեկան հարաբերություններում:

Զնայած ռուսական համայնքը Հայաստանում բավականին փոքր է, բայց ռուսերենը դեռ մնում է մեծ թվով հայերի մայրենի լեզուն, հատկապես 300 000 փախստականների և օտարերկրացիների համար: Բացի այդ, ռուսերենը դեռ մնում ԱՊՀ երկրների տարածքում, ներառյալ Հարավային Կովկասը, հաղորդակցման միակ միջոցը: Ռուսաց լեզուն ապահովում է ԶԼՄ-ների, մշակույթի, գիտության, կրթության և այլ ոլորտների հիմնական տեղեկատվական ներհոսքը: Հայաստանի և Ռուսաստանի պատմական և ժամանակակից հարաբերությունները, նրանց ռազմավարական գործունեությունը և համագործակցությունը զանազան ոլորտներում նույնպես նպաստում են ռուսերենի՝ գործառնական իմաստով օտար լեզուներից ամենակարևորը լինելուն:

Զնայած խորհրդային Հայաստանի Սահմանադրությունը հայերենը հռչակել էր պետական լեզու, սակայն առավել կարևոր, պետականորեն կարգավորվող լեզվական ոլորտներում՝ պաշտոնական և կրթական, իրականում իրավիճակը երկլեզու էր և ռուսերենն առնվազն հայերենի հետ համարժեք կիրառություն ուներ: Նկատի ունենալով այս երկու լեզուների գործառույթային անհամանասնությունը՝ ի վերջո այս իրավիճակը կարող էր ավարտվել հայերենի դուրս մղմամբ, և այդ միտումն արդեն նկատելի էր:

Հաշվի առնելով ռուսերենի կարևորությունը՝ 1999թ. Կառավարությունը ընդունեց պետական հայեցակարգ Հայաստա-

նում ռուսերենի զարգացման վերաբերյալ՝ «Ռուսաց լեզուն Հայաստանի կրթական համակարգում, մշակութային և սոցիալական կյանքում»:

5.4. Լեզվական իրավիճակը 1990-ականներից հետո

Հայաստանի պետական անկախությունից հետո, 1990 թվականից ի վեր, ոչ միայն օրենսդրական, այլ նաև գործնական քայլեր արվեցին հայոց լեզվի զարգացման և կիրառման ոլորտների ընդլայնման ուղղությամբ նպատակաուղղված քաղաքականության առումով: Վերը նշված վտանգները նկատի ունենալով անհրաժեշտ էր ապահովել հայերենի գերակայությունը պաշտոնական, տեղեկատվական, կրթության և բարձրագույն կրթության ոլորտներում, որը նախ և առաջ տեղի ունեցավ վարչական, ապա՝ 1993-ին նաև օրենսդրական միջոցներով: Ինչպես նշված է «Լեզվի մասին» ՀՀ օրենքում, Հայաստանի տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման լեզուն գրական հայերենն է, որը նաև պետական մարմինների, հաստատությունների և կազմակերպությունների, ինչպես նաև պետական պաշտոնյաների միակ պաշտոնական լեզուն է: Օրենքի պահանջներից մեկն էլ այն է, որ պաշտոնյաներն ու սպասարկման ոլորտում աշխատող ՀՀ քաղաքացիները պետք է լավ իմանան հայերեն:

5.5. Երկլեզվություն

Հայկական բարձրավանդակում տարբեր ժամանակներում հայերից բացի բնակվել են (ոչ մշտապես) այլալեզու զանազան համայնքներ՝ իբրև օտար նվաճողներ (արաբներ, թուրքեր, պարսիկներ, մոնղոլներ և այլն), խաղաղ ներգաղթողներ (վրացիներ, ասորիներ, հույներ, ռուսներ, գերմանացիներ, զնչուներ, եզդիներ, քրդեր և այլն) կամ բռնագաղթվածներ ու աքսորյալներ (ռուսալեզու մոլդկաններ, հրեաներ, ուտիներ և այլն)²:

Հայերենի և ռուսերենի ամփոփական շփումը սկսվել է 19-րդ դարից, և այս ընթացքում մեկ անգամ չէ, որ փոփոխվել է լեզուների սոցիալական կարգավիճակը, նրանց գործառնական դերը: Վերջին երկու դարերի ընթացքում Հայաստանի տարածքում ակտիվորեն

² ՀՀ առաջին զեկույցը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

գործել է նաև ռուսերենը (սկզբում Հայաստանը Ռուսական կայսրության մաս էր, այնուհետև՝ ԽՍՀՄ հանրապետություններից մեկը):

Ստեղծված պատմաքաղաքական պայմանների բերումով հայերենն ակտիվորեն փոխներգործել է ռուսերենի հետ, ինչի արդյունքում այսօր Հայաստանի (չափահաս) բնակչության մեծ մասը երկլեզու է կամ էլ որոշակի չափով տիրապետում է ռուսերենին (երկլեզվության ամենալայն իմաստով):

Հայաստանի համար բնորոշ է երկլեզվության ենթակարգված տեսակը, որին հատուկ է լեզուների կարգավիճակների անհրաժեշտ հավասարությունը. մի լեզուն՝ հայերենը, գերիշխում է մյուսի, տվյալ դեպքում՝ ռուսերենի նկատմամբ: Սա երկլեզվության առավել տարածված տեսակն է, որը բնորոշ է հանրապետության քաղաքային բնակչության և դպրոցների մեծ մասին:

Հայաստանում երկլեզվությունը (հայերեն/ռուսերեն) լայն տարածում է ունեցել գլխավորապես քաղաքներում, իսկ գյուղական վայրերում գերազանցապես միալեզվությունն էր տարածված, բնակչությունը հիմնականում շփվում ու հաղորդակցվում էր մայրենի լեզվով և տեղական բարբառով (դիզլոսիա): Հայերեն-ռուսերեն երկլեզվության տարածմանը մեծապես նպաստել է նաև այն հանգամանքը, որ Հայաստանի բնակչության շուրջ 70%-ը քաղաքաբնակ էր:

Հայաստանի լեզվական իրավիճակի համար հատկանշական է նաև այն հանգամանքը, որ գրական լեզվին զուգահեռ այստեղ գործում են նաև լեզվի ժողովրդախոսակցական տարբերակը, ինչպես նաև բազմաթիվ բարբառներ: Բնիկ երևանցիներից բացի, որոնք գրական լեզվի հիմնական կրողներն են, Երևանում ապրում են նաև բազմաթիվ ներգաղթողներ, որոնց կարելի է բաժանել երեք խմբի.

1. Հայաստանի այլ քաղաքներից ու գյուղերից տեղափոխվածներ,

2. Այլ հանրապետություններից ու երկրներից եկածներ,

3. Հայրենադարձներ (սփյուռքահայեր³):

Հայաստանի անկախացումից հետո եկավ մի շրջան, երբ հայերենի վատ իմացությունը շատ մարդկանց համար սոցիալական լուրջ խնդիր դարձավ: Գրականության, հատկապես գեղարվեստական և երեխաների գրականության տպագրումը նվազել էր: Հանրային կրթության մակարդակի անկումը իր բացասական

³ Григорян Э.А., Даниелян М.Г., Русский язык в Республике Армения, ИЦ Азбуковник, М., 2006, с.16.

ազդեցությունն ունեցավ լեզվական մշակույթի վրա. լրատվության լեզուն և պաշտոնյաների ելույթները, ինչպես նաև միջնակարգ դպրոցի շրջանավարտների լեզվի վատ իմացությունը դրա վկայությունն են: Լեզվաքաղաքականության պետական ծրագիրը նպատակ ուներ վերացնել ներկայիս բացասական երևույթները:

5.6. ՀՀ ժողովրդագրական իրավիճակը⁴

Դարերի ընթացքում Հայաստանի տարածքում բնակվել են և շարունակում են բնակվել ազգային տարբեր փոքրամասնությունների ներկայացուցիչներ, որոնք ներկայումս կազմում են Հայաստանի Հանրապետության բնակչության շուրջ 2,2 տոկոսը:

Աղյուսակ 5.1.

ՀՀ բնակչության էթնիկ կազմը՝ ըստ 2001թ. մարդահամարի

Ազգություններ	2001թ. մարդահամար	
	Բացարձակ թիվ	Տոկոս
Հայեր	3.145.354	97,8
Եզդիներ	40.620	1,3
Քրդեր	1.519	0,05
Ռուսներ	14.660	0,5
Ուկրաինացիներ	1.633	0,05
Ասորիներ	3.409	0,1
Հույներ	1.176	0,04
Այլ ազգություններ	4.640	0,1
Ընդհանուրը	3.213.011	100

Հայաստանի Հանրապետությունում հայերի հետ միասին ապրող 20-ից ավելի ազգություններից քանակով համեմատաբար նշանակալից են ասորիները, հույները, եզդիները, քրդերը, ռուսները, ինչպես նաև բելառուսները, ուկրաինացիները, վրացիները, գերմանացիները, լեհերը, հրեաները:

Ժամանակագրական հայեցակետով դիտարկելիս պետք է նշել, որ ազգային փոքրամասնությունների ներկայիս համայնք-

⁴ Այս ենթաբաժինը շարադրելիս հիմնվել ենք Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետության առաջին և 2-րդ գեկույցների նյութերի և տվյալների վրա: Երևան, 2003, Երևան, 2007:

ները Հայաստանում հաստատվել են հիմնականում 19-րդ դարի երկրորդ քառորդից սկսած⁵:

⁵ **Ռուսների** առաջին խմբերը, որ 1830-1850-ական թթ. հաստատվեցին ՀՀ տարածքում, Ռուսաստանից արքայազնի քրիստոնյա աղանդավորների խմբեր էին (մոլոկաններ, պրիզուներ և այլն), որոնք մինչև այժմ էլ բնակվում են Լեռնոնտովո, Ֆիոլետովո, Պրիվոլնոյե, Մեդովկա, Կրուգլայա Շիշկա, Նովոսելցովո, Սարատովկա, Միխայլովկա, Պետրովկա, Բլագոդարնոյե, Պուշկինո, Սեմյոնովկա, Զկալովկա, Բովաձոր, Ուրասար գյուղերում, Դիլիջան, Ճամբարակ, Ստեփանավան քաղաքներում:

Որոշ խմբեր Ռուսաստանից Հայաստանի քաղաքային բնակավայրեր (Գյումրի, Երևան և այլն) են վերաբնակեցվել խորհրդային տարիներին: Խոսում են ռուսերեն:

Եզդիների քանակը ՀՀ տարածքում 1830թ. արձանագրված է եղել 324 մարդ: Ներկայումս ՀՀ տարածքում ապրում են 40500 եզդիներ, որոնց նախնիները ներգաղթել են Իրանից, Միջագետքից, հիմնականում բնակվում են Շամիրամ, Թլիկ, Սորիկ, Հակկո, Գյալթո, Բարոժ, Բայսըզ, Ավթոնա, Դիան, Ղաբաղթափա, Ոյա-Թագա, Ամրե-Թագա, Միրաք, Սանգյառ, Շենկանի, Ալազյազ, Ջամշլու, Օրթաչյա, Դերեկ, Ավշեն, Սիփան, Ջովուհի գյուղերում: Կրոնը՝ արևապաշտություն: Խոսում են եզդիերեն, հայերեն:

Քրդերը Հայաստանի տարածքում հաստատվել են թուրքական և պարսկական տիրապետության շրջանում՝ ներգաղթելով Իրանից, Միջագետքից: Մահմեդականներ են կամ արևապաշտներ: Ներկայումս ՀՀ տարածքում առկա 1600 քրդերը հիմնականում բնակվում են Ոյա-Թագա, Ամրե-Թագա, Միրաք, Սանգյառ, Շենկանի, Ալազյազ, Ջամշլու, Օրթաչյա, Դերեկ, Ավշեն և այլ գյուղերում: Խոսում են քրդերեն, հայերեն:

Ասորիների (հին ասորեստանցիների հետնորդների) առաջին խմբերը ՀՀ տարածքում հաստատվել են 1830-ական թվերին: Որոշ խմբեր ներգաղթել են 1-ին համաշխարհային պատերազմի տարիներին: Քրիստոնյաներ են:

Ներկայումս ՀՀ տարածքում առկա 3500 ասորիները հիմնականում բնակվում են Դիմիտրով, Վերին Դվին, Նոր Արտագերս, Արզնի, գյուղերում, Երևան, Արտաշատ, Աբովյան քաղաքներում: Խոսում են ասորերեն, ռուսերեն, հայերեն:

Հույների՝ ներկայումս ՀՀ-ում բնակվող համայնքը ներգաղթել է Թուրքիայից 1763թ.: Որոշ խմբեր ներգաղթել են 1-ին համաշխարհային պատերազմի տարիներին: Քրիստոնյաներ են: Ներկայումս ՀՀ տարածքում առկա 1300 հույները հիմնականում բնակվում են Յաղդան, Կողես, Մաղան, Հանքավան գյուղերում, ինչպես նաև Ստեփանավան, Ալավերդի, Ախթալա, Շամլուղ և այլ քաղաքներում: Խոսում են հունարեն, ռուսերեն, հայերեն:

(Ավելի մանրամասն տես «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետության առաջին զեկույցի» (2003), «ՀՀ Ժողովրդագրական իրավիճակը» բաժնում):

Հայաստանի Հանրապետությունը Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան ստորագրել է 2001 թվականի դեկտեմբերի 28-ին: Հայաստանի Հանրապետության համար խարտիան ուժի մեջ է 2002 թվականի մայիսի 1-ից:

Հայաստանի Հանրապետությունը նախկին ԽՍՀՄ առաջին պետությունն է, որը վավերացրել է խարտիան:

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետությունը հատուկ պարտականություններ է ստանձնել փոքրամասնությունների 5 լեզուների նկատմամբ, որոնք են ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը և քրդերենը, մանավանդ որ դրանցից 3-ը, (ասորերենը եզդիերեն, քրդերեն) որևէ երկրում պետական լեզու չեն⁶: Սակայն Հայաստանը պաշտպանում է նաև մյուս փոքրամասնությունների լեզվական և մշակութային իրավունքները: (Փոքրամասնությունների լեզուների և կրթության մասին ավելի մանրամասն տես «Փոքրամասնությունների լեզուները կրթական համակարգում» բաժինը):

Խարտիայի փորձագետների կոմիտեն, դիտարկումների նախնական փուլում ուսումնասիրելով խարտիայի սկզբունքների իրագործումը Հայաստանում, ողջունել է Հայաստանի իշխանությունների՝ խարտիայի վերաբերյալ պարտավորությունները իրագործելու ջանքերը հակառակ տնտեսական դժվար պայմաններին՝ խրախուսելով Հայաստանի իշխանություններին՝ փոքրամասնությունների լեզուները գործածողների հետ դրական և կառուցողական մթնոլորտ ստեղծելու համար⁷:

⁶ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետության 1-ին և 2-րդ զեկույցներ: Երևան, 2003, 2007:

⁷ Եվրոպական խարտիան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ: Խարտիայի կիրառումը Հայաստանում: Խարտիայի փորձագետների կոմիտեի զեկույցը, Ստրասբուրգ, 14 հունիսի, 2006թ.:

6. ՀԱՅԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԼԵԶՈՒ

6.1. Հայերենը՝ որպես պետական լեզու

Հայաստանի Հանրապետության պետական լեզուն, ըստ ՀՀ Սահմանադրության, հայերենն է (Հոդված 12): Սահմանադրությունը հաստատում է նաև յուրաքանչյուր մարդու՝ իր ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունքը, ինչպես նաև ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունքը (Հոդված 41):

Սահմանադրության մեջ ամրագրված է նաև հայկական պետության պարտավորությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստելու հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը (Հոդված 11):

Հայերեն է խոսում է ոչ միայն Հայաստանի բնակչությունը, այլև աշխարհասփյուռ 7-8 միլիոն հայության մի մասը:

Հայոց լեզվի պաշտպանության ու զարգացման համար օրենսդրական հիմք են ծառայում ՀՀ մի շարք օրենքներ և ենթօրենսդրական ակտեր:

Ըստ Լեզվի մասին օրենքի ՀՀ պետական լեզուն՝ հայերենը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները և պետությունն աջակցում է նաև իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանն ու տարածմանը:

Օրենքը սահմանում է ՀՀ քաղաքացիների, մասնավորապես պաշտոնատար անձանց, ինչպես նաև սպասարկման առանձին ոլորտներում աշխատողների **լեզվական պարտականությունները**, ըստ որի նրանք պարտավոր են տիրապետել հայերենին և իրենց պաշտոնական խոսքում ապահովել լեզվի անաղարտությունը (Հոդված 3):

Ինչպես նշվեց, պաշտոնական, կրթական և հանրային ոլորտներում հայերենը որպես պարտադիր լեզու հաստատված է նաև մի քանի այլ օրենքներով (Գովազդի մասին օրենք, ՁԼՄ-ների մասին օրենք) և Կառավարության որոշումներով, որոնցից ամենակարևորը «Լեզվաքաղաքականության մասին պետական ծրագիրն է»:

Լեզվաքաղաքականությունը կանոնակարգելու և կառավարության օրենքների ու որոշումների իրականացումը վերահսկելու համար 1993թ. ստեղծվեց կառավարությանը կից լեզվի պետական տեսչությունը, որը ներկայումս գործում է կրթության և գիտության նախարարության համակարգում:

Պետական անկախության վերականգնումից հետո ընդլայնվեցին հայոց լեզվի օգտագործման ոլորտները, և դրա հետ կապված ծագեցին հրատապ լուծում պահանջող հարցեր:

Օրինակ, ինչպես նշված է «Լեզվի մասին» ՀՀ օրենքի կիրառման վերաբերյալ հրամանում, «անհրաժեշտ է ապահովել հայերեն ստեղծագործական մեքենագրական սարքերի արտադրությունը կամ ներկրումը, համակարգիչների համար ստեղծել հայերեն լեզվով ծրագրային ապահովում»: Մեկ այլ կարևոր խնդիր է հայերենի կանոնակարգումը, որի անհրաժեշտությունը պայմանավորված է հայերենի նոր կարգավիճակով և դրա կիրառման նոր ոլորտների բազմազանությամբ, ինչպես նաև հայերենի ուսուցման ծրագրերի իրականացումը ոչ հայախոսների համար Հայաստանում, Սփյուռքում և այլ երկրներում:

Անցումային շրջանը, որի մեջ Հայաստանը գտնվում է ներկա ժամանակում, ունի իր ազդեցությունը լեզվաքաղաքականության վրա: Ռեսուրսների սակավության պատճառով որոշ խնդիրներ դեռևս լուծված չեն: Այսպիսով, սահուն անցումը խորհրդային ժամանակահատվածին հատուկ երկլեզվյան իրավիճակից դեպի միակեզու (մեկ պետական լեզու) իրավիճակին չի ապահովվել ինչպես հարկն է: Չնայած որոշակի աշխատանք է կատարվել այս ուղղությամբ, դեռևս լուծված չեն որոշ խնդիրներ, օրինակ ոչ հայախոսների համար հայերենի արդյունավետ դասընթացներ կազմակերպելը, բարձրագույն ուսումնական համակարգի համար հայերեն դասագրքերի ապահովումը, ուսուցիչների վերապատրաստումը, համակարգիչների միասնական կողավորումը և այլն:

Հայաստանի Հանրապետության **լեզվական քաղաքականության պետական ծրագիրը** (2003թ.), անդրադառնում է հայոց լեզվին առնչվող մի շարք կարևոր հիմնախնդիրների

▪ **Գրական հայերենի կանոնակարգում**

Ծրագիրը կարևորում է արդի գրական արևելահայերենի ակադեմիական նորմատիվ քերականության ստեղծումը լեզվի զարգացման արդի փուլի համար, լեզվի անադարտության չափորոշիչների մշակումը, գրական լեզվի գործառական տարբեր ոճերի կանոնարկումը, արևմտահայերենի և գրական հայերենի երկու ճյուղերի միասնական տերմինակազմության սկզբունքների մշակումը և այլն:

▪ **Համակարգչային համացանցում հայերենի լիածավալ ներկայության ապահովում**

Առաջնահերթ խնդիր է համարվում միջազգային տեղեկատվական ցանցերում հայերենի լիարժեք ներդրումը, ինչը ենթադրում է հայերեն տեղեկատվական շտեմարանների ստեղծում, համակարգչային միջազգային ծրագրերի հայերեն թարգմանություն ու ներդրում, համակարգչային ուսումնական հայերեն ծրագրերի ստեղծում, օտար լեզուներից հայերեն և հակադարձ թարգմանիչ ծրագրերի ստեղծում, հայերեն համակարգչային հանրագիտարանների, խաղերի ու մուլտիպլիկացիայի ստեղծում և այլն:

▪ **Աջակցություն ՋԼՍ-ների լեզվական անաղարտության ապահովմանը**

Ծրագիրը նախատեսում է պետական մակարդակով մասնագիտական աջակցություն ցույց տալ լրատվամիջոցներին՝ դրանցում տեղ գտած լեզվական սխալներն արձանագրելու և ճիշտ ձևերը ներկայացնելու եղանակով, խրախուսելով գրագետ խոսքի մշակույթ ունեցող լրագրողներին և լեզվական բարձր մակարդակ ապահովող լրատվամիջոցներին, հրատարակչությունների համար հրատարակել հատուկ լեզվական տեղեկատուներ, մասնագիտական աջակցություն ցույց տալ օտարալեզու ֆիլմեր և հաղորդումներ թարգմանող հեռուստաընկերություններին և այլն:

▪ **Աջակցություն Սփյուռքի հայապահպանմանը**

Վերջին տասնամյակի ժողովրդագրական տեղաշարժերի հետևանքով սփյուռքը խիստ բազմազան ու բարդ խճանկար է ներկայացնում, ինչպես նաև էապես մեծացել է գրական արևելահայերենի գործառության տիրույթը սփյուռքի հասարակական կյանքում: Անհրաժեշտ է հայկական գաղթօջախների լեզվական միասնականության պահպանումը, քանի որ նվազում է հայախոսների թիվը նոր սերնդի շարքերում, քիչ են հայոց լեզվի դասավանդման միասնական ծրագրերը և մեթոդական մշակումները, անկատար են հայերենի ուսուցիչների վերապատրաստման համակարգերը, դպրոցական տարիքի հայ երեխաների միայն մի մասն է հաճախում սփյուռքի լիօրյա դպրոցներ, անզամ հայկական դպրոց հաճախող աշակերտության մի մասի համար հայերենը երկրորդ լեզու է:

Այս ոլորտում ծրագիրը նախատեսել է

- Սփյուռքի լեզվավիճակի համալիր վերլուծություն.
- Սփյուռքում հայերենի ուսուցման մեթոդական հիմքերի կատարելագործում.

- գրական լեզվի երկու ճյուղերի տերմինաբանության և ուղղագրության հարցերի գիտական կանոնարկում.
- սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման, սփյուռքահայ ուսանողների ընդունելության ծավալների ընդլայնում, գիտնականների ու մասնագետների երկուստեք փորձալրման ու համագործակցության խորացում.
- Հայաստանի դպրոցներում արեւմտահայերենի և սփյուռքի կրթօջախներում արեւմտահայերենի ու արևելահայերենի ուսուցման ծրագրերի և դասագրքերի մշակման ու հրատարակման աշխատանքների կազմակերպում.
- հայերենի ինքնուսույցների տարածում, հայերենի իմացությունը խրախուսող համահայկական մրցույթների կազմակերպում և այլն:

6.2. Հայերենը՝ որպես ուսումնական առարկա

Միջնակարգ կրթության պետական չափորոշչում հայոց լեզու և գրականություն ուսումնական բնագավառը ներկայացված է հետևյալ բովանդակությամբ նախաբանով. «Լեզուն մտածողության հիմնական միջոցն է: Մայրենի լեզուն սեփական մտքերը, հույզերն արտահայտելու, մարդկանց հետ շփվելու, շրջապատող աշխարհը և մարդկանց հասկանալու, բնության, հասարակության և մարդու մասին բազմաբնույթ գիտելիքներ ստանալու, գրական-գեղարվեստական արժեքներին հաղորդակից դառնալու, սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելու և զարգացնելու բացառիկ հնարավորություններ է տալիս: Գրականության և քերականության ուսուցման գլխավոր նպատակը մայրենի լեզվի գերազանց իմացության ապահովումն է: Մայրենի լեզուն կրթության լեզուն է:

Մայրենի լեզվի և գրականության ուսուցման շնորհիվ մարդը ձեռք է բերում ազգային արժանապատվության խոր գիտակցում, իր նախնիների ստեղծած մշակութային արժեքները յուրացնելու և հաջորդ սերնդին փոխանցելու կարողություն:

ՀՀ պետական լեզուն՝ հայերենը, ազգային խորհրդանիշ է, պետության ու ազգային անվտանգության երաշխիք»:

6.2.1. Հայերենը՝ որպես մայրենի լեզու

ՀՀ տարածքում գտնվող ուսումնական բոլոր հաստատություններում հայոց լեզվի ուսուցումը՝ որպես ուսումնական առարկա պարտադիր է:

«Լեզվի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է նախնական և միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում պարտադիր ընդունելության քննություն հայոց լեզվից, ինչպես նաև հայոց լեզվի պարտադիր ուսուցում բոլորի համար (Հոդված 2):

Ինչպես նշվեց, «Հանրակրթության պետական կրթակարգը», սահմանելով հանրակրթության կազմակերպման հիմնական սկզբունքները, ընդգծում է ազգայինի հենքի վրա համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդումը, կրթության իրականացումը ՀՀ պետական լեզվով:

Հանրակրթական դպրոցում հայոց լեզվի՝ որպես ուսումնական առարկայի բովանդակությունը սահմանված է հետևյալ փաստաթղթերում.

- Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ
- Հայոց լեզու և գրականություն. հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր:

Տարրական դպրոցում և միջին դպրոցի 5-6-րդ դասարաններում հայոց լեզուն և գրականությունը ուսուցանվում է միասնաբար (ինտեգրված) որպես մեկ ուսումնական առարկա՝ մայրենի, իսկ բարձր դասարաններում առանձին:

Հայոց լեզվի տեսակարար կշիռը տարրական դպրոցում գրեթե կրկնակի գերազանցում է օտար լեզուներին, միջին դպրոցում աստիճանաբար նվազելով արդեն ավագ դպրոցում դրանք հավասարվում են (տե՛ս աղյուսակը և գծապատկերները):

Ներկայումս ՀՀ ԿԳ նախարարությունում քննարկվում են ՀՀ կառավարության 2008թ. հունվարի 10-ի N 111-Ն որոշման համաձայն դպրոցում ներդրվող 3-րդ օտար լեզվի մուտքային դասարանի, ժամաքանակի, օտար լեզուների դասավանդման հաջորդականության սահմանման հետ կապված խնդիրները:

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ օտար լեզուների ժամաքանակը մինչև հիմա բաշխվել է 2 օտար լեզուների միջև (ռուսերենի և մեկ այլ օտար լեզվի, հիմնականում՝ անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն), ընդ որում՝ ռուսերենի ժամաքանակը 2-րդ օտար լեզվի համեմատությամբ ավելի է լինում:

Սակայն այս նորամուծության հետ հավանաբար նաև պետք է վերանայվի օտար լեզուներին հատկացվող ժամաքանակը, քանի


որ այն արդեն 3 օտար լեզուների միջև բաշխելու պարագայում խնդիր կառաջանա յուրաքանչյուր լեզվին հատկացվող ժամերի տղության առումով:

Ավագ դպրոցի տարբերակված հոսքի պայմաններում (այս դեպքում դա կարող է լինել հունանիտար հոսքը) հոսքային առարկաներին տրվող ժամաքանակը հիմնականում կարող է բաշխվել հայոց լեզվի և օտար լեզուների միջև:


Աղյուսակ 6.1.

Լեզվական առարկաների տեղը 12-ամյա հանրակրթական դպրոցի առարկայացանկում (Ըստ միջնակարգ կրթության պետական չափորոշչի՝ հենքային ուսումնական պլանի)


	Ընդհանուր ժամաքանակը	Հայոց լեզու, գրականություն		Օտար լեզուներ		Հոսքային առարկաներ	
		Առարկայի ժամաքանակը	%	Առարկայի ժամաքանակը	%	Առարկայի ժամաքանակը	%
Տարրական դպրոց	3004	1010	33,5%	370	12,3%		
Միջին դպրոց	5372	952	17,7%	850	15,8%		
Հիմնական դպրոց (տարրական դպրոց+ միջին դպրոց)	8376	1962	23,4%	1220	15,8 %		
Ավագ դպրոց	3468	510	14,7%	510	14,7%		
Ավագ դպրոց (տարբերակված հոսք)	3468	408	11,8%	408	11,8%	1122	32,3%




Գծապատկեր 6.1.



Գծապատկեր 6.2.



Գծապատկեր 6.3.



Գծապատկեր 6.4.

6.2.2. Հայերենը՝ որպես օտար կամ երկրորդ լեզու

Լեզվաքաղաքականության մասին պետական ծրագրի հիման վրա ստեղծվել են ոչ հայախոսների լեզվուսուցման համար անհրաժեշտ ծրագրամեթոդական հիմքեր, հրատարակվել են համապատասխան ինքնուսույցներ, հանրապետության՝ ռուսերենով ուսուցմամբ դասարաններ ունեցող դպրոցներում հայոց լեզվից դժվարություններ ունեցող աշակերտների համար կազմակերպվում են անվճար լրացուցիչ դասընթացներ:

1997 թվականից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչությունը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի շրջանակներում իրականացնում է «Հայերենը ոչ հայախոսների համար» ծրագիրը, որի նպատակն է արտերկրներից վերադարձող քաղաքացիների, փախստականների, ազգային փոքրամասնությունների և առհասարակ հայերեն սովորել ցանկացող անձանց լեզվուսուցումը:

Այս աշխատանքներում գերակա տեղ է հատկացվում արտերկրից վերադարձած դպրոցահասակ երեխաների ուսուցմանը:

Հայերենի՝ որպես օտար կամ երկրորդ լեզվի ուսուցման ոլորտում կազմակերպական և մեթոդական մի շարք խնդիրներ կան: Ինչպես նշվում է Լեզվաքաղաքականության պետական ծրագրում

- հայերեն չիմացողների կամ բավարար չիմացողների համար կա արդի պահանջները բավարարող տարբերակված ծրագրերի և ինքնուսույցների կարիք.
- Հայաստանի սոցիալ-տնտեսական կացության բարելավմանը համընթաց մոտ ապագայում օրախնդիր կարող է դառնալ հայրենիք վերադարձող քաղաքացիների և հատկապես նրանց դպրոցական զավակների՝ հայալեզու կրթությանն անցնելու աշխատանքների լայնածավալ կազմակերպումը.
- Հայերենի դասընթացների կարիք ունեն նաև Հայաստանում աշխատող արտասահմանցիները, սփյուռքահայերը: Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ են մի շարք քայլեր, այդ թվում՝
 - հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման չափորոշիչների և ծրագրերի ստեղծում՝ Եվրախորհրդի լեզվակրթության քաղաքականության սկզբունքների, ինչպես նաև «Լեզուների ուսուցման/ուսումնառության համաեվրոպական համակարգի» (CEFR) չափանիշների ու մոտեցումների հիման վրա:

- ոչ հայախոսների լեզվուսուցման համար անհրաժեշտ ծրագրամեթոդական հիմքերի ստեղծում և համապատասխան ինքնուսույցների հրատարակում:
- հանրապետության՝ ռուսերենով ուսուցմամբ դասարաններ ունեցող դպրոցներում սովորող հայոց լեզվից դժվարություններ ունեցող աշակերտների համար անվճար լրացուցիչ դասընթացների շարունակում և ընդլայնում:

6.2.3. Հայոց լեզվի գնահատման համակարգը

2007թվականից սկսած ներդրվում է պետական ավարտական և միասնական քննությունների համակարգը, որի հիմնական նպատակը հանրակրթական դպրոցի ավարտական և բուհերի ընդունելության քննությունների միատեղումն է: Առաջին պետական ավարտական և միասնական քննություններն անցկացվել են հայոց լեզվից:

2008 թվականին նոր համակարգով քննություններ կանցկացվեն նաև մաթեմատիկայից և 4 օտար լեզուներից (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն), իսկ 2009 թվականին՝ նաև մնացած քննական առարկաներից:

Հայոց լեզվի միասնական քննության թեստը 2 մաս ունի՝ տարբեր մակարդակների համար:

Ա մակարդակի թեստերը նախատեսված են հանրակրթական դպրոցի շրջանավարտների համար (մի քանի տարբերակից ճիշտ պատասխանի ընտրությամբ 50 առաջադրանք): Այս առաջադրանքները ստուգում են հենքային գիտելիքները, մի քանիսը միջին բարդություն ունեն: Առաջադրանքներում ընդգրկված են հայոց լեզվի բոլոր բաժինները (35 հարց), հայ գրականության պատմության բոլոր շրջանները (15 հարց) և կազմված են դպրոցական ծրագրի հիման վրա՝ դասագրքերի նյութի հաշվառումով:

Բ մակարդակի թեստերը (25 առաջադրանք) նույնպես բազմընտրանքային են, ավելի խոր գիտելիքներ ու կարողություններ են ենթադրում և բոլոր առաջադրանքները հայոց լեզվից են: Դրանք հիմնականում միջին բարդություն ունեն, մի քանիսը բարդ են, և բոլորն էլ դպրոցական ծրագրից են:

Միասնական թեստի Ա և Բ մակարդակները նախատեսված են հանրակրթական դպրոցի այն շրջանավարտների համար, որոնք մտադիր են ուսումը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Միասնական քննությունների և թեստերի ներդրումը դրական քայլ է հայոց լեզվի ուսուցման համակարգի բարելավման գործում, սակայն, այնուամենայնիվ, լեզվական առաջադրանքները հիմնականում քերականական գիտելիքների ստուգում են ենթադրում, գրեթե չկան հաղորդակցական կարողությունների ստուգման նպատակ ունեցողներ:

7. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

7.1. Հայերենը՝ որպես կրթության լեզու

Մայրենի լեզվի ուսուցման մասին խոսելիս պետք է հստակ տարբերակել հարցի երկու կողմը. մայրենի լեզուն՝ որպես ուսումնական առարկա և մայրենին՝ որպես կրթության լեզու:

Ներկայումս Եվրախորհրդի լեզվաքաղաքականության համատեքստում մեծ ուշադրություն է դարձվում կրթության կամ դասավանդման լեզվի կարգավիճակի հարցին (Language of Education, Language of Schooling, Language Across Curricula):

Կրթության լեզուն իմացության, ճանաչողության հիմքն է, հետևաբար բոլոր ուսումնական առարկաները յուրացվում են կրթության, դասավանդման լեզվի միջնորդությամբ: Մյուս կողմից՝ ուսումնական բոլոր առարկաներն էլ իրենց լուծման ունեն սովորողների լեզվական իրազեկությունների զարգացման գործում, քանի որ բոլորն էլ կրթության լեզուն օգտագործում են գիտելիքները յուրացնելու և ներկայացնելու համար: Ուսումնառության, ուսուցչի և գրքի հետ հաղորդակցության ընթացքում է սովորողը յուրացնում բոլոր մյուս ուսումնական առարկաները:

Մայրենի լեզուն օտար լեզուների հետ միասին նպաստում է սովորողների բազմալեզվության զարգացմանը, մասնավորապես՝ խոսքի զարգացման միջոցով շփման և հաղորդակցության մշակույթի ձևավորմանը:

Կրթության կամ դասավանդման լեզվի նպատակը պետք է լինի լեզվական իրազեկությունների ձևավորումն ու զարգացումը ամենալայն իմաստով, լեզվի գործնական կիրառությունը, ինչպես նաև հասարակության մեջ լիարժեք կենսագործունեության համար հիմքերի ստեղծումը, ինչը կարող է դիտարկվել որպես նպատակ թե՛ կոնկրետ անձնավորության, թե՛ ողջ հասարակության համար:

Ինչպես արդեն մշվեց, «Լեզվի մասին» ՀՀ օրենքը հայոց լեզուն սահմանում է որպես «ՀՀ տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզու» (Հոդված 2):

Ազգապահպանության, ազգային մշակույթի պահպանության կարևոր նախապայմաններից մեկը մայրենի լեզվով կրթությունն է, մայրենի լեզվի իմացությունը: Մինչև անկախության վերականգնումը Հայաստանում ժուսերենը գերակշիռ դեր ուներ պետական հաստատություններում, բանակում, առողջապահության և մշակույթի ոլորտներում: Կրթական հաստատությունների (նախակրթա-

րաններ, դպրոցներ, բուհեր) մեկ հինգերորդում դասավանդման լեզուն ռուսերենն էր:

Ներկայումս ռուսերենը դպրոցում դասավանդման լեզու է միայն ռուսների կամ այն այլազգիների համար, որոնք իրենք են ընտրում ռուսալեզու կրթությունը:

Հայաստանում դպրոցական կրթության համակարգը եռալեզու է, կրթության լեզուն հիմնականում հայերենն է: Դրա հիման վրա 2-րդ դասարանից սկսած պարտադիր և անխտիր դասավանդվում է 1-ին օտար լեզուն՝ ռուսերենը, ապա 3-րդ դասարանից պարտադիր դասավանդվում է նաև 2-րդ օտար լեզուն՝ անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն: ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 111-Ն որոշման և ՀՀ ԿԳ նախարարության կողմից քննարկման առաջադրված՝ օտար լեզուների դասավանդման նոր հայեցակարգի համաձայն կիրականացվի հանրակրթական դպրոցում 3-րդ օտար լեզվի ուսուցում սկսած 5-րդ կամ 7-րդ դասարանից: Սա կնպաստի սովորողների բազմալեզվության զարգացմանը, լեզուների բազմազանությանը, այսինքն՝ կհաղթահարի անգլերենի գերակշռությունը և կվերականգնի կրթական համակարգում ուսումնասիրվող օտար լեզուների խախտված համաձայնությունը (ավելի մանրամասն տե՛ս հանրակրթության բաժնի 8.4. մասը):

«Լեզվի մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև լեզվաքաղաքականության մասին պետական ծրագիրը հատուկ անդրադառնում են պետական լեզվով կրթության և դաստիարակության ապահովման հարցին, ինչը ենթադրում է.

- դաստիարակության ծրագրերում լեզվական հարստության և լեզվի միջոցով մշակութային ժառանգության փոխանցման ապահովում,

- նոր հայալեզու դասագրքերի ձեռագրերի լեզվական փորձաքննություն,

- բուհական հիմնարար դասագրքերի ու ձեռնարկների թարգմանություն,

- միջին և բարձրագույն մասնագիտական կրթության համակարգերում հայոց լեզվի ծրագրերի հարմարեցում տվյալ մասնագիտության խնդիրներին և այլն:

7.2. Այլ լեզուները՝ որպես կրթության լեզու

Հայաստանում կրթության լեզուներ կարող են լինել նաև այլ լեզուները: Լեզվի մասին օրենքը նախատեսում է, որ Հայաստանի ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթա-

կան ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով ու հովանավորությամբ, միևնույն ժամանակ հայերենի պարտադիր ուսուցմամբ (Հոդված 2):

Բացի այդ, որոշ ուսումնական հաստատություններում՝ լեզուների խորացված ուսուցմամբ դպրոցներում և որոշ բուհերում/ֆակուլտետներում առանձին առարկաներ ու մասնագիտական հատուկ դասընթացներ վարվում են օտար լեզուներով:

Միջպետական համաձայնագրերի հիման վրա Երևանում գործում են մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններ (Սլավոնական համալսարան, Հայաստանի ամերիկյան համալսարան, Ֆրանսիական համալսարան, Եվրոպական տարածաշրջանային ակադեմիա, մի շարք արտասահմանյան բուհերի տեղական մասնաճյուղեր), որտեղ դասավանդումը տեղի է ունենում օտար լեզուներով:

Ստեղծված իրավիճակն, անշուշտ, որոշ անհամապատասխանություններ ունի գործող օրենսդրական պահանջների հետ (Լեզվի մասին ՀՀ օրենքի՝ կրթության լեզվի մասին դրույթը (Հոդված 2), ուստի, կարծում ենք, պետք է ինչ-որ կերպ հարթել այս հակասությունը:

Հանրակրթական դպրոցում, առարկաների ուսումնական չափորոշիչներում և ծրագրերում պետք է հստակորեն հաշվի առնվեն դասավանդման լեզվի առանձնահատկությունները, դերը և յուրաքանչյուր առարկայի դասընթացում հատուկ ուշադրություն դարձվի տվյալ մասնագիտությանը բնորոշ բառաշերտին, տերմինաբանությանը, լեզվի գործառնական ոճերին, կառուցվածքային առանձնահատկություններին և լեզվամտածողությանը (օրինակ՝ տնտեսագիտության լեզու, մաթեմատիկայի լեզու, պատմության լեզու, արվեստի լեզու և այլն):

II. ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի կրթական համակարգը աստիճանակարգված, փոխկապակցված, ներդաշնակ ամբողջական կառույց է, որը կարգավորվում է Սահմանադրությամբ և մի շարք այլ օրենքներով ու ենթօրենսդրական ակտերով, որոնցից հիմնականը «Կրթության մասին» ՀՀ օրենքն է: Այն սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, պետական հավատարմագրման չափանիշների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի ու ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջությունն է» (Հոդված 8):

Կրթական համակարգի տարբեր աստիճաններում կրթության գործընթացը կազմակերպվում է տարբեր կրթական ծրագրերի հիման վրա: «Կրթական ծրագիրը սահմանում է որոշակի մակարդակ և ուղղվածություն ունեցող կրթության բովանդակությունը, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը» (Հոդված 10):

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կրթական ծրագրերն են՝

- 1) հանրակրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ).
- 2) մասնագիտական կրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ).

8. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հանրակրթական ծրագրերը նպատակաուղղված են անհատի բազմակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան մասնագիտական ծրագրերի ընտրության և յուրացման համար հիմքերի ստեղծմանը («Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 10):

Հանրակրթական հիմնական ծրագրերը ներառում են՝

- 1) նախադպրոցական կրթությունը.
- 2) տարրական ընդհանուր կրթությունը.
- 3) հիմնական ընդհանուր կրթությունը.

- 4) միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունը.
- 5) հատուկ ընդհանուր կրթությունը:

8.1. Նախադպրոցական կրթություն

8.1.1. Նախադպրոցական կրթության վիճակը

Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության առաջին օղակը նախադպրոցական կրթությունն է, որի հիմքի վրա են կառուցվում շարունակական կրթության համակարգի մյուս օղակները:

«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն (ընդունվել է 15.11.2005) վաղ տարիքի երեխաների կրթության համակարգում կարևորվում են մի շարք նպատակներ ու խնդիրներ, մասնավորապես՝

- նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը,
- դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը,
- մայրենի լեզվով հաղորդակցվելու տարրական կարողությունների զարգացումը.
- հայրենիքի նկատմամբ սիրո սերմանումը, ընտանիքի, ազգային ավանդույթների, մայրենի լեզվի, ազգային արժեքների նկատմամբ հարգանքի, սեփական անձի, շրջապատի և շրջակա միջավայրի նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորումն ու արմատավորումը.
- երեխայի անհատականության ձևավորումը, ստեղծագործական ունակությունների զարգացումը և այլն (Հոդված 6)

Վերջին տասնամյակների սոցիալ-քաղաքական փոփոխությունները, երկրի քաղաքական անկախացումը էապես ազդեցին նաեւ կրթական, մասնավորապես նախադպրոցական համակարգի վրա:

1996 թվականից նախադպրոցական հաստատություններն անցել են համայնքային ենթակայության, ինչի արդյունքում 1996-2000 թվականների ընթացքում փակվել էին նախադպրոցական հաստատությունների 25,8%-ը, իսկ երեխաների ընդգրկումը կրճատվել է շուրջ 36,4 %-ով (1988 թվականի համեմատությամբ, երբ գործում էին 1255 նախադպրոցական հաստատություններ՝ 165,4 հազար երեխաներով, ինչը կազմում էր այդ տարիքի երեխաների 44,2%-ը):

Գործող հաստատությունների զգալի մասը ձմռան ամիսներին դադարեցնում է գործունեությունը՝ շենքերի ջեռուցման հնարավորություն չունենալու պատճառով:

Աղյուսակ 8.1.

	1995	2001	2002	2003	2004	2005
Պետական նախադպրոցական հիմնարկներում և ընդգրկված երեխաների քանակը, (1000 երեխա)	71.3	44.6	45.4	46.1	45.5	47.8

Ինչպես տեսնում ենք, եթե 1995-2001 թվականներին կտրուկ նվազել են նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թիվը, ապա 2002թ-ից արդեն թեև դանդաղ, բայց աճ է նկատվում:

Հայաստանի Հանրապետությունում այսօր գործում է 612 համայնքային և 11 գերատեսչական նախադպրոցական հաստատություն, որոնցում ընդգրկված է 47791 երեխա: Երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում կազմել է 21,6 տոկոս, քաղաքային համայնքներում՝ 28,5 տոկոս, իսկ գյուղական համայնքներում՝ 10,5 տոկոս:

Աղյուսակ 8.2.

Նախադպրոցական համայնքային և գերատեսչական հաստատություններում մանկավարժների և երեխաների թվաքանակը

Տարեթիվը	Մանկապարտեզների թիվը	Հաճախող երեխաների թիվը	Մանկավարժների թիվը
2000	764	46379	6411
2001	712	44409	5597
2002	681	44849	5397
2003	682	46141	5333
2004	637	45470	4920
2005	623	47791	5060
2006	623	47308	4862

Կրթական բարեփոխումների ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում գործունեության առաջնային ուղղություններն են եղել օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողություն-

ների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնաընթացական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը:

Հայաստանում 2008-2015թթ. կրթության զարգացման ծրագրի նախագիծը կարևորում է նախադպրոցական հաստատություններում աշխատող կադրերի պատրաստման և վերապատրաստման խնդիրը, մինչդեռ վերապատրաստման դասընթացների ծավալները սահմանափակ են, հիմնականում ներառում են Երևան քաղաքը և մոտակա մարզերը: Այդ վերապատրաստումները, կարծում ենք, պետք է ընդգրկեն նաև լեզուների ուսուցման մասնագետներին, ինչպես նաև լեզվական կրթության խնդիրները՝ ժամանակակից միտումների տեսանկյունից:

8.1.2. Լեզուների ուսուցումը նախադպրոցական հաստատություններում

«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն այդ կրթության ոլորտի պետական քաղաքականության իրականացումն ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինները:

Նախադպրոցական հաստատություններում «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին և այդ տարիքի երեխաների զարգացման առանձնահատկություններին համապատասխան նախ ուշադրություն է դարձվում մայրենի լեզվով հաղորդակցվելու տարրական կարողությունների զարգացմանը, մայրենի լեզվի, ազգային արժեքների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորմանն ու արմատավորմանը:

Եթե խորհրդային տարիներին Հայաստանում գործում էին այլալեզու (ռուսական) մանկապարտեզներ նաև ոչ ռուս բնակչության համար, ապա այսօր նման մանկապարտեզներ գոյություն չունեն:

«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում և պետական ուսումնական ծրագրերում խոսքի զարգացման և վաղ գրաճանաչության մասին խոսելիս շեշտը դրվում է հիմնականում մայրենի լեզվի ուսուցման, կապակցված խոսքի, հաղորդակցական կարողությունների զարգացման վրա և ոչ մի խոսք չկա օտար լեզուների նախնական ուսուցման մասին: Սակայն վերջին տարիներին, ընդառաջելով ծնողների պահանջներին, հատկապես մայրաքաղաքում նախադպրոցական հաստատությունների մի մասը երեխաներին նաև օտար լեզուներ են սովորեցնում (հիմնականում՝ ռուսերեն և անգլերեն):

Երևանի թիվ 52 մանկապարտեզում հունական համայնքի նախաձեռնությամբ գործում է հունարենի ուսուցմամբ խմբակ, այստեղ ծնողների ցանկությամբ հունարեն են սովորում նաև ոչ հույն երեխաներ:

Օտար լեզուների ուսուցումը տեղի է ունենում խաղային մեթոդներով վարվող բանավոր դասերի միջոցով, սակայն չկան միասնական ծրագրեր, քիչ են մեթոդական կամ նոր ուսումնական ձեռնարկներն ու նյութերը:

Կարևորելով նախադպրոցական կրթության դերը հանրակրթության և հետագայում նաև մասնագիտական կրթության իրականացման գործում, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2008 թվականի մարտի 13-ի նիստի N10 որոշման 13-րդ կետով հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական և փորձնական ծրագրերին»:

8.1.3. Կոնկրետ դեպքերի հետազոտություն (Case Study)

Փորձելով պարզել օտար լեզուների ուսուցման երևույթի տարածվածությունը Հայաստանի նախադպրոցական հաստատություններում, «Կոնկրետ դեպքերի հետազոտություն» (Case Study) անցկացրեցինք մի խումբ մանկապարտեզներում՝ օտար լեզուների ուսուցման հարցի շուրջ: Հարցված 13 մանկապարտեզներից (12-ը՝ մարզերից, 1-ը՝ Երևանից) բոլորում էլ ծնողների ցանկությամբ շաբաթական 2-3 անգամ վարվում են օտար լեզուների բանավոր դասեր՝ յուրաքանչյուր մանկապարտեզում՝ 2-4 խմբում (խմբում միջին հաշվով 10-15 երեխա): Սովորեցնում են հիմնականում ռուսերեն և անգլերեն, 1 մանկապարտեզում՝ նաև ֆրանսերեն (աղյուսակը տե՛ս հավելվածում):

Մեթոդական և ուսումնական նյութերը

Կոնկրետ դեպքի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ռուսերենի համար հիմնականում օգտագործում են խորհրդային տարիներին կամ այսօր Ռուսաստանի Դաշնությունում ստեղծված ազգային մանկապարտեզների ռուսերենի ուսուցման ձեռնարկներն ու նյութերը: Անգլերենի համար հիմնականում օգտվում են վերջերս լույս տեսած՝ «Անգլերենի ուսուցումը մանկապարտեզում» մեթոդական ձեռնարկից, որոշ տեղերում հարմարեցնում և տեղայնացնում են առկա ռուսերենի ձեռնարկը:

Անհրաժեշտ է, որ մանկավարժների, հոգեբանների և լեզուների մասնագետների կողմից մշակվեն հատուկ այս տարիքի երեխաների համար նախատեսված ուսումնական և մեթոդական

նյութեր, ինչպես նաև կազմակերպվի համապատասխան մանկավարժների վերապատրաստում՝ օտար լեզուների ուսուցումը վաղ տարիքում ճիշտ և արդյունավետ հիմքերի վրա դնելու նպատակով:

Սակայն, նկատի ունենալով նախադպրոցական հաստատությունների ցանցի ոչ լիարժեք տարածումը և դրանցում այդ տարիքի երեխաների ընդգրկվածության ցածր տոկոսը, լեզուների ուսուցման մակարդակի բարձրացման պարագայում անգամ այդ ցանցը չի կարող բավարարել նոր դպրոց հաճախող բոլոր երեխաների հետագա լեզվակրթության համար բավարար հիմքեր ստեղծելու խնդիրը:

Հայաստանի Հանրապետությունը աջակցում է նաև փոքրամասնությունների համայնքներին՝ կազմակերպելու նախադպրոցական կրթության հիմնական մասը համապատասխան լեզուներով (ավելի մանրամասն տե՛ս «Փոքրամասնությունների լեզուները կրթական համակարգում» բաժնում):

8.2. Դպրոցական կրթություն

Կրթությունը Հայաստանում բազմադարյան և հարուստ ավանդույթներ ունի: Խորհրդային շրջանում Հայաստանի կրթական համակարգը մեծ նվաճումներ ունեցավ: Դա պայմանավորված էր ոչ միայն բուն համակարգի առավելություններով, այլև երկրի 1500 ամյա կրթական ավանդույթներով: Դեռևս հեթանոսության շրջանի մեծիաններում կենտրոնացված է եղել մեծեմական գրականությունը՝ մայրենի հայերենով: 405թ. Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց գրերի գյուտից հետո մեծ թափ է ստացել դպրության զարգացումը: Հայաստանի ողջ տարածքում բացվել են տարբեր տիպի ու աստիճանի դպրոցներ: 966 թ. հայկական վերածննդի ժամանակաշրջանում Հայաստանում բացվել է առաջին համալսարանը:

Բազմադարյան հզոր հոգևոր մշակույթն այն հիմնական գործոններից էր, որ նպաստեց խորհրդային շրջանում Հայաստանի ներդաշնակ և համակողմանի զարգացմանը: ՀՀ անկախանալուց հետո քաղաքական և սոցիալական վերածնունդների հետևանքով տուժեց նաև կրթական համակարգը, որի վրա բացասաբար ազդեցին ֆինանսական, օրենսդրական և այլ գործոններ, ինչպես նաև շրջափակման և երկրաշարժի հետևանքները:

Անկախ Հայաստանի կրթական համակարգի տասնհինգամյա պատմությունը կարելի է բաժանել 2 փուլի՝ մինչև 1998 թ. և նրանից հետո, երբ ընդունվեց «Կրթության մասին» ՀՀ օրենքը (1999): Առաջին փուլում նորացող կրթական համակարգը որոշ

ծեռքբերումներ ունեցավ. այլընտրանքային կրթության համակարգի ձևավորում, կրթության ազատականացում, միջազգային հաղորդակցության ընդլայնում, եռաստիճան դպրոց՝ հստակ սահմանազատումներով և այլն: Ցավոք, բովանդակային առումով առաջին փուլը նաև կորստաբեր էր: Մերժվեցին խորհրդային դպրոցի նույնիսկ բնագիտական առարկաների դասագրքերը և դեռ նորը չստեղծած փորձ արվեց դասագրքերը վերածել գիրք-տետրերի: Հայ գրականության ծրագրերից հանվեցին մեծանուն որոշ գրողների ստեղծագործությունները և այլն: Արդյունքում՝ աշակերտները ստիպված էին նույն առարկայի երկու դասագիրք տանել դպրոց, հինը, որը օգտագործվում էր դասի ժամանակ և գիրք-տետրը՝ ստուգողների համար:

8.2.1 Բարեփոխումները հանրակրթության ոլորտում

Հանրակրթության ոլորտում ծավալվող բարեփոխումների գործընթացը նույնպես պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի.

- առաջին փուլ՝ 1998-2002թթ.
- երկրորդ փուլ, որը սկսվել է 2002 թվականից մինչև այսօր:

Առաջին փուլում բարեփոխումները հիմնականում ուղղված էին հանրակրթության կառավարման ապակենտրոնացմանը և հաստատությունների ինքնավարության աճին, հանրակրթության կառավարման և ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրմանը, հանրակրթական հաստատությունների կազմակերպչ-իրավական կարգավիճակի վերանայմանը, ղեկավար կադրերի կառավարման որակի բարձրացմանը: Այսօր արդեն հանրապետության բոլոր դպրոցներն անցել են դպրոցական խորհուրդներով կառավարման նոր ձևին և ըստ աշակերտների թվի՝ ամբողջական գումարով ֆինանսավորման մեխանիզմին:

Այս փուլում հիմքեր են դրվել հանրակրթության բովանդակության վերափոխման համար, մասնավորապես վերանայվեցին ուսումնական ծրագրերը և համապատասխանեցվեցին ստեղծված սոցիալ-հասարակական պահանջներին:

Հանրակրթության ոլորտի ներկա բարեփոխումների գլխավոր նպատակներն են.

- հանրակրթության որակի բարձրացումը,
- հասարակության ու տնտեսության արդի պահանջներին և միջազգայնորեն ընդունված կրթական չափանիշներին

- Չայաստանի կրթության համակարգի համապատասխանության ապահովումը,
- Չայաստանի կրթական համակարգի զարգացման համապատասխանեցումը «գիտելիքների տնտեսության» պահանջներին:

Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող երկրորդ՝ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Հանրակրթության կրթակարգի, առարկայական ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի ստեղծում:

- 2004թ. կառավարությունը հաստատել է «Հանրակրթության պետական կրթակարգը» և «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը»:
- 2004 թվականի հոկտեմբերից սկսվել են առարկայական ծրագրերի մշակման աշխատանքները: 2005-2007 թվականների ընթացքում մշակվել են մաթեմատիկա, հայոց լեզու և գրականություն առարկաների, օտար լեզուների, բնագիտական, հասարակագիտական և մնացած հանրակրթական առարկաների չափորոշիչները և ուսումնական ծրագրերը:
- 2004 թ. ապրիլի 14-ին ՀՀ կառավարության որոշմամբ հիմնադրվել է Գնահատման և թեստավորման կենտրոն: 2005-2007 թվականներին ստեղծվել են հայոց լեզու, գրականություն, մաթեմատիկա, ինֆորմատիկա և օտար լեզու առարկաների ընթացիկ և ձևավորող գնահատման թեստերը: Դեկլարատիվ հայտարարվում է, որ օտար լեզուների ընթացիկ գնահատման թեստերը ստուգում են խոսքային գործունեության բոլոր տեսակները, տրամաբանական զարգացման մակարդակը, ստեղծագործական հմտությունները: Ավարտական թեստերը ստուգում են գիտելիքի կիրառման կարողությունները (տեքստը կարդալ, հասկանալ, ընկալել, ամփոփել), հաղորդակցական կարողությունները, առաջնային պահանջմունքների իրականացմանն ուղղված հմտությունները (դիմում, նամակ, հայտ գրել, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելը և այլն): Սակայն իրականում պարզ չէ որքանով են ստուգվում գրավոր և բանավոր խոսքի կարողությունները (մտքերը գրավոր շարադրելու կարողությունները), հաղորդակցական և համագործակցային ունակությունները:

- 2005-2006 թվականներին իրականացվել է դպրոցի ավարտական և բուհի ընդունելության միասնական քննությունների նոր համակարգի փորձարկում՝ հայոց լեզու, մաթեմատիկա, պատմություն, անգլերեն առարկաներից:
 - 2007 թվականին նոր համակարգով անցկացվել է առաջին քննությունը հայոց լեզու առարկայից:
 - 2007-2008 թվականներին մշակվել են 4 օտար լեզուների ընթացիկ գնահատման թեստերի մոնիթորինգները և դրանց մշակման հատկորոշիչներն ու մեթոդաբանությունը: Դրանք կիրատարակվեն 4 առանձին ժողովածուներով:
2. Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում հանրակրթության համակարգում
- ՀՀ կառավարության որոշմամբ 2004 թվականի մարտի 11-ին ստեղծվել է «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը», որի հիմնական գործունեությունը հանրակրթական դպրոցներում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրումն ու դրա շարունակականության ապահովումն է:
3. Ուսուցիչների մասնագիտական կատարելագործում
- Ընտրվել են 52 դպրոց-կենտրոններ, վերապատրաստվել են այդ կենտրոնների շուրջ 300 ուսուցիչներ: Դպրոց-կենտրոններում փորձարկվում են նոր ծրագրերը, դասագրքերը, թեստերը, իրականացվում են նորարարական աշխատանքներ, բաց դասեր և սեմինարներ:
 - 35 դասախոսներ վերապատրաստվել են ուսուցման համագործակցային մեթոդների ուղղությամբ:
 - Հայաստանի բոլոր մարզերից շուրջ 4000 ուսուցիչ վերապատրաստվել են համակարգչային գրագիտության ուղղությամբ:
 - Գնահատման նոր համակարգի ուղղությամբ վերապատրաստվել են 14000 ուսուցիչներ և դասավարդներ:
 - 2008 թվականին վերապատրաստվելու են օտար լեզուների բոլոր ուսուցիչները՝ նոր չափորոշիչների, նոր ծրագրերի և թեստերի ուղղությամբ:
4. Հանրակրթության համակարգի կառավարում և արդյունավետության բարձրացում

- 2003-2005 թվականներին վերապատրաստվել են դպրոցների շուրջ 800 տնօրեն և դպրոցական խորհրդի 2700 անդամ՝ դպրոցների ինքնուրույն ֆինանսատնտեսական գործունեությունն ապահովելու, կառավարման և տնտեսավարման նոր պահանջներին համապատասխան հմտություններ ձևավորելու նպատակով:
- Կրթության արդյունավետ կառավարման համակարգի մասին հավաստի և ամբողջական տեղեկատվություն ունենալու նպատակով ներդրվել է «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ» (ԿԿՏՀ):

8.2.2. Թվեր, փաստեր

Այսօր հանրապետությունում գործում են 1468 հանրակրթական ուսումնական հաստատություններ, որոնցից 1427 պետական և 41 ոչ պետական դպրոցներ: Դրանցից 12-ը՝ տարրական, 154-ը՝ հիմնական և 1197-ը՝ միջնակարգ դպրոցներ են, 42-ը՝ վարժարաններ են, 47-ը՝ հատուկ դպրոցներ, 16-ը՝ արհեստագործական ավագ դպրոցներ (տես աղյուսակ 1):

Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է 477 857 աշակերտ, որոնցից 471 316-ը՝ պետական, իսկ 6541-ը՝ ոչ պետական սեկտորում: Թեև անցան, սակայն տարեցտարի ավելանում է ոչ պետական դպրոցների աշակերտների թիվը (տես աղյուսակ 2): Աշակերտության թիվն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի ունի հետևյալ պատկերը (տես աղյուսակ 3):

Աղյուսակ 8.3.

Հանրակրթական ուսումնական հաստատությունների ընդհանուր թիվը Հայաստանում ըստ տիպերի

Սարգ	Դպրոցների տիպերը														
	Տարրական դպրոցներ		Հիմնական դպրոցներ		Միջնակարգ ընդհանուր դպրոցներ		Վարժարաններ		Հատուկ դպրոցներ		Արհեստագործական ավագ դպրոցներ		Ընդամենը		
	ցուցիչ	շվ	ցուցիչ	շվ	ցուցիչ	շվ	ցուցիչ	շվ	ցուցիչ	շվ	ցուցիչ	շվ	ցուցիչ	շվ	նյութումը
Երևան	1	0	1	1	193	18	11	7	22	1	5	0	233	27	260
Արագածոտն	0	0	30	0	92	0	1	0	2	0	2	0	127	0	127
Արարատ	0	0	4	0	109	0	1	0	0	0	0	0	114	0	114
Արմավիր	0	0	6	0	110	1	2	0	4	0	1	0	123	1	124
Գեղարքունիք	1	0	4	0	123	1	1	0	0	0	0	0	129	1	130
Լոռի	1	0	37	0	124	0	4	0	3	0	0	0	169	0	169
Կոտայք	0	0	6	0	95	2	0	0	3	0	3	0	107	2	109
Շիրակ	4	0	16	0	135	3	8	1	6	0	3	0	172	4	176
Սյունիք	2	0	29	0	86	0	2	0	4	1	0	0	123	1	124
Վայոց Ձոր	2	0	9	0	38	0	2	0	0	0	0	0	51	0	51
Տավուշ	1	0	9	2	64	3	2	0	1	0	2	0	79	5	84
Ընդամենը	12	0	151	3	1,169	28	34	8	45	2	16	0	1,427	41	1,468

Աղյուսակ 8.4.**Աշակերտների թվաքանակը պետական և ոչ պետական դպրոցներում 2003-2006 թվականներին**

Մարզ	2003		2004		2005		2006	
	պետական	ոչ պետական	պետական	ոչ պետական	պետական	ոչ պետական	պետական	ոչ պետական
Երևան	146,076	2,079	143,546	2,765	139,539	2,780	135,283	3,527
Արագածոտն	27,470	0	26,905	0	25,585	0	25,356	0
Արարատ	47,951	0	46,604	0	44,651	0	43,831	0
Արմավիր	49,495	62	47,944	93	46,537	93	45,025	131
Գեղարքունիք	46,006	0	43,961	0	42,265	117	41,539	130
Լոռի	46,045	22	43,183	43	44,054	0	42,614	0
Կոտայք	47,271	115	42,155	179	42,874	636	41,398	570
Շիրակ	53,093	222	49,138	356	48,598	270	46,909	677
Սյունիք	24,145	0	22,907	0	21,831	0	20,896	230
Վայոց Ձոր	11,131	0	10,754	0	10,208	0	9,781	0
Տավուշ	21,896	0	21,353	0	19,205	1,306	18,684	1,276
Ընդամենը	520,579	2,500	498,450	3,436	485,347	5,202	471,316	6,541

Աղյուսակ 8.5.

Աշակերտների թիվը Հայաստանում ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Մարզ	Դպրոցների տիպերը														
	Տարրական դպրոցներ		Հիմնական դպրոցներ		Միջնակարգ ընդհանուր դպրոցներ		Վարժարաններ		Հատուկ դպրոցներ		Արհեստագործական ավագ դպրոցներ		Ընդամենը		
	դրոհրտտփի	դրոհրտտփի ՀՆ	դրոհրտտփի	դրոհրտտփի ՀՆ	դրոհրտտփի	դրոհրտտփի ՀՆ	դրոհրտտփի	դրոհրտտփի ՀՆ	դրոհրտտփի	դրոհրտտփի ՀՆ	դրոհրտտփի	դրոհրտտփի ՀՆ	դրոհրտտփի	դրոհրտտփի ՀՆ	ընդամենը
Երևան	1,278	0	1,174	0	123,115	2,426	4,824	955	3,862	146	1,030	0	135,283	3,527	138,810
Արագածոտն	0	0	1,588	0	23,357	0	112	0	196	0	103	0	25,356	0	25,356
Արարատ	0	0	219	0	43,265	0	347	0	0	0	0	0	43,831	0	43,831
Արմավիր	0	0	587	0	42,850	131	727	0	797	0	64	0	45,025	131	45,156
Գեղարքունիք	496	0	682	0	39,950	130	411	0	0	0	0	0	41,539	130	41,669
Լոռի	814	0	2,212	0	38,722	0	427	0	439	0	0	0	42,614	0	42,614
Կոտայք	0	0	418	0	40,391	570	0	0	274	0	315	0	41,398	570	41,968
Շիրակ	30	0	772	0	42,105	632	2,205	45	1,315	0	482	0	46,909	677	47,586
Սյունիք	27	0	1,211	0	17,401	0	671	0	1,586	230	0	0	20,896	230	21,126
Վայոց Ձոր	28	0	373	0	9,098	0	282	0	0	0	0	0	9,781	0	9,781
Տավուշ	51	0	663	579	17,536	697	177	0	157	0	100	0	18,684	1,276	19,960
Ընդամենը	2,724	0	9,899	579	437,790	4,586	10,183	1,000	8,626	376	2,094	0	471,316	6,541	477,857

8.2.3 Լեզվական քաղաքականությունը հանրակրթությունում

Հայաստանի հանրապետությունում օտար լեզուն միջնակարգ և բարձրագույն կրթության պարտադիր բաղադրիչ է: Մշակված և կառավարությանն է ներկայացվել լեզվաքաղաքականության հայեցակարգը, ըստ որի առաջարկվում է դպրոցներում դասավանդել 3 օտար լեզու: 1-ին օտար լեզուն՝ ռուսերենը, սկսել առաջին դասարանի 1-ին կիսամյակից, 2-րդ օտար լեզվի ուսուցումը (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) սկսել 2-րդ դասարանի 2-րդ կիսամյակից՝ շաբաթական 2 ժամով, իսկ 3-րդ օտար լեզվի ուսուցումը սկսել 5-րդ դասարանի 1-ին կիսամյակից: Միջին դպրոցում առաջարկվում է օտար լեզվի ժամաքանակը հասցնել 6-7 ժամի: Հայեցակարգի այս մասը դեռևս բուն քննարկումների առարկա է մնում, որովհետև մասնագետների մի մասը իրավամբ գտնում է, որ 1-ին դասարանի 1-ին կիսամյակից օտար լեզուն սկսելը, երբ սովորողը դեռ նոր է սկսում սովորել մայրենի լեզվի տառերը, այնքան էլ նպատակահարմար չէ: Հայեցակարգում հաշվի են առնված նաև ստուգման և վերահսկման մեխանիզմները: Հայեցակարգը, որպես առանձին փաստաթուղթ, կառավարության կողմից դեռևս չի ընդունվել: Սակայն, ինչպես ասվեց, ՀՀ կառավարությունը 2008 թվականի հունվարի 10-ին ընդունել է N111 որոշումը, որով վերանայվել է միջնակարգ կրթության պետական չափորոշիչը և փոփոխություն է մտցվել հանրակրթական դպրոցի հենքային ուսումնական պլանի մեջ: Ըստ այդ որոշման օտար լեզուներ բնագավառը ներկայացվում է երեք օտար լեզուներով, որոնցից մեկը ռուսերենն է, իսկ օտար լեզուների ընտրության կարգը և ըստ դասարանների դրանց դասավանդման հերթականությունը սահմանվում է օրինակելի ուսումնական պլանով՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից:

8.2.4 Օտար լեզուների դասավանդումը դպրոցում

- Ուսումնական պլանները Հայաստանի Հանրապետության դպրոցներում սկզբունքորեն միմյանցից չեն տարբերվում: Դրանք ունեն 3 բաղադրիչ՝ պետական պարտադիր, դպրոցական պարտադիր և նախասիրական: Որոշ դպրոցներ (դպրոցական յուրաքանչյուր դասարանում շաբաթական 2-4 ժամ) դպրոցական պարտադիր և նախասիրական բաղադրիչները տրամադրում են օտար լեզուներին: Դրանք հիմնականում օտար լեզուների խորացված ուսուցմամբ, երկլեզու և եռլեզու ուսուցմամբ դպրոցներն են: Մինչ ՀՀ

կառավարության կողմից վերոնշյալ որոշման ընդունումը 3-րդ օտար լեզվի ուսուցումը իրականացվում էր նախասիրական բաղադրիչի հաշվին՝ որպես վճարովի ծառայություն և ոչ բոլոր երեխաների համար էր մատչելի: Այնուամենայնիվ, մինչ այժմ նախասիրական պարապմունքների ժամերը երեխաների 25%-ը տրամադրել է օտար լեզվին:

- Չափորոշիչները: 2004 թ-ին մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը», որը սահմանում է կրթության բովանդակության հետևյալ բաղադրիչները.

1. գիտելիքների համակարգ,
2. կարողություններ և հմտություններ՝
 - ճանաչողական, տրամաբանական,
 - հաղորդակցական,
 - համագործակցային,
 - ստեղծագործական,
 - ինքնուրույն գործունեության,

3. արժեքային համակարգ:

Միջնակարգ կրթության պետական չափորոշիչում լեզուները ներկայացված են երկու առանձին ուսումնական բնագավառներով՝ հայոց լեզու, գրականություն և օտար լեզուներ: Այստեղ օտար լեզուներ ուսումնական բնագավառը բնորոշվում է հետևյալ կերպ.

«Օտար լեզուն ոչ հայախոս անձանց հետ շփվելու հիմնական, այլ երկրների ու ժողովուրդների քաղաքակրթությանն ու մշակույթին հաղորդակցվելու, դրանց լավագույն արժեքները յուրացնելու և հայերենով արտահայտելու, ինչպես նաև հայալեզու մշակույթն այլ ժողովուրդներին մատչելի դարձնելու լրացուցիչ միջոց է:

Օտար լեզուների իմացությունը նպաստում է անձի հաղորդակցվելու ունակությունների զարգացմանը, միջմշակութային փոխըմբռնմանը, այլ մշակույթների արժեքների ընկալմանն ու զնահատմանը:

Օտար լեզվի ուսուցման նպատակն է ընդլայնել սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները: Ուսումնական այս բնագավառը նպաստում է նաև բնության և ժամանակակից աշխարհի մասին առավել ամբողջական գիտելիքներ ստանալուն, գեղագիտական, բարոյական, սոցիալական, համամարդկային և ազգային արժեքների գիտակցմանը, պահպանմանը և փոխանցմանը»:

Միջնակարգ կրթության պետական չափորոշչի հիման վրա 2007 թվականին ստեղծվեցին օտար լեզուների համար հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր: Օտար լեզուների չափորոշիչները համապատասխանում են Եվրախորհրդի լեզուների իմացության/իրագրելիության համաեվրոպական համակարգին (CEFR) և ներկայացված են ըստ խոսքային գործունեության տեսակների: Հիմնական դասընթացը, թեև ոչ լայն ծավալով, բայց համեմատաբար ինքնուրույն հաղորդակցվելու հնարավորություն է տալիս: Դպրոցական ծրագրով նախատեսված է 12-րդ դասարանն ավարտելիս ձեռք բերել լեզվի իմացության B1 մակարդակ: Հոսքային (լեզվաբանական) դասարանների համար նախատեսված դասընթացն ապահովում է լեզվի իմացության ավելի բարձր մակարդակ, և ավելի անկախ փոխգործունեության հնարավորություն: Այդ դասընթացը խոսքային գործունեության ակտիվ/վերարտադրողական տեսակներում (խոսել և գրել) նախատեսում է կարողությունների և հմտությունների B1 մակարդակ, իսկ ընկալողական տեսակներում (ունկնդրել և կարդալ)՝ B2 մակարդակ:


- Համաձայն այդ չափորոշիչների, վերանայվել և մշակվել են օտար լեզուների առարկայական ծրագրերն ու դասագրքերը: Մշակվել են դպրոցի ավարտական և բուհի ընդունելության՝ օտար լեզվի միասնական քննության առաջադրանքները: Մշակվում են քայլեր երկպոռֆիլ և բազմապոռֆիլ մանկավարժական կադրեր պատրաստելու համար: Հանրապետությունում հիմնականում լուծված է դասագրքերի հարցը: 1997թ.-ից գործող դասագրքերի վարձակալման համակարգը լուծեց դասագրքերով ապահովվածության խնդիրը: Դասագրքերը սովորողներին հատկացվում են մատչելի վարձավճարով, որից գոյացած գումարներով ապահովվում է դասագրքերի հետագա տպագրությունը: Տարրական դպրոցի դասագրքերը պետության կողմից տրվում են անվճար, բացի օտար լեզվի և երգ-երաժշտության դասագրքերից: Հաշվի առնելով օտար լեզվի նկատմամբ տարեցտարի աճող հետաքրքրությունն ու պահանջարկը՝ կարծում ենք, որ կառավարությունը պետք է վերանայի իր որոշումը և միջոցներ գտնի տարրական դպրոցի օտար լեզվի դասագրքերը նույնպես անվճար տրամադրելու համար: Դասագրքերը հիմնականում համապատասխանում են առարկայական ծրագրերին: Սակայն ոչ բոլոր ուսուցիչներն են գոհ դասագրքերի որակից: Ուսուցիչների շրջանում կատարված հարցումները ցույց տվեցին, որ դրա հիմնական պատճառն այն է, որ դասագրքերում գետեղված է ավելի շատ քերականական, տեսական նյութ, իսկ

հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, տրամաբանության զարգացման և այլ կարողություններ և հմտություններ ձևավորող վարժությունները, առաջադրանքները քիչ են: Ոչ բոլոր տեքստերն են նպաստում բազմաձևակույթ անձի ձևավորմանը: Բացի դրանից, դասագրքերի համար մրցույթը հայտարարվում է վերջնաժամկետից ընդամենը 3 ամիս առաջ: Պարզ է, որ այդ ժամկետում որակյալ դասագիրք գրելն անհնար է: Միաժամանակ պետք է ասել, որ դասագրքերի վերանայման գործընթացը հնարավորություն տվեց ունենալու օտար լեզուների սեփական դասագրքեր և օտար լեզուների լավագույն մասնագետներից ստեղծված դասագրքաստեղծ խմբեր:

- Հայաստանում արգելված չէ այլընտրանքային դասագրքերի օգտագործումը, սակայն մինչ այսօր օտար լեզվի ուսուցումն իրականացվում է 1 դասագրքով (բացի ռուսաց լեզվից): Օտար լեզուների դասավանդումը հանրակրթական դպրոցում իրականացվում է երեք փուլով.

- 1-ին փուլ – տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ)
- 2-րդ փուլ- միջին դպրոց (5-9-րդ դասարաններ)
- 3-րդ փուլ - ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ)

**Աշակերտների տոկոսն ըստ կրթական մակարդակի
ՀՀ աշակերտների թվից**



Փծապատկեր 8.1.

Տարրական դպրոցում ներկայումս օտար լեզուն դասավանդվում է 2-րդ դասարանից շաբաթական երկու ժամով (ռուսերեն), 3-րդ դասարանում՝ 4 ժամով (2 ժամ ռուսերեն, 2 ժամ անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն) և 4-րդ դասարանում՝ շաբաթական 6 ժամով (4 ժամ ռուսերեն, 2 ժամ անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն): Նախատեսվում է, որ այն պետք է ապահովի A1 մակարդակ:

Միջին դպրոցում օտար լեզուները դասավանդվում են 5-9 դասարաններում:

5-րդ դասարանում շաբաթական 6 ժամով (4 ժամը՝ ռուսերեն, 2-ը՝ անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն), 6-9-րդ դասարաններում, օտար լեզուն դասավանդվում է շաբաթական 5 ժամով (3 ժամը՝ ռուսերեն, 2-ը՝ անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն): Նախատեսվում է, որ այն պետք է ապահովի A2-ից B1 մակարդակ և կախված է դպրոցի և դպրոցականների նախասիրություններից ու պատրաստվածությունից:

Ավագ դպրոցում 10-11 դասարաններում օտար լեզուն դասավանդվում է շաբաթական 5 ժամով (3 ժամը՝ ռուսերեն, 2-ը՝ անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն): Այն կոչված է ապահովել B1 մակարդակ: Ավագ դպրոցի հոսքային դասարաններում օտար լեզուների դասընթացը պետք է ապահովի B1-ից B2 մակարդակ:

Ուսումնառության 3 փուլերում էլ օտար լեզուների իմացության, սովորողների կարողությունների, հմտությունների համար սահմանվում են եռամսկարդակ (նվազագույն, միջին, բարձր) պահանջներ:

Մշակվել է առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ստեղծման հայեցակարգը, ըստ որի ավագ դպրոցը պետք է իրականացնի ինչպես ընդհանուր, այնպես էլ տարբերակված հոսքերի և լրացուցիչ հոսքերի ծրագրեր: Երաշխավորված հոսքերի թվում է լեզվաբանական հոսքը: Յուրաքանչյուր դպրոց, ըստ իր հնարավորությունների և պայմանների, կարող է ընտրել երաշխավորված հոսքերից մեկը կամ մի քանիսը: Բոլոր հոսքերում օտար լեզուն ուսումնական պլանի բաղկացուցիչ մասն է: Ավագ դպրոցի հոսքային դասարանների համար նախատեսված ծրագրերը և դասագրքերը առայժմ պատրաստ չեն, այնպես որ դժվար է գնահատել, թե որքանով են իրատեսական նշված մակարդակները: Տասներկուամյա դպրոցի համար ստեղծված դասագրքերը կօգտագործվեն ավագ դպրոցի ընդհանուր հոսքով դասարաններում:

Նպատակ ունենալով կրթության որակի բարելավման հրամայականը՝ ՀՀ կառավարությունը 2008 թվականի մարտի 27-ի

նիստի N12 որոշման 15-րդ կետով հավանություն է տվել «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական և փորձնական ծրագրերին», ըստ որոնց Հայաստանում առաջիկա տարիներին կստեղծվի որակապես էականորեն տարբեր առանձին գործող, հոսքային-մասնագիտացված ավագ դպրոցների ցանց:

Այսօր հրատապ է կրթության որակի ապահովման հիմնախնդիրը: «Բավարար ե՞ն Ձեր դպրոցական գիտելիքները բուհ ընդունվելու համար» հարցին դրական են պատասխանել հարցվողների մոտ 11.9 տոկոսը⁸: Հարցումները ցույց են տալիս, որ միջնակարգ դպրոցի շրջանավարտների 47 տոկոսն օգտվում է «ստվերային դպրոցից» կրկնուսույցի ծառայություններից: Այսինքն, դպրոցում որոշ առարկաների, այդ թվում նաև օտար լեզվի դասավանդման մակարդակը թույլ չի տալիս բուհ ընդունվել աշակերտներին: Այս երևույթը հատկապես ցայտուն է ավագ դպրոցում, որտեղ անհամապատասխանություն է առաջացել առաջարկի և պահանջարկի միջև: Կրկնուսույցների առկայությունը անհավասար պայմաններ է ստեղծում գյուղական և քաղաքային դպրոցների ֆինանսական հնարավորություններ ունեցող և չունեցող շրջանավարտների միջև: Ըստ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի 2004 թվականի հաշվարկների՝ գյուղական շրջանների դպրոցականները քաղաքի դպրոցականների հետ համեմատած, 2.5 անգամ ավելի պակաս են ընդգրկված «ռեպետիտորական դպրոցում»:

Միջին դպրոցն ավարտողները և դպրոցի շրջանավարտները քննություն են տալիս օտար լեզվից, և քանի որ դպրոցն է անցկացնում քննությունը, դրանց արդյունքը բավարար չափով օբյեկտիվ չէ՝ պարզելու համար, թե ինչ չափով է միջին և ավագ դպրոցը լուծում իր առջև դրված խնդիրը: Այնուամենայնիվ, 2003-2004 ուստարում քննություն հանձնած 54.422 8-րդ դասարանցիներից օտար լեզվից դրական գնահատական են ստացել 53485-ը և 43.994 10-րդ դասարանցիներից՝ 43.255-ը: Օտար լեզուների դասավանդման որակի վրա ազդում է նաև այն հանգամանքը, որ ավագ դպրոցում՝ 8-10 դասարանները չեն կիսվում, հետևաբար 25-30 աշակերտի հետ պարապելը անմիջականորեն ազդում է որակի վրա: Բացի դրանից, ուսուցիչների մեծ մասը գտնում է, որ օտար լեզվի քննությունը պետք է անցկացնել բանավոր, գրավոր քննությունը խանգարում է առարկայի նպատակների իրականացմանը:

⁸ OXFAM միջազգային հասարակական կազմակերպության անցկացրած հետազոտության արդյունքներից:

Այսօր հանրապետության բոլոր դպրոցներում հայոց լեզվից բացի դասավանդվում է 2, նույնիսկ 3 օտար լեզու: Չնայած այն հանգամանքին, որ հանրապետությունում մասամբ իջել է ռուսաց լեզվի պահանջարկը, այնուամենայնիվ այն դեռևս շարունակում է պահպանել առաջին օտար լեզվի կարգավիճակը և դասավանդվում է բոլոր դպրոցներում՝ երկրորդ դասարանից մինչև վերջին դասարանը՝ Հայաստանում ստեղծված դասագրքերով: Օգտագործվում են նաև այլընտրանքային դասագրքեր:


1993 թվականին, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի համաձայն, փակվեցին հանրապետությունում գործող բոլոր ռուսական դպրոցները: Սակայն հետագայում, հաշվի առնելով ազգային փոքրամասնությունների, ներգաղթող քաղաքացիների պահանջները, 45 դպրոցում (15-ը՝ Երևանում, 30-ը՝ մարզերում) ստեղծվեցին ռուսերենով ուսուցմամբ դասարաններ: Այս դասարաններում, ըստ ՀՀ պետական հանրակրթական և հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընդունելության կարգի (25 օգոստոս, 2003 թ.) իրավունք ունեն սովորելու ազգությամբ ռուս, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների երեխաները՝ ըստ ցանկության, և ներգաղթած հայ երեխաները (միայն մեկ տարի, հաջորդ տարի հայկական դասարան տեղափոխվելու պայմանով): Հայ երեխաների համար այս սահմանափակումը դժգոհության ալիք բարձրացրեց, քանի որ ոչ բոլոր ներգաղթած երեխաներն էին կարողանում մեկ տարվա ընթացքում լիարժեք տիրապետել հայերենին: ԿԳ նախարարությունը ստիպված էր նման երեխաների համար զիջումների գնալ, իսկ 8-րդ դասարանից սկսած բոլոր երեխաներին թույլատրեց ավարտել դպրոցը ռուսական դասարանում: 1999 թվականին, ՀՀ կառավարության ընդունած՝ «Ռուսաց լեզուն կրթության համակարգում և ՀՀ հասարակական-մշակութային կյանքում» հայեցակարգի համաձայն հանրապետության 62 դպրոցներում իրականացվում է ռուսաց լեզվի խորացված ուսուցում: 2000թ. նախարարի հրամանով ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որը այս դպրոցների բոլոր դասարանների համար մշակել և հրատարակել է առանձին դասագրքեր, քանի որ դրանցում ռուսերենի ուսուցումը սկսվում է առաջին դասարանից՝ շաբաթական 4 ժամով, իսկ 2-րդ դասարանից՝ շաբաթական 6 ժամով:

Ընդհանուր առմամբ, հանրապետության 1468 հանրակրթական դպրոցներից անգլերեն է դասավանդվում 1078 դպրոցում, ֆրանսերեն՝ 254 և գերմաներեն՝ 244 դպրոցներում: Անհրաժեշտ է նշել, որ անգլերենի պահանջարկը տարեցտարի ավելանում է՝ ի հաշիվ ֆրանսերենի և գերմաներենի: Անգլերեն-գերմաներեն է դա-

սավանդվում 71 դպրոցում (30651 աշակերտ), անգլերեն-ֆրանսերեն՝ 139 դպրոցում (67672 աշակերտ), անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն՝ 19 դպրոցում (8010 աշակերտ): Այսպիսով, անգլերեն է ուսումնասիրում 371.333 աշակերտ, այսինքն՝ աշակերտության 67,8 տոկոսը, ֆրանսերեն՝ 97979 աշակերտ (18 տոկոս), գերմաներեն՝ 77999 աշակերտ (14,20 տոկոս):

Ստորև տրվում է աշակերտության թիվը (տոկոսային հարաբերությամբ) ըստ ուսումնասիրվող լեզուների

- 1-ին օտար լեզու (ռուսերեն 100%)
- 2-րդ օտար լեզու (անգլերեն կամ գերմաներեն կամ ֆրանսերեն)



Գծապատկեր 8.2.

Հանրապետությունում անգլերեն է դասավանդում 1767 ուսուցիչ, գերմաներեն՝ 293, ֆրանսերեն՝ 424: Չնայած այն համաճանաչին, որ ամեն տարի բուհերի տասնյակ շրջանավարտներ ստանում են օտար լեզվի ուսուցչի մասնագիտություն, այնուամենայնիվ որոշ մարզերում դեռևս օտար լեզուների ուսուցիչների թափուր տեղեր կան: Այսպես օրինակ, 2003 թ-ին ուսուցչի բացակայության պատճառով օտար լեզու չի դասավանդվել 107 դպրոցում, 2004 թ-ին՝ 14 դպրոցում, 2005 թ-ին՝ 67 դպրոցում: 2006 թ-ի օգոստոսի դրությամբ 5 ֆրանսերենի, 19 անգլերենի, 1 գերմաներենի ուսուցիչների թափուր տեղեր են եղել հանրապետության 6

մարզերում: Չնայած դրան, որ հանրապետության հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի դպրոցներ գործողված մանկավարժների համար պետությունը սահմանել է որոշ արտոնություններ (գուլքի տեղափոխման գումար, ճանապարհածախսի փոխհատուցում, բնակարանի վարձ, կեցության և այլ ծախսեր), այնուամենայնիվ, հիմնախնդիրը դեռես ամբողջովին չի լուծվել: Կարծում ենք, դրա լուծման ուղիներից մեկը նպատակային տեղերի հատկացումն է ըստ մարզերի և պահանջարկի, որը սկսվել է 2004 թ-ից:

8.2.5. Երկլեզու և եռլեզու ուսուցմամբ դպրոցներ

Հանրապետության 13 դպրոցում զուգահեռ ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի հետ միասին 9 դպրոցում դասավանդվում է պարսկերեն, 1 դպրոցում՝ լեհերեն, 9 դպրոցում՝ իսպաներեն:

Երևանի 4 դպրոցների տարրական դասարաններում կազմակերպվել է երկլեզվյան ուսուցում, որի գաղափարակիրը «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոնն է: Այդ դասարաններում ուսուցումը կազմակերպվում է հայերեն և ռուսերեն լեզուներով զուգահեռ:

Այսպիսով, Հայաստանում օտար լեզու ուսումնասիրող դպրոցների տիպերը հետևյալ տեսքն ունեն.

- ռուսաց լեզվով ուսուցմամբ դասարաններ ունեցող դպրոցներ,
- ռուսերենի, անգլերենի, գերմաներենի, ֆրանսերենի խորացված ուսուցմամբ դպրոցներ, որոնց դասագրքերի մրցույթը հայտարարվելու է 2008 թվականին,
- երկլեզվյան դասարաններ ունեցող դպրոցներ,
- երեք օտար լեզվով ուսուցմամբ դպրոցներ,
- հայկական դպրոցներ, որտեղ 2-րդ դասարանից ռուսերեն, իսկ 4-րդ դասարանից անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն են դասավանդում,
- ռուսական դպրոցներ (եթնիկ ռուսների համար):

8.2.6. Գնահատման գործընթաց

- Այսօր դպրոցը դեռևս շարունակում է աշակերտների աշխատանքը գնահատել միայն թվանշաններով: Հանրակրթական դպրոցում չնայած կիրառվում է հինգ բալանոց

համակարգ, սակայն փաստացիորեն այն 4 բալանոց է (բացի ավարտական քննությունից):

- 2005 թվականի ապրիլին Կառավարությունը հաստատել է «Սովորողների գնահատման հայեցակարգը», մշակվում է ինչպես բոլոր առարկաների, այնպես էլ օտար լեզվի ընթացիկ գնահատման մեթոդաբանությունը: Նոր հայեցակարգի համաձայն 2008-2009 ուս. տարվա սեպտեմբերի 1-ից Հայաստանի դպրոցները կանցնեն ընթացիկ առաջադիմության գնահատման 10 միավորանոց սանդղակին: Այդ համակարգը բաղկացած է 2 իրար լրացնող ձևերից՝ ուսուցանող գնահատումից և սովորողների առաջադիմության միավորային կամ ամփոփիչ գնահատումից: Գործածության են երաշխավորվում ստուգման ու հայտորոշման հետևյալ տեսակները՝ բանավոր հարցում, թեմատիկ գրավոր աշխատանք, ինքնուրույն աշխատանք տանը և դպրոցում, գործնական աշխատանք, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, քննարկումներ և կիսամյակային ամփոփիչ աշխատանք: Ընթացիկ գնահատումը ստուգում է աշակերտի՝ փաստերի և գիտելիքի իմացությունը, դրանք կիրառելու ունակությունը, տրամաբանական եզրահանգման գալու, վերլուծելու, համեմատելու, համադրելու, ճանաչողական, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանք կատարելու կարողություններն ու հմտությունները:
- Մշակված է և 10 դպրոցում փորձարկված է տարրական դասարանների համար եվրոպական լեզվական թղթապանակը: Մեր կարծիքով ժամանակն է այն ներդնել ոչ միայն տարրական, այլև միջին և ավագ դպրոցներում նույնպես:

8.3. Ոչ պետական դպրոցները Հայաստանում

Այսօր Հայաստանում գործում են 41 ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ, որտեղ սովորում է հանրապետության աշակերտների ընդհանուր թվի 1%-ը՝ 6541 աշակերտ և աշխատում են 998-ից ավելի ուսուցիչներ: Ոչ պետական դպրոցները դեռևս դանդաղ են կայանում, քանի որ հասարակության մի մասը չի ընդունում և չի վստահում վճարովի ուսուցմանը, մյուս մասն էլ հնարավորություն չունի օգտվելու դրանից: Բացակայում է ոչ պետական դպրոցների գործունեությունը կարգավորող իրավական դաշտը, մշակված չէ դրանց զարգացման պետական քաղաքականությունը: Ոչ պետական դպրոցները պետական հատկացումներ չեն ստանում, ավելին, քանի

որ առևտրային կազմակերպություններ են՝ շահութահարկ են վճարում: Արդյունքում ստացվում է, որ պետական դպրոցների հետ միասին ոչ պետական դպրոցները կատարում են նույն պետական պատվերը, սակայն գտնվում են տարբեր իրավական դաշտերում և ավելի խոցելի են: Այս հարցերի լուծումները դրված են հանրակրթության մասին օրենքի նախագծում, որը քննարկման ընթացքի մեջ է:

8.4. Հատուկ կրթությունը Հայաստանում

Հայաստանի հանրապետությունում հատուկ կրթության համակարգը գործում է «Կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքների հիման վրա: Ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի, կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթությունը կարող է իրականացվել ծնողների ընտրությամբ, ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում, հատուկ ծրագրերով: Սակայն օրենքի այս դրույթը այսօր հնարավոր չէ իրականացնել բոլոր հանրակրթական դպրոցներում՝ բավարար պայմանների բացակայության պատճառով:

Վերջին տարիներին մշակվել և ընթացքի մեջ են այս ոլորտի բարեփոխումները, որոնք նպատակաուղղված են կառուցվածքային բարեփոխումներին, ընդունելության համակարգի կատարելագործմանը, իրականացվող ծառայությունների ապակենտրոնացմանը, կառավարման և ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրմանը, երեխաների խնամքի և կրթության որակի բարելավմանն ու կրթության մատչելիությանը:

Նշված բարեփոխումների արդյունքում հանրապետությունում մինչև 2007թ. գործող 52 հատուկ հանրակրթական հաստատությունների փոխարեն ներկայումս գործում է 28 հատուկ դպրոց՝ մտավոր և ֆիզիկական զարգացման խնդիրներ ունեցող երեխաների համար: Մեկ դպրոց վերակազմակերպվել է բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի, որի նպատակն է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական կարիքների գնահատումը, նրանց ընդունակություններին և կարողություններին համապատասխան կրթության ձևի ընտրությունը: Դեռևս հատուկ կրթության համակարգում են արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար գործող 8 դպրոցները: Բոլոր 37 դպրոցներն էլ գործում են երկարօրյա կամ գիշերօթիկ ռեժիմով:

ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Առաքելություն Արևելք» միջազգային կազմակերպության միջև կնքված փոխըմբռնման հուշագրի համաձայն (10.06.2003թ.) և ՀՀ ԿԳ նախարարի 2006թ. հրամանով մշակվել և հաստատվել են չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության չափորոշիչը և թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության և առարկայական չափորոշիչները, որոնք հնարավորություն են տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ թեթև, չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների կրթությունը կազմակերպել թե՛ հատուկ, թե՛ հանրակրթական դպրոցներում: Այսօր դրանք փորձարկվում են 6 հատուկ և 7 հանրակրթական դպրոցներում:

8.4.1. Օտար լեզուն հատուկ դպրոցներում

Չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների դպրոցներում դասավանդվում է ռուսերենը: Լսողության և տեսողության խանգարումներ ունեցող երեխաների դպրոցներում դասավանդվում է նաև որևէ մեկ օտար լեզու (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն), արտակարգ ընդունակություններ ունեցող երեխաների դպրոցներում դասավանդվում է ռուսերեն և մեկ այլ եվրոպական լեզու:

8.4.2 Ներառական կրթություն

Ներառական կրթությունը մեր երկրում իրականացվեց տեղական ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ: Ներկայումս ԿԳՆ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և «Հույսի կամուրջ» ՀԿ-ի համագործակցության շնորհիվ գործում է ներառական կրթություն իրականացնող 13 դպրոց, որտեղ օտար լեզուն դասավանդվում է հենքային ուսումնական պլանի համաձայն: Չնայած վերը նշված քայլերին, հատուկ կրթության ոլորտում դեռևս շատ անելիքներ կան կրթության առանձնահատուկ կարիք ունեցող անձանց ընդհանուր և մասնագիտական կրթության մատչելիության հարցը լուծելու, դպրոցական շենքերը վերանորոգելու և դրանք երեխաների կարիքներին հարմարեցնելու, մարզերում նույնպես բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոններ ստեղծելու (այսօր գործում է 1-ը Երևանում), մասնագետների համար նպատակային վերապատրաստումներ կազմակերպելու և նրանց ժամանակակից

մանկավարժական և ուսումնամեթոդական գրականությամբ զինելու ուղղությամբ: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական կադրերի պատրաստման գործին: Գիշտ է, Մանկավարժական համալսարանի տարրական և հատուկ կրթության ֆակուլտետում գործում է դեֆեկտոլոգիայի ամբիոնը, սակայն գործող ծրագրերն ու դասագրքերը չեն համապատասխանում ո՛չ ժամանակի պահանջներին, ո՛չ կրթությունը բոլորի համար հայեցակարգին և ո՛չ էլ երեխաների իրավունքների կոնվենցիայի դրույթներին: Մեր կարծիքով, անհրաժեշտ է նաև մշակել ներառական կրթության հատուկ դասընթաց և ներդնել մանկավարժական կադրեր պատրաստող բոլոր բուհերում, ինչպես նաև ստեղծել հատուկ կենտրոն, որը կմշակի դասընթացի ծրագիրը, դասագիրքը, չափորոշիչները, մեթոդական ձեռնարկները, կուսումնասիրի ժամանակակից առաջավոր փորձը և դրա ներդրման հնարավորությունները Հայաստանում:

8.5. Լեզվական կրթության ձևերը արտադասարանական-արտադպրոցական կրթության մեջ (լրացուցիչ կրթություն)

Այսօր հանրապետությունում գործում են պետական և համայնքային 163 արտադպրոցական հաստատություններ, որոնցում ընդգրկված է 63 700 երեխա: 1991 թվականի համեմատությամբ այդ հաստատությունների թիվը նվազել է մոտ 27%-ով, իսկ նրանցում ընդգրկված երեխաների թիվը՝ համարյա 60%-ով: Բացակայում է արտադպրոցական հաստատությունների գործունեությունը կարգավորող իրավական դաշտը, չի իրականացվում ուղղորդված միասնական քաղաքականություն, ավելին, բարձրաստիճան որոշ պաշտոնյաների կարծիքով այդ ոլորտը ճոխություն է մեր նման երկրների համար: Մինչդեռ երկարամյա փորձը ցույց է տալիս, որ արտադպրոցական հիմնարկները մեծ աշխատանք են կատարում երեխաներին փողոցից կտրելու, ազատ ժամանակը կազմակերպելու, նրանց հետաքրքրություններն ու պահանջ-մոլունքները բավարարելու համար: Այնուամենայնիվ, Հայաստանում որոշ աշխատանք տարվում է արտադասարանական դաստիարակության ուղղությամբ:

- Օտար լեզվի խմբակներ են գործում ինչպես դպրոցներում՝ արտադասարանական աշխատանքների շրջանակներում, այնպես էլ արտադպրոցական հիմնարկներում:
- Հանրապետության բազմաթիվ դպրոցներ անվանակոչվել են ռուս, անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի և այլազգի գրողների, մշակույթի գործիչների անուններով: Այդ դպրոց-

ներում մշտապես կազմակերպվում են տվյալ գրողի կյանքին ու գործունեությանը նվիրված գրական-երաժշտական ցերեկույթներ, վիկտորինաներ, հուշ-երեկոներ, գրական ընթերցումներ, ռուսական, անգլիական, ֆրանսիական, գերմանական, պարսկական և այլ մշակույթների շաբաթներ, տասնօրյակներ, փառատոներ:

- Արդեն ավանդույթ են դարձել օտար լեզուների դպրոցական օլիմպիադաները, դրանք անցկացվում են բուհերում: Աշակերտները հաղորդակցվում են հանրապետությունում օտար լեզուների լավագույն մասնագետների հետ, ստանում են նրանց մակագրություններով բառարաններ, գրքեր, նվերներ:
- 2001թվականին Երևանում բացվեց ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոնը, որը մեծ աջակցություն ցուցաբերեց՝ «Ռուսաստանը և ռուսաց լեզուն իմ կյանքում» թեմայով ռուսաց լեզվի միջազգային 2 օլիմպիադաները Հայաստանում անցկացնելու գործում: Միջազգային օլիմպիադաներում հաղթած բարձր դասարանցիներն իրավունք ստացան մրցույթից դուրս անվճար սովորել ՌԴ բուհերում՝ «Բանասիրություն», «Ժուռնալիստիկա» և «Հասարակայնության հետ կապեր» մասնագիտություններով:
- Ամռանը պարբերաբար կազմակերպվում են օտար լեզուների ամառային ճամբարներ:
- Օտար լեզուների դասընթացներ են անցկացվում հեռուստատեսությամբ:
- Մի շարք ՀԿ-ներ տարբեր դրամաշնորհների շրջանակներում կազմակերպում են օտար լեզուների վճարովի և անվճար դասընթացներ:
- Մեծ օգնություն և աջակցություն են ցուցաբերում Հայաստանում Ռուսաստանի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Իրանի դեսպանատները՝ ուսուցիչների վերապատրաստման, դպրոցականների խրախուսման հարցերում:

9. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական կրթությունը Հայաստանի կրթական համակարգի կարևոր բաղկացուցիչ մասն է:

Մասնագիտական կրթական ծրագրերը նպատակաուղղված են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը: Հայաստանում մասնագիտական հիմնական կրթական ծրագրերն են՝

- 1) նախնական մասնագիտական (արհեստագործական).
- 2) միջին մասնագիտական.
- 3) բարձրագույն մասնագիտական.

4) հետբուհական մասնագիտական (ՀՀ օրենքը կրթության մասին, հոդված 10):

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը Հայաստանում մասնագիտական կրթության առաջին աստիճանն է:

Ինչպես նշվում է «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում, արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներից են՝

- այդ կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի ներդրումը.
- կրթական գործընթացի անընդհատության, շարունակականության ապահովումը.
- ուսանողի՝ ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը և այլն (Հոդված 5):

Ինչպես նշվում է Կրթության մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության նպատակը նախնական մասնագիտական որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է: Այն իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ուսումնական կենտրոններում: Համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում արհեստագործական կրթությունը կարող է իրականացվել նաև անհատական մասնագիտական ուսուցման ձևով (վարպետային ուսուցում):

9.1. Միջին մասնագիտական կրթություն

2006-2007 ուսումնական տարում Հայաստանում գործել են 83 միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններ (ՄՍՈՒՀ), որոնցից 27-ը՝ մայրաքաղաքում, մյուսները՝ մարզերում: Ուսանողների թվաքանակը 28305 է, որոնց 64,8%-ը կանայք են: Վճարովի ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 74,7%-ը, իսկ անվճար համակարգում՝ 25,3%-ը: Նույն ուսումնական տարում Հայաստանում գործել են 25 ոչ պետական ՄՍՈՒՀ-ներ: Ուսանողների թվաքանակը 2546 է, որոնց 70,8%-ը կանայք են:

9.1.1. Լեզուների ուսուցումը միջին մասնագիտական հաստատություններում

Հայաստանի 15 ՄՍՈՒՀ-ներում կան լեզվաբանական մասնագիտություններ: Դրանք հիմնականում լեզուների դասավանդման մասնագիտություններ են, ինչպես, օրինակ Երևանի Ա. Բակունցի անվան պետական մանկավարժական քոլեջը, Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի պետական մանկավարժական քոլեջը, Գյումրու և Գորիսի պետական մանկավարժական քոլեջները և այլն, որտեղ հիմնականում պատրաստում են տարրական դասաբաններում դասավանդող լեզուների մասնագետներ:

Երևանի պետական հումանիտար քոլեջն ունի լեզուներից առնչվող մասնագիտությունների լայն ընտրանի. «Նախադպրոցական կրթություն և օտար լեզու», «Թարգմանություն և գործավարություն», «Թարգմանություն և արխիվավարություն», «Թարգմանություն և մաքսային գործ», «Թարգմանություն և սպասարկման կազմակերպում», «Հայոց և օտար լեզուների դասավանդում»:

Վերոնշյալ մասնագիտություններից մի քանիսն ուսուցանվում են նաև Երևանի ու մարզերի մի քանի քոլեջներում: ՄՍՈՒՀ-ներում ուսուցանվում է հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն: Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջում որպես պարտադիր օտար լեզու ուսուցանվում է հունարեն: Օտար լեզուներն ուսուցանվում են սկսած առաջին կուրսից և ուսումնասիրում են նվազագույնը մեկ, առավելագույնը՝ չորս ուսումնական տարի: Ոչ լեզվական ֆակուլտետներում օտար լեզուն ուսումնասիրում են շաբաթական երկու ժամ, մասնագիտական ֆակուլտետներում՝ 12 ժամ:

ՄՍՈՒՀ-ներում դասավանդում է հայերենի շուրջ 250, օտար լեզվի շուրջ 350 դասախոս: Ըստ ԱՎԾ տվյալների, 2006թ.-ին պետական և ոչ պետական ՄՍՈՒՀ-ներում լեզվական մասնագիտությունների գծով սովորել է 1325 ուսանող: Այդ տարում ընդունվել է 481 ուսանող, ավարտել 608-ը: Փաստորեն, նկատվում է սովորողների թվի եական անկում:

ՄՍՈՒՀ-ներում օտար լեզուների ուսուցումը հիմնականում բավարար մակարդակի վրա չի գտնվում: Բավարար չէ մեթոդական-ծրագրային ապահովումը, չկան անհրաժեշտ քանակությամբ տեխնիկական միջոցներ, համապատասխան դասագրքեր: Օտար լեզվի իմացությունը (եթե ուսանողը չի սովորում լեզվական ֆակուլտետում) մասնագիտական առումով կարևոր չէ ուսանողի համար, ինչը նվազեցնում է նրա ուսման մոտիվացիան:

Դեռևս մշակված չեն լեզվական առարկաների չափորոշիչները:

9.2. Բարձրագույն մասնագիտական դպրոց

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում ձևավորվել է այսօր գործող հետևյալ բուհական համակարգը. ավանդական պետական բուհեր, միջպետական համաձայնագրերով հիմնադրված միջպետական բուհեր և ոչ պետական բուհեր:

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է հիմնական և լրացուցիչ հետևյալ կրթական ծրագրերով.

1) բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրերով՝

- բակալավրի,
- մագիստրոսի,
- դիպլոմավորված մասնագետի.

2) հետբուհական մասնագիտական հիմնական կրթական ծրագրով՝

- հետազոտողի.

3) լրացուցիչ կրթական ծրագրերով՝

- վերապատրաստման,
- մասնագետների որակավորման բարձրացման:

(ՀՀ օրենքը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին, հոդված 8):

2006-2007 ուսումնական տարում Հայաստանում գործել են 23 բուհ և 10 մասնաճյուղ, որոնցում սովորել է 81383 ուսանող (52,4%-ը կանայք): Նրանցից 61419-ը (75,5%) սովորել է վճարովի

համակարգում, իսկ 19964-ը (24,5%)` անվճար: 64023 ուսանող սովորում են առկա, 17360-ը` հեռակա համակարգում: 23 պետական բուհերից 19-ը գործում են Երևանում, 4-ը` մարզերում: Մարզերում են գործում նաև 10 մասնաճյուղերը:

Նույն ուսումնական տարում Հայաստանում գործել է 64 ոչ պետական բուհ: Ուսանողների թվաքանակը 24447 է (63.4%-ը` կանայք): Ոչ պետական բուհերից 49-ը գործում են մայրաքաղաքում, 15-ը` մարզերում:

Պետական բուհերի և դրանցում սովորող ուսանողների թիվը` ըստ տարբեր տարիների, ներկայացված է ստորև բերված աղյուսակում (Աղյուսակ 8.1.):

Աղյուսակ 9.1.

Պետական բուհերի և դրանցում սովորող ուսանողների թիվը` ըստ տարբեր տարիների⁹

	1990/ 91	1999/ 00	2000/ 01	2001/ 02	2002/ 03	2003/ 04	2004/ 05
Պետական բուհերի թիվը	14	16	19	20	20	20	20
Ուսանողների ընդհանուր թիվը (հազ.)	48.9	39.8	43.6	47.4	54.1	55.9	62.5
Պետպատվերով (անվճար) սովորող ուսանողների թիվը (հազ.)	47.1	15.8	16.1	16.6	16.0	19.2	19.7
	<i>96.3%</i>	<i>42.9%</i>	<i>36.9%</i>	<i>35.0%</i>	<i>29.6%</i>	<i>34.3%</i>	<i>31.5%</i>
Վճարովի համակարգում սովորող ուսանողների թիվը (հազ.)	1.8	24.0	27.5	30.8	38.1	36.7	42.8
	<i>3.7%</i>	<i>57,1%</i>	<i>63,1%</i>	<i>65,0%</i>	<i>70,4%</i>	<i>65,7%</i>	<i>68,5%</i>

1988-ին առաջին անգամ Հայաստանի մասնագիտական կրթության ոլորտում ի հայտ է եկել նոր իրողություն` ոչ պետական մասնագիտական հաստատությունները: Ինչպես երևում է ստորև բերված աղյուսակից, 1988-1998 թվականներին այս ցանցը բուռն վերելք է ապրել (հմնտ. 1 բուհ – 1988, 87 բուհ` 1998-ին): Վերջին տարիներին (1998-2006) նկատվում է դրանց թվի նվազում (67 բուհ 2006-ին)` որակի վերահսկման ուժեղացման և ազատ տնտեսական մրցակցության արդյունքում: Այդ հանգամանքը, սակայն, չի ազդել

⁹ Աղբյուրը` ՀՀ ԱՎԾ:

այդ բուհերում սովորող ուսանողների թվաքանակի վրա, որը նույնիսկ աճել է բուհերի որակական ու տեխնիկական զարգացման և տարածքների ընդլայնման հաշվին:

Աղյուսակ 9.2.

Ոչ պետական բուհերի և դրանցում սովորողների թվի շարժը (1988-2006թթ¹⁰)

	Ոչ պետական բուհերի թիվը	Ոչ պետական բուհերում սովորողների թիվը (հազար մարդ)
1988-1989	1	0,3
1989-1990	2	0,9
1990-1991	10	3,2
1991-1992	24	7,3
1992-1993	33	12,0
1993-1994	35	13,3
1994-1995	40	14,5
1995-1996	40	14,5
1996-1997	75	18,3
1997-1998	87	20,2
1998-1999	84	21,2
1999-2000	82	22,0
2000-2001	71	17,1
2001-2002	71	18,2
2002-2003	72	18,2
2003-2004	73	22,0
2004-2005	68	22,6
2005-2006	67	24,05


¹⁰ Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ, «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը» վիճակագրական ժողովածուներ:

9.2.1. Ընդունելության քննություններ լեզուներից

Դիմորդների և հատկացված տեղերի թիվը

Լեզուներ ուսուցանող ֆակուլտետներում հիմնականում արձանագրվում է բարձր մրցույթ, ինչը դրանց բարձր պահանջարկի ցուցանիշն է: Հատկապես օտար լեզուների ֆակուլտետներում էապես բարձր է նաև ուսման վարձը: Բացառություն են կազմում միայն հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու և գրականություն ուսուցանող ֆակուլտետները, որոնցում ուսման արժեքը համեմատաբար ցածր է: Հատկապես մեծ է անգլերեն լեզվի մասնագիտությունների գծով դիմորդների թիվը: Ստորև ներկայացնում ենք 2007թ. լեզուների գծով հատկացված տեղերի թիվը և առաջին հայտով¹¹ դիմած դիմորդների թիվը: Հարկ է նշել, որ աղյուսակում ներառված են միայն ԵՊՀ և ԵՊԼՀ տվյալները:

ԵՊՀ և ԵՊԼՀ լեզուների մասնագիտություններին հատկացված տեղերի և առաջին հայտով դիմածների թիվը (2007թ.)



Գծապատկեր 9.1.

Գծապատկերից երևում է, որ անգլերենը զգալիորեն գերազանցում է մնացած լեզուներին: Ըստ ԿԳ նախարարության տվյալների¹², անգլերեն լեզվի մասնագիտությունների համար

¹¹ Դիմորդը կարող է ներկայացնել մինչև ութ հայտ: Որպես կանոն առաջին հայտն արտահայտում է դիմորդի մասնագիտական կողմնորոշումը, նրա նախապատվությունը:


¹² Տվյալները քաղված են www.edu.am կայքից, 10 դեկտեմբերի 2007թ-ին:

2007թ-ին հատկացվել է 745 տեղ, որոնց համար առաջին հայտով դիմել է 1143 դիմորդ: Հայ բանասիրության ֆակուլտետին հատկացվել է 120 տեղ, որոնց համար առաջին հայտով դիմել է 290 դիմորդ: Հատկապես մտահոգիչ է գերմաներենի և ֆրանսերենի վիճակը: Գերմաներենին հատկացված 99 տեղի համար, օրինակ, առաջին հայտով դիմել է 98 դիմորդ: Մնացած լեզուների պարագայում առաջին հայտով դիմածների թիվը մի փոքր ավելին է, քան հատկացված տեղերի թիվը:

Իրավիճակն ավելի ցայտուն պատկերացնելու համար ստորև բերվող զծապատկերում ներկայացված է Երևանի պետական համալսարանի տարբեր մասնագիտությունների գծով առաջին հայտով դիմումների թվի հարաբերությունը տվյալ մասնագիտությանը հատկացված ընդունելության տեղերի թվին (մրցութային ցուցանիշն՝ ըստ առաջին հայտի):

Այն պարզորոշ ցույց է տալիս, որ վերջին տարիներին կտրուկ աճել է ռոմանագերմանական ֆակուլտետ դիմողների թիվը (հիմնականում անգլերենի հաշվին) և նվազել է ռուսական բանասիրության ֆակուլտետ դիմողների թիվը:

ԵՊՀ տարբեր մասնագիտությունների գծով ընդունելության մրցույթի տվյալներն՝ ըստ առաջին հայտի




Գծապատկեր 9.2.

9.2.2. *Դիմորդների բաշխվածությունը ըստ բնակության վայրի*

Հայաստանում լեզվաբանական ուսուցումը կենտրոնացած է Երևանի երկու պետական բուհերում՝ Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում և Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) համապատասխան ֆակուլտետներում: Պետական մանկավարժական բոլոր բուհերում կան լեզուների ուսուցիչների մասնագիտություններ: Մասնավորապես, Վանաձորի պետական մանկավարժական համալսարանում «Անգլերեն լեզու» մասնագիտությամբ 2007-2008 ուստարում սովորում է 345 ուսանող: Նույն բուհում 132 ուսանող ուսումնասիրում է ֆրանսերեն՝ որպես երկրորդ օտար լեզու, 114 ուսանող՝ գերմաներեն՝ որպես երկրորդ օտար լեզու: Լեզվաբանական մասնագիտություններ կան Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանում, ինչպես նաև մի շարք ոչ պետական բուհերում: Թեև վերջին տարիներին նկատվում է մարզերից եկած դիմորդների թվի աճ, այդուհանդերձ, լեզվաբանական ֆակուլտետներում գերակշռում են Երևանցի դիմորդները:

Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան և Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական լեզուների ֆակուլտետներ դիմածների թիվը (բաշխվածությունը՝ ըստ բնակության վայրի)




Գծապատկեր 9.3.

Այս տվյալները վկայում են, որ միայն Երևան քաղաքից ավելի շատ դիմորդներ կան, քան բոլոր մարզերից միասին վերցված:

Պատկերն այլ է հայոց լեզու և գրականություն մասնագիտության պարագայում: ԵՊՀ-ում, որը հայերենի մասնագետներ պատրաստող հիմնական հաստատությունն է, վերջին երկու տարիներին արձանագրվել է հետևյալ պատկերը:

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ դիմածների թիվը (բաշխվածությունը՝ ըստ բնակության վայրի)




Գծապատկեր 9.4.

Տվյալները վկայում են, որ մարզերից դիմածների թիվը գերազանցում է երևանցի դիմորդների թվին: Ընդ որում, այդ տարբերությունը 2007թ.-ին էապես մեծացել է:

Մարզերից եկած դիմորդների թիվը մեծ է նաև մանկավարժական բուհերի լեզվական ֆակուլտետներում: Մասնավորապես, հիմնական մանկավարժական բուհում՝ Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում (անգլերեն լեզվի և գրականության ֆակուլտետ), վերջին երկու տարիներին արձանագրվել է հետևյալ պատկերը:

ԽԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿԵՏԱԿԱՆ ԺԱՆՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽԱՆԱՍԱՐԱՆԻ ԱՆՂԵՐԵՆ ԼԵՂՈՒ և զրականությունն ֆակուլտետ դիմածների թիվը (բաշխվածությունը՝ ըստ բնակության վայրի)



Գծապատկեր 9.5.

Փաստորեն, 2007 թվականին մարզերի դիմորդների թիվը գրեթե երեք անգամ ավելին է, քան երևանցի դիմորդների թիվը:

Այսպիսով, օտար լեզուների մասնագետներ (բանասերներ, թարգմանիչներ) պատրաստող բուհերում գերակշռում են երևանցի դիմորդները: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ այդ բուհերում անցողիկ միավորները շատ բարձր են և ռեպետիտորների մոտ պարապելու նվազ հնարավորություն ունեցող մարզային դիմորդները մրցունակ չեն երևանցիների հետ: Պակաս կարևոր դեր չունի նաև այն հանգամանքը, որ այդ բուհերում ուսման վարձը բավական բարձր է և մարզերի շատ բնակիչների համար ոչ մատչելի: Հետազոտությունները վկայում են, որ «աղքատությունը շարունակում է նկատելի բարձր մնալ Երևանից դուրս»¹³:


Հայոց լեզվի մասնագետներ պատրաստող հիմնական բուհում և մանկավարժական ԽԱՆԱՍԱՐԱՆում գերակշռում են մարզերի դիմորդները, ինչը պայմանավորված է անցողիկ ցածր միավորներով և ավելի էժան ուսման վարձով:

¹³ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, էջ 23:

9.2.3. Քննությունների արդյունքները

Ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» (2007) հետազոտության, բուհ ընդունվելու համար մասնավոր դասընթացների է հաճախել երեխաների 34.5%-ը: Ընդ որում, հետազոտության արդյունքներով, առավել տարածված են հայոց լեզվի և օտար լեզուների¹⁴ մասնավոր պարապմունքները: 2007թ. օտար լեզուներից գրավոր քննություն է հանձնել 7615 դիմորդ: Գրավոր քննություն հանձնում են ինչպես լեզվաբանական մասնագիտությունների, այնպես էլ հումանիտար և տնտեսագիտական մասնագիտությունների գծով դիմողների զգալի մասը: Ստորև ներկայացնում ենք 2007թ. ընդունելության քննությունների ժամանակ օտար լեզուների (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն) գրավոր քննություններում «գերազանց» (18-20) և «անբավարար» (< 8) ստացած դիմորդների թիվը տոկոսային հարաբերությամբ:

2007թ.-ին ընդունելության գրավոր քննությունների ժամանակ «գերազանց» և «անբավարար» ստացած դիմորդների թիվը (%-ով)




Գծապատկեր 9.6.

¹⁴ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», ՀՀ ԱՎԾ, Երևան 2007, էջ 91:

Տվյալները վկայում են, որ անզլերեն, ֆրանսերեն, գերմաներեն հանձնող դիմորդների գրեթե կեսը ստանում է «գերազանց»: «Ամբավարար» ստացող դիմորդների թիվը չի գերազանցում 10%-ը: Նման բարձր արդյունքները պայմանավորված են այն հանգամանքով, որ դիմորդներն անգիր են անում առաջադրանքները, որոնք վաղօրոք տպագրվում են շտեմարաններում: Աղյուսակից երևում է, որ բավական ցածր արդյունքներ են արձանագրվում ռուսաց լեզվի քննություններում, որտեղ դիմորդների շուրջ 30%-ն «ամբավարար» է ստանում: Ի տարբերություն մյուս օտար լեզուների, ռուսաց լեզվի գրավոր քննությունը թելադրություն է, ինչը շատ մասնագետների կարծիքով գիտելիքների ստուգման լավագույն ձևը չէ:

Լեզուներից բանավոր քննություն են հանձնում միայն լեզվաբանական ֆակուլտետների դիմորդները: Այդուհանդերձ, բանավոր քննությունների արդյունքները գրավոր քննությունների համեմատ զգալիորեն ցածր են: Ստորև ներկայացնում ենք 2007թ. ընդունելության քննությունների ժամանակ հայերենի, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի և ռուսերենի բանավոր քննություններում «գերազանց» (18-20) և «ամբավարար» (<8) ստացած դիմորդների թիվը՝ տոկոսային հարաբերությամբ:

2007թ.-ին ընդունելության բանավոր քննությունների ժամանակ «գերազանց» և «ամբավարար» ստացած դիմորդների թիվը (%-ով)



Գծապատկեր 9.7.

Տվյալները վկայում են, որ հատկապես մտահոգիչ են մայրենի լեզվի արդյունքները: Դիմորդների շուրջ 1%-ը ստացել է «գերազանց», իսկ 22%-ը՝ «անբավարար»: Նման արդյունքի պատճառներն այն են, որ հայերենի քննությունը լեզվականից բացի ստուգում է նաև գրականության մասին գիտելիքները: Սյուս պատճառն այն է, որ հայկական բանասիրական ֆակուլտետներ դիմում են հիմնականում մարզերի դիմորդները, որոնցից շատերը քննության են ներկայանում առանց մասնավոր պարապելու: Քիչ թվով «գերազանց» և «անբավարար» գնահատականներ են արձանագրվել գերմաներենից: «Գերազանց»-ների փոքր թիվը հավաստում է այս լեզվի ուսուցման հետ կապված լուրջ խնդիրների մասին: Գերմաներենի մասնագետների հավաստմամբ տարեցտարի նվազում է դիմորդների թիվը և գերմաներենից բանավոր քննություններ ընդունող հանձնաժողովները ստիպված են լինում ընդառաջել «անբավարար»-ի և «բավարար»-ի սահմանագծում գտնվող որոշ դիմորդների: Մասնավորապես, 2007թ. ընդունելության քննությունների ժամանակ գերմաներենից բանավոր քննություն հանձնած դիմորդների 14.7%-ը ստացել է 8 միավոր, 13.7%-ը՝ 9 միավոր, որոնք նվազագույն դրական միավորներն են: Ամենաբարձրը ֆրանսերենի արդյունքներն են: Դիմորդների շուրջ 30%-ը «գերազանց» է ստացել:

9.2.4. Ընդունելության քննություններին ներկայացվող բովանդակային պահանջները

Լեզվաբանական մասնագիտությունների բանավոր քննությունների ժամանակ ստուգվում են ընթերցանության, թարգմանչական, անժանոթ տեքստի ընկալման, դպրոցական ծրագրից ծանոթ որևէ թեմայի շուրջ հաղորդակցվելու հմտությունները:

Գրավոր քննության ժամանակ դիմորդները կատարում են տարբեր տիպի քերականական վարժություններ, օրինակ՝ թարգմանում են նախադասություններ, տրված բառերով կազմում նախադասություններ, ուղղակի խոսքը դարձնում անուղղակի և հակառակը, նախադասությունները դարձնում հարցական և այլն: Որոշ առաջադրանքների միջոցով ստուգվում է նաև ընթերցանական կարողությունները, մասնավորապես՝ տեքստի բովանդակության ընկալման աստիճանը:

Ցավոք սրտի, օտար լեզուների բանավոր հաղորդակցման կարողությունները ստուգվում է միայն լեզվական մասնագիտական ֆակուլտետներում:

9.3. Լեզուների ուսուցումը բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում

9.3.1. Լեզուներ սովորող ուսանողների և դասավանդողների կազմը

Ուսանողներ

Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, Հայաստանի բոլոր պետական և ոչ պետական բուհերում 2006թ.-ին լեզուների մասնագիտությամբ սովորել են.

- **հայոց լեզու և գրականություն** – 2107 ուսանող, որոնցից 1949-ը (92.5%) աղջիկներ,
- **ռուսաց լեզու և գրականություն** - 998 ուսանող, որոնցից 939-ը (94%) աղջիկներ,
- **օտար լեզուներ** - 5978 ուսանող, որոնցից 5588-ը (93.5%) աղջիկներ:

Ընդհանուր առմամբ լեզվական մասնագիտությունների գծով 2006թ.-ին Հայաստանի պետական և ոչ պետական բուհերում սովորել է 9083 ուսանող, որը կազմում է ուսանողների ընդհանուր թվի 8.6%-ը:

2006թ.-ին բանասիրական մասնագիտությունների գծով պետական բուհերում մագիստրատուրա ընդունվել է 330 ուսանող (մագիստրատուրայում սովորողների շուրջ 15%-ը), որոնցից 245-ը կանայք են: Նույն թվականին բանասիրական մասնագիտությունների գծով մագիստրատուրան ավարտել է 250 ուսանող: Փաստորեն, արձանագրվում է բանասիրական մասնագիտությունների գծով սովորողների թվի աճ:

Դասախոսներ

Ըստ Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության¹⁵ տվյալների՝ 2006-07 ուսումնական տարում բանասիրական մասնագիտությունների գծով Հայաստանի պետական բուհերում դասավանդել է 1324 դասախոս (պետական բուհերի դասախոսական կազմի 18.5%-ը), որոնցից 1085-ը (շուրջ 82%) կանայք են: Դասախոսներից 71-ը գիտությունների դոկտոր են, 395-ը գիտությունների թեկնածու: Ոչ պետական բուհերում դասավանդում են 277 դասախոս, որոնցից 217-ը (շուրջ 78%) կանայք են:

¹⁵ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2006 թվականին, ՀՀ ԱՎԾ, 2007, էջ 96

Դասախոսներից 15-ը գիտությունների դոկտոր է, 64-ը՝ գիտությունների թեկնածու:

9.3.2. Լեզուների ուսուցումը որպես մասնագիտություն

Հայաստանում գործում է լեզվաբանական մեկ համալսարան (Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը), Երևանի պետական համալսարանն ունի հայկական բանասիրական, ռուսաց լեզվի և գրականության, ռոմանագերմանական բանասիրության, ինչպես նաև արևելագիտության ֆակուլտետներ, Հայ-ռուսական (սլավոնական) միջպետական համալսարանն ունի ռոմանագերմանական լեզուների ֆակուլտետ: Երևանի պետական մանկավարժական համալսարանում գործում են բանասիրական ֆակուլտետ (հայերեն և ռուսերեն բաժիններով), օտար լեզուների ֆակուլտետ (անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն բաժիններով): Օտար լեզուների ուսուցիչներ են պատրաստվում նաև մանկավարժական մյուս բուհերում: Գործում է մեկ ոչ պետական լեզվաբանական ինստիտուտ («Ինտերլինգվա»), իսկ մյուս ոչ պետական բուհերում գործում են լեզուների ֆակուլտետներ և մասնագիտություններ (Հ.Աճառյանի անվան, Երևանի հյուսիսային, Ա. Շիրակացու անվան և այլ համալսարաններ):

Օտար լեզուների գծով գործում են հինգ մասնագիտություններ՝ բանասիրություն, լեզվաբանություն, միջմշակութային հաղորդակցություն, մանկավարժություն, թարգմանություն:

Աղյուսակ 9.3.

Լեզվական մասնագիտություններ ունեցող պետական և ոչ պետական բուհերի թիվը

Լեզու	Համապատասխան մասնագիտություն ունեցող պետական բուհերի թիվը	Համապատասխան մասնագիտություն (հավատարմագրված) ունեցող ոչ պետական բուհերի թիվը
Հայոց լեզու և գրականություն (լեզվաբաններ, մանկավարժներ)	6	7
Ռուսաց լեզու և գրականություն (լեզվաբաններ, թարգմանիչներ, մանկավարժներ)	6	0
Անգլերեն լեզու (լեզվաբաններ, թարգմանիչներ, մանկավարժներ)	6	16
Ֆրանսերեն լեզու (լեզվաբաններ,	4	7

թարգմանիչներ, մանկավարժներ)		
Գերմաներեն լեզու (լեզվաբաններ, թարգմանիչներ, մանկավարժներ)	4	5
Արևելյան լեզուներ	2	2
Իսպաներեն	1	1
Իտալերեն	1	-
ԸՆդամներ	28	36

Վերոնշյալ տվյալները վկայում են, որ Հայաստանում հավատարմագրված լեզվաբանական մասնագիտություններ կան մեծ թվով բուհերում:

Խորհրդային տարիներին Հայաստանի բուհերում որպես մասնագիտություն ուսուցանվում էին ռուսերենը, անգլերենը, ֆրանսերենը և գերմաներենը: Վերջին տարիներին նշված լեզուներին ավելացել են իսպաներենն ու իտալերենը: Մասնագիտական ֆակուլտետներում ուսանողները սովորում են նաև 2-րդ, 3-րդ օտար լեզուներ, որոնց ցանկում կան ինչպես եվրոպական, այնպես էլ ոչ եվրոպական լեզուներ:

ԵՊՀ-ի արևելագիտության ֆակուլտետն ունի պարսկագիտություն, արաբագիտություն, թուրքագիտություն մասնագիտություններ: Այս բաժիններում արաբերեն, պարսկերեն, թուրքերեն (նաև օսմաներեն, ադրբեջաներեն) լեզուներին զուգահեռ դասավանդվում են քրդերեն, հնդկերեն, եբրայերեն:

Արևելյան լեզուներ դասավանդվում են նաև ՀՀ այլ բուհերում, ինչպես նաև ԵՊՀ միջազգային հարաբերությունների և պատմության ֆակուլտետներում:

Մասնագետների գնահատմամբ, լեզուները որպես մասնագիտություն ուսուցանելու դժվարություններից մեկը ուսանողների մեկնարկային մակարդակների տարբերությունն է: Շատ դժվար է միևնույն ծրագրով ուսուցանել լեզվի մացության բարձր և միջին մակարդակ ունեցող ուսանողներին: Այս խնդիրը հատկապես նկատելի է գերմաներենի պարագայում, քանի որ այս մասնագիտությամբ բուհ ընդունելության մրցույթը մեծ չէ, որոշ դեպքերում ընդունվում են նաև լեզվի մացության ցածր մակարդակ ունեցող դիմորդներ: Խնդիր կա նաև իսպաներենի և իտալերենի պարագայում, քանի որ այս մասնագիտությամբ սովորող ուսանողների մեծ մասը բուհ ընդունվելու պահին չի տիրապետում այդ լեզվին, քանի որ այդ լեզուների ուսուցումը հանրակրթական դպրոցներում հազվադեպ է:

Դասավանդողների շրջանում կա դժգոհություն, որ շատ դեպքերում խմբերը մեծաքանակ են (20-22 ուսանող), ինչը չի նպաստում լեզուների ուսուցման արդյունավետությանը: Սակայն

հետազոտություններ չկան այն մասին, թե, արդյո՞ք 15 հոգանոց խմբերում դասախոսներն ավելի բարձր որակ են ապահովում, քան 20 հոգանոց խմբերում:

Մյուս խնդիրը կապված է ժամաքանակների կրճատման հետ: Մասնագետները նշում են, որ վերջին տարիներին կրճատվել է մասնագիտական լեզուներին հատկացվող ժամաքանակը, (օրինակ՝ բուհերից մեկում նախկին 16 ժամի փոխարեն ներկայումս հատկացվում է 10 ժամ), ինչը բացասաբար է ազդում ուսման որակի վրա:

Լեզուների ուսուցման ոլորտում զգալի աշխատանքներ են կատարվել դասագրքերի ստեղծման ուղղությամբ: Եթե նախկինում հիմնականում օգտագործվել են Ռուսաստանում տպագրված դասագրքեր, ապա այսօր մեծ թիվ են կազմում Հայաստանի բուհերի մասնագետների կողմից մշակված դասագրքերը: Ընդ որում, շատ դեպքերում այդ դասագրքերը տպագրվում են մեկ տարվա փորձարկումից հետո, ինչը հնարավորություն է տալիս բարելավել դրանց բովանդակությունը: Որոշ դեպքերում դասախոսության նյութերի էլեկտրոնային տարբերակները տեղադրվում են ինտերնետային կայքում: Բայց էլեկտրոնային նյութերի օգտագործումը դեռևս մեծ տարածում չունի, քանի որ ուսանողների զգալի մասի համար համակարգիչն ու ինտերնետը մատչելի չեն: Տեղական մասնագետների ջանքերով ստեղծված դասագրքերի առումով հատկապես բարվոք է անգլերենի վիճակը: Ստեղծվել են բազմաթիվ դասագրքեր, որոնք սակայն, մասնագետների կարծիքով, վերանայման և նոր մշակվող չափորոշիչներին համապատասխանեցման կարիք ունեն: Զգալի աշխատանքներ են կատարվում ֆրանսերենի մասնագետների կողմից: Կան դասագրքեր նաև մյուս լեզուների համար, սակայն դեռևս գերիշխող են արտերկրում տպագրված դասագրքերը:

Լեզվական բուհերում գործում են մասնագիտական զարգացման դասընթացներ: Որոշակի պարբերականությամբ դասախոսները պարտավոր են մասնակցել այդ դասընթացներին: Դասախոսներին մտահոգում է այն հանգամանքը, որ արտերկրում վերապատրաստվելու հնարավորությունները շատ սահմանափակ են:

9.3.3. Լեզուների ուսուցումը այլ մասնագիտության զուգորդումով

Հայաստանում լեզուների ուսուցումը չի հետապնդում սոսկ լեզվաբաններ, թարգմանիչներ, մանկավարժներ պատրաստելու

նպատակ: Առանձին դեպքերում լեզվաբանական կրթությունը զուգորդվում է այլ մասնագիտության ուսուցմամբ: Մասնավորապես, վերջին տարիներին ԵՊԼՀ-ում հաջողությամբ ներդրվել է լեզվաբանական ուսուցման զուգորդումը այլ մասնագիտությունների հետ, օրինակ ժուռնալիստիկայի, քաղաքագիտության, հոգեբանության, միջմշակութային հաղորդակցության: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս պատրաստել օտար լեզուների և մեկ այլ մասնագիտության տիրապետող շրջանավարտներ, ինչը աշխատաշուկայում բարձրացնում է նրանց մրցունակությունը:

9.3.4. Լեզուների ուսուցումը ոչ լեզվաբանական ֆակուլտետներում

Օտար լեզուների ուսուցումը մասնագիտական կրթության մեջ կարևորվում է և պայմանավորված է միջազգային հանրությանը Հայաստանի ինտեգրման հանգամանքով: Մասնագիտական կրթության աստիճանում օտար լեզուների ուսուցումը շատ մեծ նշանակություն ունի: Օտար լեզուների իմացությունը ոչ միայն կարևոր է հաղորդակցական առումով, այլև որակյալ մասնագետ դառնալու էական նախապայման է, քանի որ մասնագիտական գրականության զգալի մասը օտար լեզուներով է:

Բոլոր մասնագիտությունների գծով պարտադիր է հայերենի, ռուսերենի ու ևս մեկ օտար լեզվի ուսուցումը: Ըստ Հայաստանի բուհերի տրամադրած տվյալների, 2007թ. բուհերում ուսուցանվել են 14 օտար լեզուներ: Քանի որ Հայաստանի բուհերն ունեն ակադեմիական ազատություն, ապա չկան լեզուների ուսուցման միասնական պահանջներ: Միակ պահանջը կապված է հայերենի հետ: «Լեզվի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ինչպես արդեն նշվել է, Հայաստանի Հանրապետության բոլոր նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունը և հայոց լեզվի ուսուցումը պարտադիր են:

Արդյունքում, տարբեր բուհերում օտար լեզուների ուսուցմանը հատկացվում է տարբեր ժամաքանակ և կիրառվում են գիտելիքների ստուգման տարբեր ձևեր: Որպես կանոն, հայերենի և օտար լեզուների ուսուցումը սկսվում է առաջին կուրսից: Բուհերի մեծ մասում լեզուներ ուսուցանվում են մինչև չորս կիսամյակ: Այն բուհերը, որոնք արդեն գործում են բակալավրիատ-մագիստրատուրա համակարգով, լեզուներ ուսուցանում են ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի աստիճանում:

Օտար լեզուների ուսուցումը ոչ մասնագիտական ֆակուլտետներում բացի հաղորդակցման համար անհրաժեշտ գիտելիքներ տալուց, նպատակ ունի օգնելու ուսանողին օգտվել իր մասնագիտությանն առնչվող օտարալեզու գրականությունից: Սակայն այս նպատակների իրականացումը ոչ միշտ է հաջողվում: Խնդիրներից մեկն այն է, որ այն ֆակուլտետներում, որտեղ ընդունելության համար օտար լեզվի քննություն չի պահանջվում, կարող են ընդունվել ուսանողներ օտար լեզվի իմացության շատ ցածր, երբեմն նույնիսկ զրոյական մակարդակով: Շատ ֆակուլտետներում լեզվի իմացության տարբեր մակարդակ ունեցող ուսանողները սովորում են նույն խմբում: Նման բազմազանության պարագայում դասախոսները դժվարանում են արդյունավետ ուսուցում ապահովել: Նման դեպքերում պահանջվում է տարբերակված (շերտավորված) ուսուցում, ինչը գործնականում չի իրականացվում:

Շատ ավելի դժվար է մասնագիտական լեզվի ուսուցման խնդիրը: Թեև շատ մասնագիտությունների համար ստեղծվել են օտար լեզվի դասագրքեր, սակայն դեռևս շատ անելիքներ կան մասնագիտական օտար լեզուն ուսուցանելու հարցում:

Կարևորելով այն հանգամանքը, որ օտար լեզուների իմացությունը տվյալ մասնագիտության ժամանակակից զարգացումների համընթաց գնալու միջոց է, «Կրթության զարգացման պետական ծրագրի» (2008-2015թթ.) նախագծում առաջարկվել է քայլեր ձեռնարկել որոշ մասնագիտական առարկաների դասավանդումը օտար լեզուներով իրականացնելու ուղղությամբ:

Կան դժգոհություններ, որ մագիստրատուրայի աստիճանում իրենք կրկնում են բակալավրիատի ծրագիրը:

Խնդիրներից մեկն էլ այն է, որ մասնագիտական զարգացման դասընթացներ չկան լեզուների այն դասախոսների համար, որոնք աշխատում են լեզվաբանական ֆակուլտետներ չունեցող բուհերում: Այս իմաստով դասախոսները մասնագիտական լուրջ աջակցության կարիք ունեն:

9.3.5. Լեզվի ուսուցումը հեռակա համակարգով

Հայաստանում վերջին տարիներին վերկանգնվել է լեզուների ուսուցման հեռակա համակարգը: Այդ համակարգն առաջինը վերականգնվեց մանկավարժական բուհերում և նպատակ ուներ աջակցել այն ուսուցիչներին, ովքեր արդեն դասավանդում էին դպրոցում՝ չունենալով բարձրագույն կրթություն: 2007թ. հեռակա ուսուցումը վերականգնվեց նաև ԵՊՀ ռոմանագերմանական

Ֆակուլտետում, որտեղ ուսանողները տարեկան շուրջ 6 ամիս են դասի հաճախում: Չկան ուսումնասիրություններ այն մասին, թե որքանով է արդյունավետ լեզուների՝ որպես մասնագիտության հեռակա ուսուցումը: Ակնհայտ է, որ լեզուների ուսուցման կազմակերպումը հեռակա կարգով պահանջում է առանձնահատուկ մոտեցում:

9.4. Մանկավարժական կրթություն և մասնագիտական զարգացում

- Հայտնի է, որ կրթության որակը կախված է մանկավարժական կրթության որակից: Հայաստանում իրականացվում է մանկավարժական կրթության զուգահեռ մոդելը: Մանկավարժական կրթությունը դեռևս համընթաց չէ համակարգի փոփոխություններին, քանի որ տեսական մոտեցումները դեռևս գերիշխում են, իսկ գործնական հմտությունների զարգացմանը նպաստող մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ձևն ու ժամաքանակը չի բավարարում այդ հիմնախնդիրը լուծելուն:
- Ինչ վերաբերվում է մանկավարժական կադրերի մասնագիտական զարգացմանը, ապա Հայաստանում այդ ուղղությամբ գործում են 2-ը՝ վերապատրաստումները և մեթոդական հանդեսների տպագրությունը:

ՀԲ-ի վարկային ծրագրի շրջանակներում, 2008 թվականին, 52 դպրոց-կենտրոններում օտար լեզուների ուսուցիչները անցնելու են 8-օրյա վերապատրաստում նոր ծրագրերի, դասագրքերի, համագործակցային ուսուցման մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ: Կրթության ազգային ինստիտուտի կողմից հրատարակվում են «Օտար լեզուները Հայաստանում» և "Русский язык в Армении" մեթոդական հանդեսները, որոնք անվճար տրվում են դպրոցներին:

Այսօր անհրաժեշտ է վերապատրաստումներ կազմակերպել՝ հաշվի առնելով ուսուցիչների կարիքները, նրանց պատվերները, նրանց զինել տեսական գիտելիքներով, անցկացնել դասերի համատեղ լսումներ և քննարկումներ, որովհետև շատ ուսուցիչներ, օրինակ, ուսուցման գործընթացում օգտագործում են ինտերակտիվ մեթոդները, սակայն միշտ չէ, որ հաշվի են առնում նրանց նպատակահարմարությունը: Ոչ բոլոր դպրոցները ֆինանսական հնարավորություններ ունեն վճարելու իրենց ուսուցիչների վերապատրաստման համար: Այդ բացը լրացնում են պետությունը, միջ-

ազգային կազմակերպությունները, Հայաստանում գործող դեսպանատները:

Կրթության ազգային ինստիտուտին կից ստեղծված են նաև օտար լեզուների (ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն) առարկայական հանձնաժողովներ, որոնք քննարկում են այլ լեզուների դասավանդման ծրագրերը, դասագրքերը, մեթոդական ձեռնարկները, քննական թեստերը, իրենց կարծիքները, տեսակետներն ու դիրքորոշումներ են ձևավորում դասավանդման նոր մեթոդների և այլ գործընթացների վերաբերյալ:

Մասնագիտական զարգացման գործում լուրջ ներդրում են ունենում ՀԿ-ները: Մասնավորապես, «Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիան» լուրջ աշխատանքներ է իրականացնում կազմակերպելով միջազգային գիտաժողովներ, սեմինարներ, տեսագործնական հարցերի քննարկումներ նաև արտերկրի մասնագետների մասնակցությամբ, հրատարակում է միջազգային գիտական հանդես: Ասոցիացիայի անդամները ելույթներ են ունենում արտասահմանում ներկայացնելով Հայաստանի լեզվաքաղաքականության հարցերը: (Ավելի մանրամասն տես 11.2)

9.5. Լեզվի մասնագետների պահանջարկը աշխատաշուկայում

Վերջին տարիներին էապես աճել է լեզուների մասնագետների պահանջարկն աշխատաշուկայում: Այդուհանդերձ, ըստ հետազոտությունների, աշխատաշուկայում մեծ պահանջարկ են վայելում այն մասնագիտությունները (ռուս բանասիրություն, ֆրանսերեն, գերմաներեն), որոնց գծով դիմորդները վերջին տարիներին նվազել են: Սա նշանակում է, որ բարձրագույն մասնագիտական կրթությունը ոչ միշտ է հիմնվում աշխատաշուկայի պահանջարկի վրա: Ըստ երկու ցուցանիշների՝ ՀՀ աշխատաշուկայում ունեցած պահանջարկի և մասնագետների պատրաստման գործընթացին տրված գնահատականների, մասնագիտությունները կարելի է բաժանել չորս խմբի:

Աղյուսակ 9.4.

Մասնագիտությունների դասակարգումը՝ ըստ ՀՀ աշխատաշուկայում առկա պահանջարկի և դրանց ոլորտում մասնագետների պատրաստման գործընթացի գնահատականների

	ՀՀ աշխատաշուկայում համեմատաբար մեծ պահանջարկ ունեցող մասնագիտություններ	ՀՀ աշխատաշուկայում համեմատաբար նվազ պահանջարկ ունեցող մասնագիտություններ	
Մասնագետների պատրաստման գործընթացը գնահատվել է համեմատաբար բարձր	<p><u>ըուս բանասիրություն,</u> <u>ֆրանսերեն և գերմաներեն լեզուներ,</u> բուժական գործ, երաժշտական մասնագիտություններ, սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք, բուժկանխարգելում և դեղագիտություն</p>	<p>քիմիա, ֆիզիկա, աշխարհագրություն, պատմություն, արևելագիտություն, ֆիզկուլտուրա, աստվածաբանություն, ընդերքաբանություն, էներգետիկա և էլեկտրոտեխնիկա, հոգեբանություն և փիլիսոփայություն, <u>անգլերեն լեզու,</u> իրավագիտություն, ռեժիսուրա և դերասանական արվեստ</p>	+
Մասնագետների պատրաստման գործընթացը գնահատվել է համեմատաբար ցածր	<p>ինֆորմացիոն-համակարգչային տեխնոլոգիաներ և ծրագրավորում, մանկաբուժություն, ճարտարապետություն և շինարարական մասնագիտություններ, լրագրություն, գեղարվեստի մասնագիտություններ, տնտեսագիտական մասնագիտություններ</p>	<p>միջազգային հարաբերություններ, ռադիոտեխնիկա և կապի համակարգեր, տրանսպորտային համակարգեր, անասնաբուժություն և անասնաբուծություն, պարենամթերքի տեխնոլոգիա, թեթև արդյունաբերություն</p>	-
	+	-	

Փաստորեն, բոլոր օտար լեզուների մասնագետների պատրաստման գործընթացը բարձր է գնահատված: Բայց ռուսերենի, ֆրանսերենի, գերմաներենի մասնագետների մեծ պահանջարկ կա, մինչդեռ անգլերենի մասնագետները նվազ պահանջված են:

9.6. Հետրուսական կրթություն

Օտար լեզուների ուսուցումը կարևորվում է նաև հետբուսական կրթության աստիճանում: Բոլոր մասնագիտությունների գծով դիմորդները հանձնում են ընդունելության քննություն օտար լեզվից և թեկնածուական միմիում:

2007թ-ից սկսած ներդրվում է օտար լեզուներից ընդունելության քննությունների նոր համակարգ: Նոր համակարգի ներդրումից առաջ անցկացվել են ասպիրանտական տեղերի հավակնորդների նախնական թեստավորում և դասընթացներ: Պետական ֆինանսավորմամբ¹⁶ դասընթացներին մասնակցել են անգլերենի 654 (TOEFL), ֆրանսերենի 73 (TCF), գերմաներենի (DaF) 34 հավակնորդներ: Թեև ասպիրանտների համար նախապատրաստական դասընթացներ են անցկացվում TOEFL, TCF և DaF ծրագրերով քննությունների համար, այդուհանդերձ, մասնագիտական կրթության աստիճանում օտար լեզուների ուսուցման և նշված քննությունների պահանջների միջև կան անհամապատասխանություններ: Նոր համակարգի ներդրումը որոշակի բանավեճերի և տարակարծությունների տեղիք է տվել:

9.6.1. Լեզվաբանական մասնագիտություններ

Անգլերենի քննությանը մասնակցել է 863 հավակնորդ, որոնց 49%-ը հաղթահարել է սահմանված շեմը¹⁷:

Բանասիրական մասնագիտությունների գծով անգլերենից քննություն է հանձնել 55 դիմորդ, որոնցից միայն 23-ն է հաղթահարել սահմանված շեմը:

Ֆրանսերեն լեզվի քննությանը մասնակցել է 67 հավակնորդ, որոնցից 38-ը հաղթահարել է շեմը (մասնակիցների 57%-ը): Բանասիրական մասնագիտությունների գծով քննությանը մաս-

¹⁶ Հավակնորդն իրավունք է ունեցել նաև ինքնուրույն վճարել ծախսերը: Այստեղ ներկայացված են այն հավակնորդների տվյալները, որոնց համար վճարել է պետությունը:

¹⁷ Տարբեր մասնագիտությունների համար տարբեր շեմեր են սահմանվել: Ամենաբարձրը՝ բանասիրական մասնագիտությունների համար:

նակցել են 24 հավակնորդ, որոնցից միայն 3-ն են հաղթահարել սահմանված շեմը:

Գերմաներեն լեզվի քննությանը մասնակցել է 32 հավակնորդ, որոնցից 9-ը հաղթահարել է շեմը (մասնակիցների 28 %-ը): Բանասիրական մասնագիտությունների գծով քննությանը մասնակցել են 6 հավակնորդներ, որոնցից ոչ մեկին չի հաջողվել հաղթահարել շեմը:

9.6.2. Ոչ լեզվաբանական մասնագիտություններ

Հասարակագիտական մասնագիտությունների գծով անգլերենից քննություն է հանձնել 476 դիմորդ, որոնցից 276-ը հաղթահարել է սահմանված շեմը:

Բնագիտական մասնագիտությունների գծով քննություն է հանձնել 262 դիմորդ, որոնցից 122-ը հաղթահարել է սահմանված շեմը:

Հասարակագիտական մասնագիտությունների գծով ֆրանսերենի քննությանը մասնակցել է 29 դիմորդ, որոնցից 21-ը հաղթահարել է սահմանված շեմը: Բնագիտական մասնագիտությունների գծով քննությանը մասնակցել է 22 դիմորդ, որոնցից 14-ը հաղթահարել է սահմանված շեմը:

Հասարակագիտական մասնագիտությունների գծով գերմաներենի քննությանը մասնակցել է 20 դիմորդ, որոնցից 5-ը հաղթահարել է սահմանված շեմը: Բնագիտական մասնագիտությունների գծով քննությանը մասնակցել է 6 դիմորդ, որոնցից 4-ը հաղթահարել է սահմանված շեմը:


Տվյալները վկայում են, որ դիմորդների զգալի մասը չի հաղթահարել անգլերենի քննությունը: Ցածր արդյունքներ են արձանագրել նաև հասարակագիտական մասնագիտությունների այն դիմորդները, ովքեր քննություն են հանձնել գերմաներենից:

9.6.3. Ասպիրանտների մերկայացվող բովանդակային պահանջները

Լեզվաբանական մասնագիտություններով սովորող ասպիրանտները որակավորման քննություններ են հանձնում օտար լեզվից: Վ.Բրյուսովի անվան համալսարանում բովանդակային պահանջների մեջ մտնում են 25-ական հարց բառագիտություն, ոճաբանություն, տեսական քերականություն, դարձվածաբանություն բաժիններից: Ասպիրանտը ներկայացնում է նաև իր կատարած հետազոտական աշխատանքը: ԵՊՀ-ում որակավորման քննության

ծրագրում ընդգրկված են հնչյունաբանության, գործաբանական լեզվաբանության, տեքստի մեկնաբանության, գործառական ոճագիտության, քերականության արդիական հարցեր, թարգմանության տեսություն:

**Բանասիրական մասնագիտությունների գծով սովորող
ասպիրանտների թիվը՝ ըստ տարիների**



Գծապատկեր 9.8.

Այն ասպիրանտները, որոնք սովորում են ոչ լեզվաբանական մասնագիտություններով, կարող են հանձնել մինիմում օտար լեզվից, բայց կարող են նաև փոխանցել ընդունելության քննության գնահատականը:

Ըստ ԱՎԾ տվյալների, 2006թ.-ին բանասիրական մասնագիտությունների գծով ասպիրանտուրա են ընդունվել 32 ուսանող, որոնցից 24-ը՝ անվճար համակարգ:

10. ՏՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՍ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

10.1. ՀՀ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները

Հայաստանի Հանրապետությունում փոքրամասնությունների լեզուներն են. ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը, քրդերենը, որոնք, ըստ էության, ազգային փոքրամասնությունների լեզուներ են և միայն համապատասխան ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն են, որ ավանդականորեն խոսել են այդ լեզուներով և բերել դրանք Հայաստան: Այդ ազգային փոքրամասնություններից ոչ մեկը ՀՀ-ում բնիկ (ավտոխտոն) չէ և ավանդականորեն ու պատմականորեն չի կապվում որևէ տարածքի հետ, թեև կան առանձին ոչ մեծ բնակավայրեր (գյուղեր), որոնք առավելապես համալրված են այդ փոքրամասնություններով:

Միայն ռուսերենն է, որին տիրապետում են նաև մեծ թվով ոչ ռուսներ (ռուսերենը ՀՀ բնակչության մոտ 85%-ի երկրորդ լեզուն է, 13%-ի՝ առաջին լեզուն):

Ինչպես նշվում է Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կատարման մասին Հայաստանի Հանրապետության 2-րդ գեկույցում (2007թ) «...Հայաստանում բացակայում է տարածաշրջանային լեզվի խնդիրը և Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան, ստանձնել է մշակել քաղաքականություն և սահմանել գործողությունների ծրագիր միայն ազգային փոքրամասնությունների լեզուների (ռուսերեն, հունարեն, եզդիերեն, քրդերեն, ասորերեն) պաշտպանության և զարգացման ուղղությամբ»:

Հարցը կարող էր վիճելի համարվել, քանի որ վերոհիշյալ համայնքները, ինչպես նշվեց, ի հայտ են գալիս Հայաստանում 19-րդ դարի 20-ական թվականներից սկսած, սակայն Հայաստանը, անկախ ամեն ինչից, պետական պաշտպանության ու հովանավորության տակ է առել Հայաստանում ապրող նաև մյուս ազգությունների (խարտիայի պահանջներում չընդգրկված) լեզուներն ու մշակույթը, իսկ վերոհիշյալ 5 լեզուների նկատմամբ հատուկ պարտականություններ է ստանձնել: Մանավանդ, որ դրանցից 3-ը

(ասորերեն, եզդիերեն, քրդերեն) որևէ երկրում պետական լեզու չեն¹⁸:

ՀՀ տարածքում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ո՞ր լեզուներն են համարում մայրենի:

Աղյուսակ 10.1.

ՀՀ փոքրամասնությունների լեզուներով խոսողների թիվը¹⁹

Լեզուն	Քանի՞ մարդ է այն համարում իր մայրենի լեզուն
ասորերեն	3150 մարդ (ՀՀ-ում բնակվող ասորիների մոտ 90%-ը)
եզդիերեն	32400 մարդ (ՀՀ-ում բնակվող եզդիների մոտ 80%-ը)
հունարեն	750 մարդ (ՀՀ-ում բնակվող հույների մոտ 58%-ը)
քրդերեն	1250 հազար մարդ (ՀՀ-ում բնակվող քրդերի մոտ 78%-ը)

Նշված մարդկանցից ոչ բոլորն են տիրապետում իրենց մայրենի լեզվին (հավաստի տվյալներ չկան, թե որքանը և ինչ չափով): Համեմայն դեպս, այդ լեզուներին տիրապետողների քանակը չի գերազանցում նշված թվերը (օրինակ՝ ասորերեն բանավոր խոսքին տիրապետում է ասորիների 80%-ը, գրավոր խոսքին՝ 2%-ը): Ռուսերենն իր մայրենի լեզուն է համարում ՀՀ-ում բնակվող ռուսների մոտ 98%-ը (14,5 հազ. մարդ):

Ուկրաիներենին, բելառուսերենին, լեհերենին, վրացերենին, եբրայերենին և այլն ՀՀ-ում այս կամ այն չափով տիրապետում են առանձին անհատներ:

Ասորիներին, եզդիներին, քրդերին, հույներին բնորոշ է խարտիայի պահանջների իմաստով ՀՀ օրենսդրությամբ ընձեռնված

¹⁸ Ավելի մանրամասն տե՛ս Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետության 1-ին և 2-րդ զեկույցները (2003թ., 2007թ.), ինչպես նաև Փորձագետների կոմիտեի զեկույցը և Եվրախորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականը Հայաստանում խարտիայի կիրառման վերաբերյալ (2006թ.):

¹⁹ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետության առաջին զեկույցը: Երևան, 2003:

հնարավորությունների թերօգտագործումը հատկապես կրթության և լրատվության բնագավառներում:

Ասորիներն ու հույները հաճախ իրենց լեզվի փոխարեն նախընտրում են ռուսերենը՝ հրատարակելով ռուսերեն մամուլ, ստանալով ռուսական կրթություն և ի վերջո դառնալով ռուսախոս: Դա նպաստում է հայախոս միջավայրից նրանց մեկուսանալուն և ՌԴ արտագաղթելուն:

Շատ քիչ թվով այլազգիներ կան Հայաստանում, որ հայերենը համարում են իրենց առաջին լեզուն: Այդպիսիք հանդիպում են եզդիների, հույների, ասորիների միջավայրում: Հայերի հետ այլ էթնիկ քաղաքացիներով բնակեցված խառը բնակավայրերում հայերի նկատելի մասը այս կամ այն չափով տիրապետում է ազգային փոքրամասնության լեզվին: Այդպես ասորական Դիմիտրով, Վերին Դվին գյուղերում ապրող հայերի մի մասը կարող է խոսել ասորերեն, եզդի բնակչություն ունեցող Ամրե Թազա/Սադունց, Ալազյազ, Դերեկ, Ջամշու. Ավշեն, Երասխահուն, Ջովունի և այլ գյուղերում ապրող հայերը այս կամ այն չափով տիրապետում են եզդիերենին:

Փոքրամասնությունների լեզուների իրավունքների պաշտպանության առումով Հայաստանում գոյություն ունեն մի շարք խնդիրներ. դրանց մի մասը իրավական են, մյուսները պայմանավորված են Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմաններով (օրինակ, դպրոցների ֆիզիկական վիճակը և կադրային հագեցվածությունը և այլն):

Սրանք Հայաստանի Հանրապետության համար ընդհանուր պրոբլեմներ են, բայց, բնականաբար, անդրադառնում են նաև ազգային փոքրամասնությունների և նրանց լեզվի ու մշակույթի պաշտպանության ու զարգացման վրա:

2004թ. հունվարին ձևավորվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը, որը, ի թիվս այլոց, զբաղվում է նաև ազգային փոքրամասնությունների լեզուների հարցերով:

2007թ.-ից տարածքային կառավարման մարմիններում մարզպետարաններում գործում են ազգային փոքրամասնությունների իրավունքների հարցերով պատասխանատուներ:

10.2. Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվական իրավունքները

ՀՀ Սահմանադրությունը և Լեզվի մասին օրենքը պաշտպանում են ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունք-

ները: Լեզվի մասին ՀՀ օրենքի առաջին հոդվածի համաձայն «Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը»:

Նույն օրենքի հաջորդ հոդվածը սահմանում է, որ ազգային փոքրամասնությունների համայնքներում կրթությունը և ուսուցումը կարող է իրականացվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրերով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Բնական է, որ Հայաստանի բնակիչների համար, ներառյալ ազգային փոքրամասնությունները, հայերենի իմացությունը պարտադիր է, և դրա նպատակը բռնի «հայացումը» չէ, այլ հասարակության մեջ սոցիալական ներդաշնակ և խաղաղ հարաբերություններ ապահովելը: Չմայած ազգային փոքրամասնությունները համեմատաբար սակավաթիվ են Հայաստանում, ընդհանուր առմամբ նրանք կազմում են բնակչության մոտավորապես 2 տոկոսը, բայց նրանց դերն ու կարևորությունն առավել մեծ է:

Միջազգային հարաբերությունների լարվածությունը կանխող գործոն լինելուց բացի, ինչպես նշված է լեզվաքաղաքականության պետական ծրագրում, «ազգային փոքրամասնությունների լեզուները Հայաստանի Հանրապետության լեզվամշակույթի անբաժան մասն են, նրա հարստությունը: Այդ լեզուների նկատմամբ պետական հոգածությունը մեր երկրի ժողովրդավարացման հետագա ընթացքի և քաղաքացիական հասարակության զարգացման համար ունի հանգուցային նշանակություն»:

Հայաստանի Հանրապետությունը հատուկ պատասխանատվություն է կրում երկրում այն փոքրամասնությունների լեզվի և մշակույթի պահպանման համար, որոնք չունեն ազգային պետական համակարգ: Դա հատկապես վերաբերում է ասորիներին և եզդիներին: Հայաստանը միակ երկիրն է, որտեղ այս լեզուները ուսուցանվում են դպրոցներում և որտեղ դրանք ներկայացվում են ԶԼՄ-ներում:

Ներկայումս Հայաստանում հայերի և ազգային փոքրամասնությունների ազգագրական պատկերը մոտավորապես հետևյալն է.

Աղյուսակ 10.2.

ՀՀ մշտական բնակչության բախշունը քաղաքներում և գյուղերում²⁰

	ԱԶԳՈՒԹՅՈՒՆԸ							
	Հայեր	Ասորի-ներ	Եզդիներ	Հույներ	Ռուսներ	Ուկրաի-նացիներ	Քրդեր	այլ
Ընդամենը	3145354	3409	40620	1176	14660	1633	1519	4640
Քաղաք	2041622	524	7413	853	10489	1386	315	3551
Գյուղ	1103732	2885	33207	323	4171	247	1204	1089

Խորհրդային ժամանակաշրջանում, ռուսերենից, ադրբեջաներենից և քրդերենից բացի մնացած բոլոր փոքրամասնությունների լեզուները սովորեցնելը ոչ միայն չէր խրախուսվում, այլ անգամ արգելվում էր, ինչպես, օրինակ, ասորերենի դեպքում: Այս պատճառով որոշ ազգային փոքրամասնությունների համար մի տեսակ հակասություն է առաջ գալիս իրենց մայրենի և ազգային լեզուների միջև, և իրենց մայրենի լեզուն դարձել է ռուսերենը: Այսպիսի դեպքերում նրանք հաճախում են ռուսերեն դասերի, որտեղ նրանց ազգային լեզուները (ասորերեն, հունարեն, որոշ տեղերում՝ քրդերեն) աստիճանաբար նույնպես ներկայացվում են: Ներկայումս Հայաստանի դպրոցներում ուսուցանվում է եզդիերեն, քրդերեն, ասորերեն և հունարեն, իսկ մեկ դպրոցում՝ վրացերեն:

Մյուս փոքրամասնությունները թվաքանակով քիչ են և խիտ բնակեցված վայրեր չունեն, բայց նրանք, տեղական կառավարման մարմինների օգնությամբ, իրականացնում են մայրենի լեզվի ուսուցում՝ ազգային մշակութային կենտրոնների և կիրակնօրյա դպրոցների միջոցով: Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիային միանալուց հետո Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է նաև լրացուցիչ պարտականություններ:

Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության ռազմավարական նպատակն է ստեղծել մի հասարակություն, որտեղ կապահովվի հայերենի բնականոն զարգացումը և համընդհանուր իմացությունը, ազգային փոքրամասնությունների լեզուները կպահպանվեն և կզարգանան, քաղաքացիները կտիրապետեն նվազագույնը երկու օտար լեզվի: Լինելով էթնիկ

²⁰ Հայաստանի Հանրապետության երկրորդ զեկույցը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, Երևան, 2007:

առումով միատարր պետություն՝ Հայաստանը ձգտում է միևնույն ժամանակ ստեղծել բազմալեզու հասարակություն:

10.3. Փոքրամասնությունների հանրակրթությունը Հայաստանում²¹

10.3.1. Նախադպրոցական կրթություն

Հայաստանի Հանրապետությունը աջակցում է պաշտպանության տակ առնված լեզուների կրող ազգային փոքրամասնությունների համայնքներին՝ կազմակերպելու նախադպրոցական կրթության հիմնական մասը համապատասխան լեզուներով: Աջակցությունը կայանում է նախ և առաջ նրանում, որ «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ ԿԳ նախարարի 26 հունվարի 2007թ. N 29-Ն հրամանով երեխաների խմբերի խտության հավելվածում առանձին դրույթ է հատկացված ազգային փոքրամասնության երեխաներով խմբերի գործարկման հնարավորությանը թերկոմպլեկտավորված համակազմով: Այսպես, եթե հայկական նախադպրոցական հաստատություններում մանկապարտեզային խմբերում երեխաների համակազմի ցուցանիշները սահմանված են 25-30, ապա ազգային փոքրամասնություններով երեխաների խմբերի գործարկումը թույլատրվում է 8-10 երեխայի առկայության դեպքում: Չնայած մեր հույսերին, որ այս ծանրաբեռնվածությամբ թույլտվությունը կիսանի նման երեխաների ընդգրկումը նախադպրոցական կրթության մեջ, այնուամենայնիվ առայժմ արդյունքները բավարար չեն: ՀՀ նախադպրոցական կրթության մասին 2005թ. նոյեմբերի 15-ին ընդունված օրենքի համաձայն նախադպրոցական կրթության ոլորտի

²¹ Այս բաժինը շարադրելիս հիմնվել ենք հետևյալ փաստաթղթերի նյութերի, փաստերի և վերլուծությունների վրա.

- Հայաստանի Հանրապետության երկրորդ զեկույցը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, Երևան, 2007:

- Եվրոպական խարտիան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ: Խարտիայի կիրառումը Հայաստանում: Խարտիայի Փորձագետների կոմիտեի զեկույցը, Ստրասբուրգ, 14.06.2006 թ.

- Tytti Isohookana-Asunmaa. *Education Policy and Minorities in Armenia*. 2nd draft version, 2003.

պետական քաղաքականության իրականացումն ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինները:

Եզդիերեն և քրդերեն խոսողների նախադպրոցական կրթական հաստատություններ կազմակերպելու համար նրանց բնակավայրերի տեղական ինքնակառավարման մարմինները քայլեր չեն ձեռնարկում՝ պատճառաբանելով նյութական միջոցների սղությամբ: Իրականում որոշ համայնքներում նախադպրոցական տարիքի երեխաների թիվն այնքան փոքր է, որ շատ դժվար է դառնում կազմակերպել նախադպրոցական կրթությունը կամ դաստիարակությունը:

Ասորերենի ուսուցմամբ նախադպրոցական կրթական հաստատությունների ստեղծման ուղղությամբ արվել են առաջին քայլերը: 2006թ.-ից ասորաբնակ Վերին Դվին գյուղի դպրոցի շենքում կազմակերպվում է ասորի երեխաների նախադպրոցական կրթությունը: Արարատի մարզի Դմիտրով ասորաբնակ գյուղում գործում է 1 մանկապարտեզ (ընդգրկվածությունը՝ 25 երեխա, դաստիարակների թիվը՝ 3), որն առայժմ հայերենի ուսուցմամբ է, սակայն աշխատանքներ են տարվում ավելացնելու երկրորդ խումբը՝ ասորերենի ուսուցմամբ:

ՀՀ-ում ռուսերենով նախադպրոցական ուսումնական հաստատություններ կամ խմբեր (բաժիններ) կան բոլոր այն բնակավայրերում, որտեղ բնակվում են բավարար քանակությամբ ռուսներ: Սյուս նախակրթարանների մեծ մասում կազմակերպված է ռուսերենի ուսուցում ըստ ծնողների ցանկության: Երևանի բոլոր, Գյումրի քաղաքի թիվ 4, 6, 8, 11, 15, 16, 18, 23, 26, 27, 30 նախակրթարաններում և այլն: Այս հաստատությունները կամ բաժինները բաց են նաև այն փոքրամասնությունների համար, որոնք գերադասում են ռուսերեն լեզվով կրթությունը:

Հունարենի ուսուցմամբ խմբակ կա Երևանի թիվ 52 մանկապարտեզում՝ հունական համայնքի ներկայացուցիչներից մեկի նախաձեռնությամբ: Այստեղ երեխաներին հունարեն են սովորեցնում ծնողների ցանկության դեպքում՝ անկախ նրանից, թե երեխան որ ազգին է պատկանում:

10.3.2. Տարրական դպրոց

Լեզվի մասին օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված է, որ ազգային փոքրամասնությունների համայնքներում ընդհանուր կրթությունը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով պետական ծրագրերով և պետության հովանավորությամբ հայերենի պարտադիր ուսուցմամբ: Նույն

օրենքի հողված առաջինը հռչակում է, որ «*Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է իր տարածքում ազգային փոքրամասնությունների կողմից իրենց լեզվի ազատ օգտագործումը*»:

Կրթության ազգային ինստիտուտի կողմից կազմվել և ներդրվել է «Ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցի (դասարանների) օրինակելի պլանը», որի համաձայն ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի և գրականության ուսուցման համար 1-10 դասարաններին հատկացված է շաբաթական 42 ժամ:

ՀՀ բոլոր հանրակրթական հայկական դպրոցներում **ռուսաց** լեզուն և գրականությունը դասավանդվում է 2-10-րդ դասարան: Ուսուցումն իրականացվում է Հայաստանում և հրատարակված դասագրքերով, որտեղ հաշվի են առնվել ազգային դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման առանձնահատկությունները: ՀՀ կառավարության որոշմամբ 16/11/99թ. բացվել են ռուսերենի խորացված ուսուցմամբ դպրոցներ՝ թվով 60-ը, որտեղ առարկան դասավանդվում է առաջին դասարանից: Այդ դպրոցների համար մշակվել և հրատարակվել են հատուկ դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ:

ՀՀ պաշտպանության տակ առնված լեզուների կրող ազգային փոքրամասնությունների համայնքներին մատչելի է տարրական կրթությունը համապատասխան լեզուներով, կամ տարրական կրթության շրջանակներում ապահովվում է համապատասխան փոքրամասնությունների լեզուների ուսուցումը՝ որպես ուսումնական ծրագրի անբաժանելի մաս, առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնց ընտանիքներն այդպիսի հայտ են ներկայացրել, և որոնց թիվը համարվում է բավարար:

Իրականում այդ ուսուցումը կազմակերպվում է նույնիսկ աշակերտների անբավարար թվի դեպքում: Օրինակ, ասորերեն լեզվի ուսուցումը տարրական դասարաններում իրականացվում է Վերին Դվին, Դմիտրով, Արզնի գյուղերում միջնակարգ դպրոցի տարրական դասարաններում և Երևանի 8-րդ դպրոցի ասորալեզու դասարաններում նույնիսկ 2-3 երեխաների առկայության դեպքում:

Եզդիերեն և քրդերեն լեզվի ուսուցումը եզդիներով և քրդերով բնակեցված գյուղական համայնքների տարրական դասարաններում իրականացվում է այն բոլոր դպրոցներում, որտեղ կա համապատասխան մասնագետ՝ անկախ այն բանից, թե քանի երեխա է սովորում տվյալ դասարանում):

Տարրական կրթության շրջանակում (2-3-րդ դասարաններում) **հունարեն** լեզվի ուսուցումը 1996թ.-ից Հայաստանում

Հունաստանի դեսպանատան աջակցությամբ և ֆինանսավորմամբ կատարվում է Երևան քաղաքի թիվ 74 միջնակարգ դպրոցում որպես պարտադիր առարկա և թիվ 12 ու 132 դպրոցներում՝ ըստ ցանկության: Հունարեն անցնում են նաև Վանաձորի դպրոցներից մեկում: **Հունարեն** լեզվի ուսուցումը միջնակարգ կրթության շրջանակում (3-9-րդ դաս.) կատարվում է նույն դպրոցներում՝ դարձյալ դեսպանատան աջակցությամբ և ֆինանսավորմամբ:

Դասագրքեր

ՀՀ գիտության և կրթության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի օժանդակությամբ 2005-2006թթ. իրականացվել է «Եզդիերեն լեզվի և գրականության» 1-3-րդ դասարանների դասագրքերի հրատարակությունը: Ինչպես ասվեց, առարկան անցնում են եզդիներով և քրդերով բնակեցված բոլոր համայնքների դպրոցներում, որտեղ համապատասխան մասնագետ կա: Աշխատանքներ են տարվում մասնագետների կազմը համալրելու և բոլոր համայնքներում մասնագետներ ունենալու ուղղությամբ: Քրդական համայնքի կյանքում նշանակալի իրադարձություն էր 2002թ. Երևանում լույս տեսած «Ձմանն դե» այբբենարանը՝ ՀՀ Գրողների Միության քրդական բաժնի նախագահ Կառլենե Չաչանիի հեղինակությամբ:

2005թ. հրատարակվել է առաջին դասարանի **ասորերենի** դասագիրքը, իսկ 2007թ. ՀՀ գիտության և կրթության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի կողմից հրատարակվել է «Ասորերենի այբբենարանը» տարրական դասարանների համար: Ասորերեն լեզվի նոր դասագրքով 2006-2007թթ. ուսումնական տարվա ընթացքում ուսանել են Արարատի մարզի Վերին Դվին գյուղի 70, Դմիտրով գյուղի 15 և Կոտայքի մարզի Արզնի գյուղի տարրական դասարանների 38 աշակերտներ: Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղը նույնպես քայլեր է ձեռնարկում կազմակերպելու և իրականացնելու ասորերեն լեզվի ուսուցում, առաջմ լուծված է ասորերենի ուսուցչի վերապատրաստման խնդիրը: Երևանի Ա.Պուշկինի անվան (թիվ 8) դպրոցում իրականացվող ասորերենի դասընթացներից տարրական դասարաններում հաճախում է 5 երեխա:

10.3.3. Միջին դպրոց

Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների համայնքների ներկայացուցիչները ցանկության դեպքում հնարավորություն ունեն միջին դպրոցում նույնպես

կրթություն ստանալ համապատասխան ազգային լեզվով, կան միջին դպրոցի շրջանակներում ապահովվում է ազգային լեզուների ուսուցումը՝ որպես ուսումնական ծրագրի մաս:

Ասորերեն լեզվի ուսուցումը միջնակարգ կրթության շրջանակում իրականացվում է Երևանի թիվ 8 Ա.Պուշկինի անվան և Արարատի մարզի Վերին Դվին, Դմիտրով և Կոտայքի մարզի Արզնի գյուղերում:

Եզդիերենի և քրդերենի դասավանդում ներկա պահին իրականացվում է Երևանի և մարզերի 22 միջնակարգ դպրոցներում:

Հանրապետությունում կա միայն մեկ պետական ռուսական դպրոց (որտեղ դասավանդումն ամբողջովին իրականացվում է **ռուսերեն լեզվով**, Ֆիոլետովո գյուղում, ինչպես նաև երկու մասնավոր ռուսական դպրոցներ՝ Երևանում, «Սլավյանսկայա» և «Մաշտոց» (վերջինս ունի ռուսերենով ուսուցմամբ դասարաններ): 37 դպրոցում կան ռուսերենով դասավանդման հոսքեր՝ բոլոր դասարաններում: 37 դպրոցից 16-ը Երևանում են, 21-ը՝ մարզերում: Աշակերտների ընդհանուր թիվն այս դասարաններում կազմում է շուրջ 10.000 աշակերտ:

Հանրապետությունում անցկացվող դպրոցականների ամենամյա օլիմպիադաների առարկայացանկում տեղ է գտել նաև ռուսերեն լեզուն (դպրոցական, շրջանային, քաղաքային, մարզային, հանրապետական փուլեր): Կազմակերպվում են մրցույթներ և փառատոներ: Հայաստանի դպրոցականները մասնակցում են Ռուսաստանի Դաշնության կողմից անցկացվող ռուսաց լեզվի հեռավար (դիստանցիոն) օլիմպիադային և արդեն կա 3 հաղթող՝ Երևանից, Կապանից և Սիսիանից:

10.3.4. Ավագ դպրոց

Ավագ դպրոցում նույնպես ստեղծվել են փոքրամասնությունների լեզուների ուսուցման հնարավորություններ, մասնավորապես՝ ռուսերենի, ասորերենի և հունարենի դեպքում: Ինչ վերաբերում է քրդերեն-եզդիերենին, բարձր դասարաններում բնակիչների կողմից գրեթե պահանջարկ չկա:

Խնդիրներ կան նաև միջնակարգ դպրոցներն այդ լեզուներով դասավանդող ուսուցչական կադրերով ապահովելու հարցում, մասնավորապես աշխատանքներ են տարվում եզդիերենի, քրդերենի և ասորերենի մանկավարժական կադրեր պատրաստելու ուղղությամբ:

10.4. Մասնագիտական կրթություն

10.4.1. Միջին մասնագիտական կրթություն

Ազգային փոքրամասնությունների համայնքներին մատչելի է ցանկ տեխնիկական և մասնագիտական կրթությունը իրենց լեզուներով, կամ տեխնիկական և մասնագիտական կրթության շրջանակներում ապահովվում է փոքրամասնությունների լեզուների ուսուցումը:

Երևանի Բակունցի անվան մանկավարժական քոլեջում մի քանի տարի առաջ բացվել էին **եզդիական/քրդական** բաժիններ, որոնք երկու տարի անց դադարեցին գործել՝ դիմորդների բացակայության պատճառով:

Ասորական և հունական էթնիկ համայնքներից տեխնիկական կամ միջին մասնագիտական կրթություն ստանալու ցանկություն չի արտահայտվել: Միակ ցանկությունը, որ ներկայացվում է, բարձրագույն կրթությունն է:

Ռուսական բաժին կա Երևանի պետական հումանիտար քոլեջում: Տեխնիկական և մասնագիտական կրթական մյուս բոլոր հաստատություններում, իբրև օտար լեզու, ապահովված է ռուսերենի ուսուցումը՝ որպես ուսումնական ծրագրի մաս:

10.4.2. Բարձրագույն մասնագիտական կրթություն

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին ցանկության դեպքում մատչելի է բարձրագույն կրթությունը համապատասխան լեզուներով կամ բարձրագույն կրթության շրջանակներում ապահովվում փոքրամասնությունների լեզուների ուսուցումը՝ որպես ուսումնական ծրագրերի մաս:

Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում դասավանդվում են **եզդիերեն/քրդերեն, ասորերեն**: Եզդիերեն/քրդերենը բարձրագույն կրթությունում որպես առանձին լեզուներ տարանջատված չեն, քանի որ Հայաստանում երկու էթնիկ խմբերն էլ գործածում են նույն լեզուն: Ֆակուլտետում այս պահին սովորում են ազգությամբ 3 ասորի և 1 քուրդ ուսանողներ, ովքեր կարող են աշխատել որպես իրենց մայրենի լեզվի ուսուցիչներ:

Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում մագիստրատուրայում 2005-06 ուս. տարվանից դասավանդվում է դասական ասորերեն:

«Ասորագիտություն» մասնագիտությունն է առաջարկում նաև «Ռավիթ Անհաղթ» ոչ պետական համալսարանը, իսկ «Եզդիերեն» մասնագիտությունն առաջարկում է Երևանի մեներջմենթի համալսարանը:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում ռուսերեն լեզուն որպես պարտադիր առարկա ունկնդրում են Երևանի պետական համալսարանի 308, Բոյուսովի անվան լեզվաբանական համալսարանի 493, Երևանի մանկավարժական համալսարանի 503, Գյումրիի պետական մանկավարժական համալսարանի 329, Վանաձորի պետական մանկավարժական համալսարանի 315, Գավառի պետական համալսարանի 104 և Ռուս-հայկական «Սլավոնական» համալսարանի 380 ուսանողներ:

Հունարեն լեզվի դասավանդումը որպես պարտադիր առարկա իրականացվում է Երևանի պետական համալսարանում և Բոյուսովի անվան լեզվաբանական համալսարանում: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում այս երկու բուհերում այս առարկան ունկնդրում են 140-150 ուսանող: Հունարենի ուսուցում առաջարկում են նաև այլ բարձրագույն կրթական հաստատություններ, ինչպես Երևանի «Սոնթ Մելքոնյան» և մեներջմենթի համալսարանները, Երևանի մշակույթի համալսարանում կա հունարենի բաժին, «Աճառյան» համալսարանն առաջարկում է *հունարենի* հատուկ դասընթացներ:

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի փորձագետների կոմիտեն, ուսումնասիրելով խարտիայի պահանջների իրագործումը Հայաստանում, ողջունել է այն փաստը, որ Հայաստանի իշխանությունները նպաստում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կրթության զարգացմանը հատկապես տարրական կրթության բնագավառում: Իրադրությունը ռուսերենի և հունարենի համար ընդհանուր առմամբ բավարար է: Սակայն ասորերենի, եզդիերենի և քրդերենի համար ուսուցիչների և ուսումնական նյութերի պակաս կա: Ուսուցիչների վերապատրաստումը և այս լեզուների հետազոտման և ուսուցման զարգացումը նույնպես անբավարար են, և շատ բան է մնում անելու նախադպրոցական և միջնակարգ կրթության բնագավառում²²:

²² Եվրոպական խարտիան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ: խարտիայի կիրառումը Հայաստանում: խարտիայի Փորձագետների կոմիտեի զեկույցը, Ստրասբուրգ, 14.06.2006 թ.:

10.5. Խարտիայի պահանջներում չընդգրկված լեզուների հրավիճակը²³

Ինչպես նշվեց, Հայաստանը պետական պաշտպանության ու հովանավորության տակ է առել նաև Հայաստանում ապրող մյուս ազգությունների (խարտիայի պահանջներում չընդգրկված) լեզուներն ու մշակույթը՝ ընդունելով և հարգելով նրանց մշակույթը, ավանդույթներն ու արժեքները:

Երևանում Հայաստանի կառավարության կողմից ֆինանսավորվում և հրատարակվում է երկլեզվյան (**ուկրաիներեն-հայերեն**) թերթ: Թերթը պարունակում է լուրեր Ուկրաինայից, իսկ թերթի մի հատվածը նվիրված է ուկրաիներենին:

Հրատարակվում է լեհական ամսագիր երեք լեզվով (**լեհերեն, հայերեն և ռուսերեն**): Հրատարակումներ կան նաև **բելոռուսերեն և գերմաներեն**:

Տեղի են ունեցել փոքրամասնությունների մշակույթների և լեզուների վրա ուշադրություն հրավիրող մի շարք փառատոներ (վրացերենի, եբրայերենի-իդիշի, բելոռուսերենի, լեհերենի, գերմաներենի, ուկրաիներենի) վրա: Այս գործունեությունը պետական ֆինանսավորում է ստացել Հայաստանի իշխանությունների և համապատասխան ազգակից երկրների կողմից:

Այլ լեզուներով կրթությունը

Գերմաներեն – Գերմանական համայնքի երեխաների համար կազմակերպվում են կիրակնօրյա դպրոցներ: Դասագրքերն ուղարկվում են Գերմանիայից:

«Գերմանական ուսումնամշակութային կենտրոն» հասարակական կազմակերպությունն, օրինակ, կազմակերպում և անցկացնում է գերմաներենի գործնական ուսուցման դասընթացներ նաև գերմանական համայնքի ներկայացուցիչների համար, կազմակերպվում են ազգային մշակութային տոներ:

Գերմաներենը, որպես օտար լեզու ուսուցանվում է համալսարանների մեծ մասում և գերմաներենի ուսուցման և ուսումնասիրության համար հատուկ ֆակուլտետներ կան Երևանի պետական համալսարանում և Երևանի պետական լեզվաբանական համալսարանում:

²³ Այս բաժնի համար տվյալները վերցված են հետևյալ փաստաթղթից «Եվրոպական խարտիան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ: Խարտիայի կիրառումը Հայաստանում: Խարտիայի Փորձագետների կոմիտեի զեկույցը», Ստրասբուրգ, 14.06.2006թ.:

Իդիշ – այս լեզվով խոսում են ավագ սերնդին պատկանող մոտավորապես 50-60 մարդ: Երիտասարդ սերունդը ավելի հակված է սովորելու եբրայերեն, և կազմակերպվել են **եբրայերենի** դասընթացներ երեխաների ու մեծահասակների համար, թեև կան ֆինանսական խնդիրներ: Իսրայելը տրամադրում է դասագրքեր:

Ուկրաիներեն – երեխաների համար կազմակերպվել է կիրակնօրյա դպրոց (շաբաթական երկու ժամ), որտեղ սովորեցնում են ուկրաիներեն, պատմություն և գրականություն՝ օգտվելով Ուկրաինայից ուղարկված դասագրքերից (2002թ. դասագրքեր է տրամադրել Ուկրաինայի արտաքին գործերի նախարարությունը): Ուկրաիներենը ուսուցանվում է Երևանի պետական լեզվաբանական համալսարանում:

Բելոռուսերեն – կազմակերպվել է կիրակնօրյա դպրոց մեծահասակների և երեխաների համար (շաբաթական 2 ժամ՝ 1 ժամ լեզու, 1 ժամ մշակույթ): Մշակութային միջոցառումները աջակցություն են ստանում բելոռուսական դեսպանության կողմից, և վերջինս օգնում է համայնքին դասագրքերով: Բացի այդ, Բելոռուսիայի կրթության նախարարությունը օժանդակում է գրականության ձեռքբերմանը (նրանց գրադարանն ունի 800 գիրք):

Լեհերեն – Երևանի թիվ 24 դպրոցում ուսուցանվում է լեհերեն: Երրորդ դասարանի մակարդակով այն ուսուցանվում է մեկ դասարանում և հայ երեխաները նույնպես կարող են լեհերեն սովորել: «Պոլոնիա» հասարակական կազմակերպությունը լեհերենի դասընթացներ է կազմակերպել շաբաթական երկու անգամ՝ Լեհաստանից հրավիրված երկու ուսուցիչներով. վեց խումբ կա մեծահասակների և երեք խումբ՝ երեխաների համար: Նույն կազմակերպությունը հիմնել է «Լեհական մշակույթի համալսարանը»: Երևանի պետական լեզվաբանական համալսարանում կա լեհերենի բաժանմունք, և ուսանողներ են գործուղվում Լեհաստան սովորելու: Նոր դասագրքերը՝ հիմնական և բարձրագույն կրթության համար, ուղարկվում են Լեհաստանից:

11. ՀԱՐԱՏԵՎ / ՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (LIFE LONG LEARNING)²⁴

11.1. Հարատև կրթության համակարգը Հայաստանում

Հարատև կրթության առաքելությունը բնակչության սոցիալական խավերի ներգրավվածությունն է ժամանակակից հասարակության և իննովացիոն տնտեսության և կրթական վերափոխումների գործընթացներում: Հարատև կրթությունը բարձրագույն կրթության ընդհանուր գործընթացի ինտեգրված մասն է, որը կոչված է «դիմագրավելու մրցունակության և նոր տեխնոլոգիաների օգտագործման, սոցիալական միահյուսման և համերաշխության զարգացման, հավասար հնարավորությունների և կյանքի որակի բարելավման մարտահրավերներին»²⁵:

Հարատև կրթության բովանդակության մասին չկա միասնական մոտեցում: Ինչպես նշվում է Եվրոպական հանձնաժողովի՝ Հարատև կրթության մասին հուշագրում²⁶, այն ընդգրկում է երեք հասկացություն.

- շարունակական կրթություն
- չափահասների կրթություն
- շարունակական մասնագիտական զարգացում (վերապատրաստում):

Հայաստանը դեռ չի ստեղծել անհրաժեշտ օրենսդրական և ինստիտուցիոնալ բազա՝ հարատև ուսումնառության գաղափարի իրագործման համար, հատկապես բարձրագույն կրթության մակարդակում:

Այսօր լեզուների ոլորտում շարունակական կրթությունը Հայաստանում իրագործվում է մասամբ բուհերում (ԵՊԼՀ

²⁴ Այս բաժինը շարադրելիս հիմնվել ենք Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոնի պատրաստած՝ «Բոլոնիայի գործընթացի առկա վիճակը, զարգացման միտումներն ու հիմնախնդիրները ԵԲԿՏ-ում և Հայաստանում» վերլուծական զեկույցի նյութերի վրա: (ՀՀ ԿԳՆ և ԿԱԻ, «Բարձրագույն կրթություն» տեղեկագիր, պրակ 4, էջ 300-314):

²⁵ Եվրոպական երկրների բարձրագույն կրթության նախարարների հանդիպման Պրահայի կոմյունիկե:

²⁶ European Commission (2000). Memorandum on Life Long Learning, Brussels, Commission of the European Communities

լեզուների կենտրոն, Հայաստանի ամերիկյան համալսարանի դասարնթացները և այլն), սակայն այդ գործով շատ ավելի ակտիվորեն զբաղվում են միջազգային կազմակերպությունների մասնաճյուղերը, հասարակական կազմակերպությունները (օտար լեզուների ուսուցիչների ընկերակցություններ) մասնավոր ուսումնական կենտրոնները («Եվա», «OK», «France Formation» և այլն):

11.2. Հասարակական կազմակերպություններ

Հանրապետությունում գործում են օտար լեզուների ուսուցիչների մասնագիտական ասոցիացիաներ, որոնք դարձել են մասնագիտական քննարկումների յուրահատուկ միջավայր: Այսպես օրինակ, Հայաստանում գործում են.

Գերմաներենի ուսուցիչների և գերմանագետների ասոցիացիան (ADV), որը ստեղծվել է 1993թ-ին, Գերմաներենի ուսուցիչների միջազգային ասոցիացիայի անդամ է, ունի 115 անդամ (նախագահ՝ Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Մ. Աստվածատրյան): Կազմակերպության գլխավոր նպատակը Հայաստանում գերմաներենի և գերմանական մշակույթի տարածումն է, որը նա իրականացնում է հանրապետության 6 մարզերում գործող իր մասնաճյուղերի միջոցով: Կազմակերպությունը զբաղվում է ոչ միայն գերմաներենի ուսուցման դասընթացներ կազմակերպելով, այլ նաև ուսուցիչների վերապատրաստմամբ, կազմակերպում է գերմաներեն լեզվի և մշակույթի շաբաթներ, գերմանախոս երկրների մշակույթին նվիրված օրեր, գիտաժողովներ և այլն:

Անգլերեն լեզվի ուսուցիչների և դասախոսների ասոցիացիան (Association of English Language Teachers of Armenia - AELTA), ստեղծվել է 1995թ-ին, ունի 200 անդամ և 2 մասնաճյուղ: Կազմակերպությունը զբաղվում է անգլերենի ուսուցմամբ, աջակցում է անգլերենի ուսուցիչներին՝ անգլերենի և դասավանդման նորագույն մեթոդների ու չափորոշիչների մասին տեղեկատվության տարածմամբ:

Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիան հիմնադրվել է հաստատվել է որպես Անգլերենի ուսումնասիրության եվրոպական ֆեդերացիայի անդամ 2003թ.-ի սեպտեմբերին (Ասոցիացիայի նախագահ՝ ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Բ. Գասպարյան): Կազմակերպությունը կազմակերպում է անգլերեն լեզվին, գրականությանը և մշակույթին նվիրված

գիտաժողովներ և սեմինարներ, նպաստում է անգլերենի մասնագետների համագործակցությանը և փորձի փոխանակմանը, աջակցում է Հայաստանի տարբեր շրջանների բարձրագույն կրթության համակարգի դասախոսներին: Պարբերաբար հրատարակում է իր ակադեմիական ամսագիրը՝ “Armenian Folia Anglistika” և լրատվամիջոցը՝ “Newsletter”:

Ֆրանսիա-Հայաստան բողոքականների համերաշխություն (*Solidarité Protestante France-Arménie – SPFA*) կազմակերպությունը հիմնադրվել է 1991-ին, ունի երիտասարդ ֆրանսախոսների ակումբ (**CLEF**): Ակումբն ունի իր թերթը, կազմակերպում է գիտաժողովներ, ֆրանսերեն լեզվով ֆիլմերի դիտումներ ու քննարկումներ: Ի սկզբանե հիմնադրված լինելով որպես բարեգործական կազմակերպություն (երկրաշարժից հետո) այն հետագայում սկսեց ակտիվորեն զբաղվել ֆրանսերենի և ֆրանսիական մշակույթի տարածմամբ, կազմակերպում է ֆրանսերենի անվճար դասընթացներ: Կազմակերպում է ֆրանսիացի ուսանողների և բարերարների այցելություններ Հայաստան և ԼՂՀ:

Հայաստանում գործում են ֆրանսերեն լեզվի տարածման այլ կազմակերպություններ ևս (Lycée Professionnel, Alliance Française և այլն):

Գործում է նաև **ռուսաց լեզվի ուսուցիչների ասոցիացիա**:

Պետք է նշել նաև, որ այս բազմազանությունը մի կողմից ապահովում է ծառայությունների լայն սպեկտր, մյուս կողմից բացակայում է միասնական մոտեցումը (չափորոշիչներ, ծրագրեր, գնահատման մեխանիզմներ): Բացի այդ, չեն կիրառվում լեզուների իմացության եվրոպական սահմանված չափանիշները:

Քանի որ Բոլոնիայի գործընթացի և Լիսաբոնյան նորացված ռազմավարությունների համատեքստում հատկապես կարևորվում է բուհի դերը՝ որպես հարատև կրթության ծառայությունների հիմնական մատուցող, Հայաստանում լեզուների ոլորտում հարատև կրթության համար ինստիտուցիոնալ բազա կարող են լինել հատկապես լեզվաբանական բուհերը (ֆակուլտետները), որոնք իրենց տրամադրության տակ ունեն համապատասխան գիտական, մեթոդամանկավարժական, մարդկային և նյութատեխնիկական բազա:

Հարատև կրթության կարիքների տեսանկյունից պետք է վերանայել նաև լեզուների ուսուցման դասընթացները, մատուցվող ծառայությունները, նոր կրճատված, հարմարեցված ծրագրեր ստեղծել:

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵԶՎԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՅԱՆՋՆԵՐՆ ՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

12. ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

12.1. Դրական միտումներ լեզվակրթության քաղաքականության մեջ

Այսօր լեզվակրթության քաղաքականությունը հնարավոր չէ ճիշտ կազմակերպել առանց Եվրախորհրդի լեզվաքաղաքականության հայեցակարգի ներդրման:

Հայաստանում լեզվակրթության քաղաքականության մեջ նկատվող դրական միտումներն ու տեղաշարժերը պայմանավորված են Եվրախորհրդի լեզվաքաղաքականության սկզբունքների ընդունման ու ներդրմամբ, որոնք կոչված են զարգացնել.

- **բազմալեզվությունը (plurilingualism)**, ինչը նպաստում է ողջ կյանքի ընթացքում ըստ անհրաժեշտության մի քանի լեզուներով որոշակի մակարդակով հաղորդակցական իրազեկության, հաղորդակցվելու կարողությունների ձևավորմանն ու կատարելագործմանը.

- **լեզվական բազմազանությունը**. բոլոր լեզուները հավասարապես արժեքավոր են հաղորդակցության և ինքնության դրսևորման համար, դրանցից ցանկացած մեկը սովորելն ու օգտագործելը պաշտպանվում է Եվրախորհրդի համաձայնագրերով.

- **փոխըմբռնումը**. այլ լեզուներ սովորելու հնարավորությունը էական պայման է միջմշակութային հաղորդակցության և մշակութային բազմազանության ընդունման համար.

- **ժողովրդավարական հասարակության անդամ դառնալը (democratic citizenship)**. անհատների բազմամշակութային կարողություններն ու հնտությունները նպաստում են բազմալեզու հասարակության մեջ ժողովրդավարական և հասարակական գործընթացներում ակտիվ մասնակցությանը.

- **սոցիալական ներդաշնակությունը (social cohesion)**, որն ապահովում է հավասար պայմաններ անհատական զարգացման, կրթության, աշխատանքի, ազատ տեղաշարժի, տեղեկատվության և մշակութային ժառանգության մատչելիության համար:

Դրական միտումներ են նկատվում հետևյալ ոլորտներում.

1. Իրավական կարգավորման դաշտ (Legal and Regulatory Issues)

1) Հայաստանի կրթական բարեփոխումների ընթացքում վճռորոշ դեր խաղացին «Լեզվի մասին», «Կրթության մասին» (նախադպրոցական, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթության մասին) ՀՀ օրենքները, «Հանրակրթության պետական կրթակարգը» և «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը»: Վերջին երկու փաստաթղթերում մեր կրթական համակարգում առաջին անգամ փորձ էր արվել սահմանել միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, ինչպես նաև առարկայական չափորոշիչների ստեղծման սկզբունքները, կառուցվածքը, հանրակրթության ուսումնական բնագավառները, բովանդակային բաղադրիչները, ինչպես նաև սովորողին ներկայացվող ընդհանրական պահանջները՝ ըստ ուսումնական բնագավառների:

2) «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը», ըստ էության, առաջին փաստաթուղթն է, որը սահմանում է հանրակրթական դպրոցում մայրենի և օտար լեզուների ուսուցման չափորոշիչներ՝ հստակ տարանջատելով պահանջները հանրակրթական դպրոցի երեք աստիճանների համար (տարրական, միջին և ավագ դպրոցներ): Սակայն այստեղ հաշվի չէին առնվել լեզվակրթության ոլորտում Եվրախորհրդի սկզբունքներն ու պահանջները, մասնավորապես՝ լեզուների իմացության մակարդակները (A1-C2):

3) Հայաստանում դպրոցական կրթության համակարգը եռալեզու է. մայրենի լեզու, 2-րդ դասարանից սկսած պարտադիր և անխտիր դասավանդվում է 1-ին օտար լեզուն՝ ռուսերենը, ապա 3-րդ դասարանից պարտադիր դասավանդվում է 2-րդ օտար լեզուն (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, երբեմն՝ իսպաներեն, իտալերեն և այլն): ՀՀ ԿԳ նախարարության կողմից քննարկման առաջադրված՝ օտար լեզուների դասավանդման նոր հայեցակարգի համաձայն նախատեսվում է հանրակրթական դպրոցում 3-րդ օտար լեզվի ուսուցում:

ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 111-Ն որոշման համաձայն փոփոխություն է կատարվել հիմնական և ավագ դպրոցի հենքային ուսումնական պլաններում, ըստ որի «Օտար լեզուներ» բնագավառը ներկայացվում է արդեն ոչ թե 2, այլ երեք օտար լեզուներով: Սա նշանակում է, որ դպրոցը հնարավորություն է ստանում պետական ֆինանսավորմամբ երկուսի փոխարեն երեք օտար լեզու ուսուցանել: Սա կնպաստի սո-

վորողների բազմալեզվության զարգացմանը, լեզուների բազմազանությամբ, այսինքն՝ կիաղթափարի անգլերենի գերակշռությունը և կվերականգնի կրթական համակարգում ուսումնասիրվող օտար լեզուների խախտված համամասնությունը:

Հանրակրթական դպրոցում չորս լեզու (մայրենի + ռուսերեն + 2 այլ օտար լեզուներ) սովորելու մասին այս որոշումը խիստ կարևոր է և բարենպաստ պայմաններ է ստեղծում.

- Եվրախորհրդի լեզվակրթության քաղաքականության ամենակարևոր դրույթներից մեկի՝ բազմալեզվության զարգացման համար,

- Հայաստանում լեզվական կրթության ոլորտում օտար լեզուների համամասնությունը վերականգնելու համար (ինչը խախտվել էր մյուս օտար լեզուների, հատկապես՝ գերմաներենի ու ֆրանսերենի հաշվին անգլերենի գերակայության պատճառով):

4) ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 8-ի որոշման համաձայն փոփոխություն է մտցվել հանրակրթական դպրոցի հենքային ուսումնական պլանների պարզաբանումներում, ինչի համաձայն հենքային ուսումնական պլաններում կարելի է նախարարության հեռաձայնությամբ փոփոխություն մտցնել «նախարարության կողմից երաշխավորված ծրագրերով, դասագրքերով և այլ ուսումնական գրականությամբ առանձին առարկաների խորացված ուսուցումը իրականացնելու համար»: Այս որոշումը կարող է լավ հիմք ծառայել նաև օտար լեզուների խորացված ուսուցմամբ դպրոցների ցանցի ընդլայնման համար:

2. Հափորոշիչներ, ծրագրեր և դասագրքեր

5) Կրթական բարեփոխումների ուղղությամբ հաջորդ կարևոր քայլը հանրակրթական դպրոցի համար առարկայական չափորոշիչների և ծրագրերի ստեղծումն էր: Բարեփոխումների այս փուլում արդեն մշակվել և հրատարակվել են մայրենի (2006թ.) և օտար լեզուների (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն-2007թ.) առարկայական ծրագրերն ու չափորոշիչները:

Առաջին անգամ ստեղծվել են օտար լեզուների առարկայական չափորոշիչներ և դրանց վրա հիմնված սկզբունքորեն նոր ուսումնական ծրագրեր, որոնք զգալիորեն կնպաստեն լեզվական կրթության նորացմանը և ժամանակակից միտումներին համապատասխանեցմանը:

- Աստվածատրյան Մ. Գ. և ուրիշներ.

• «Անգլերեն լեզու. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր», Երևան, 2007

- «Գերմաներեն լեզու. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր», Երևան, 2007
- «Ֆրանսերեն լեզու. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր», Երևան, 2007
- Տատկալո Ն. և ուրիշներ.
- «Ռուսաց լեզու. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր», Երևան, 2007

6) Դրական է նաև այն փաստը, որ առաջին անգամ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների չափորոշիչները ուսուցման յուրաքանչյուր փուլի համար տրված են երեք մակարդակով (մվագագույն, միջին և բարձր):

7) Դրական միտումներից է նաև այն, որ նոր սերնդի դասագրքերն արդեն ստեղծվում են նոր առարկայական չափորոշիչների հիմքի վրա:

Մայրենի լեզվի չափորոշիչների և ծրագրերի հիման վրա արդեն հայտարարվել են նոր սերնդի դասագրքերի մրցույթ և լույս են տեսել տարրական դասարանների նոր դասագրքերը:

Օտար լեզուների համար նույնպես արդեն հայտարարվել է նոր դասագրքերի մրցույթ (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն):

3. Օտար լեզուների ուսուցման նպատակներ

8) Նոր առարկայական չափորոշիչներում և ծրագրերում առաջին անգամ օտար լեզուների ուսուցման նպատակները սահմանվել են Եվրախորհրդի պահանջներին և լեզվաքաղաքականության սկզբունքներին համահունչ:

Օտար լեզուների նոր չափորոշիչներն արդեն հիմնականում մշակվել են լեզուների իմացության համաեվրոպական համակարգի պահանջների ու սկզբունքների հիման վրա: Նոր ուսումնական չափորոշիչներն ու ծրագրերը նպատակաուղղված են օտար լեզուների ուսուցման՝ *անձակենտրոն, հաղորդակցական, հանրամշակութաբանական և գործունեության վրա հիմնված* մոտեցումների իրականացմանը:

Ըստ ստեղծված ծրագրերի օտար լեզուների ուսուցման նպատակները պետք է ապահովեն բանավոր և գրավոր հաղորդակցումը, այսինքն՝ ունկնդրելը, խոսելը, ընթերցելը և գրելը, ինչպես նաև լեզվական միջնորդությունը, այսինքն՝ թարգմանությունը:

Այդ հաղորդակցումն իրականանում է հետևյալ գործառույթների ամբողջական դրսևորմամբ.

- **իմացական-ճանաչողական.** հաղորդում, տեղեկությունների հարցում, դրանց ձեռքբերում ունկնդրման և ընթերցանության ընթացքում.
- **կանոնակարգող.** խնդրանքի, խորհրդի ձևակերպում, խոսքային և ոչ խոսքային գործողությունների խթանում.
- **արժեքային-կողմնորոշող.** կարծիքի և գնահատականի արտահայտում, հայացքների և համոզմունքների ձևավորում, փաստարկում.
- **վարքը կարգավորող.** բարեկիրթ խոսքի կանոնների պահպանում, որ յուրաքանչյուր ժողովրդի մոտ իր առանձնահատկություններն ունի:

Օտար լեզվի ուսուցման ընդլայնված հաղորդակցական նպատակների իրականացման արդյունքում ձևավորվում են օտարալեզու խոսքային հմտություններն ու կարողությունները, լեզվական, երկրագիտական և մշակութաբանական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունն ու պատրաստակամությունը:

9) Հաղորդակցական իրազեկության ձևավորումն ու զարգացումը ենթադրում են նաև օտար լեզվի յուրացում՝ լեզվակիր ժողովրդի գրականության ու մշակույթի համատեքստում, ինչպես նաև իրենց տարիքին համապատասխան կենսական ոլորտներում և իրադրություններում լեզուն օգտագործելու կարողություն և հմտություն:

Հաղորդակցական իրազեկությունը ներառում է հետևյալ հիմնական բաղադրիչները. լեզվական-խոսքային, հանրամշակութային, գործաբանական, փոխհատուցման, ուսումնաճանաչողական կարողություններ:

Լեզուներ սովորողի/օգտագործողի լեզվական-հաղորդակցական իրազեկությունը դրսևորվում է խոսքային գործունեության տարբեր ձևերում, ներառյալ՝ ընկալումը, վերարտադրումը, փոխներգործությունը կամ միջնորդային գործունեությունը (մասնավորապես՝ բանավոր կամ գրավոր թարգմանությունը) (CEFR-2.1.3.):

4. Կրթական ոլորտում Եվրախորհրդի և նրա կառույցների հետ համագործակցությունը

10) Մեծացել է մասնագետների, մասնագիտական կառույցների հետաքրքրությունը լեզվաբանական կրթության և լեզուների ուսուցման նոր միտումների ու հիմնախնդիրների նկատմամբ:

Դեռևս մինչև 2001թ-ին Հայաստանի Եվրախորհրդի անդամ դառնալը, սկսած 1998թ-ից, Բրյուսսլի անվ. պետական լեզվաբանական համալսարանը ակտիվ համագործակցում էր Եվրախորհրդի լեզվաքաղաքականության բաժնի և ժամանակակից լեզուների Եվրոպական կենտրոնի հետ՝ մասնակցելով կրթական ասպարեզում համատեղ կազմակերպվող միջազգային սեմինարներին և գիտաժողովներին: Մասնավորապես, Երևանի Վ. Բրյուսսլի անվան պետական լեզվաբանական համալսարանի կողմից 1998 – 2007 թվականներին կազմակերպվել են լեզվաբանական կրթությանը նվիրված շուրջ 20 գիտաժողովներ ու սեմինարներ (գիտաժողովների ու սեմինարների ցանկը տես հավելվածում):

11) 2001 թվականից ի վեր թարգմանվել և մասնագիտական շրջանակներում շրջանառության մեջ են դրվել Եվրախորհրդի լեզվաքաղաքականության և լեզվակրթության հարցերին նվիրված մի շարք փաստաթղթեր, ժողովածուներ, նյութեր, ինչը նպաստել է Եվրախորհրդի լեզվաքաղաքականության սկզբունքները համարությանը ներկայացնելուն և դրանց տարածմանը.

- Լեզուների եվրոպական տարվան նվիրված նյութերի ու փաստաթղթերի փաթեթը (2001).
- Եվրախորհրդի լեզվաքաղաքականությանը նվիրված նյութերի ժողովածու (2001).
- Եվրոպական լեզվական թղթապանակի լեզվական անձնագիրը (2003)
- Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգը - CEFR (2005).

12) Եվրոպական լեզվական թղթապանակի հայկական տարբերակի ստեղծումը

2007 թվականի փետրվարին Եվրախորհրդի լեզվաքաղաքականության հանձնաժողովը հավաստագրեց «Եվրոպական լեզվական թղթապանակ Հայաստանի դպրոցների տարրական դասարանների համար»/«EUROPEAN LANGUAGE PORTFOLIO. PRIMARY SCHOOL.ARMENIA» (հավաստագրված նմուշօրինակ N 86-2007): Թղթապանակի հայկական այս մոդելը նախատեսված է հայկական դպրոցներում (տարրական դասարաններ. 6-10 տարեկան) օտար լեզուների (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն) ուսուցման համար:

Թղթապանակի ստեղծման ընթացքում աշխատանքային խումբը ղեկավարվել և հիմնվել է «Եվրոպական լեզվական թղթապանակ: Սկզբունքներ և ուղեցույց» (European Language Portfolio. Principles and Guidelines. Version 3.1) և Եվրախորհրդի

կողմից մշակված՝ «Ժամանակակից լեզուների իմացության և իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, ուսուցում, գնահատում» փաստաթղթերի հիմնադրույթներով:

13) Որպես դրական երևույթ կարելի է նշել նաև այն, որ Հայաստանն ակտիվորեն համագործակցում է Եվրախորհրդի տարբեր կառույցների հետ: Մասնավորապես Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի բազայի վրա են գործում

- Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի (ժԼԵԿ-ECML) համակարգող մարմինը (National Contact Point).
- ԺԼԵԿ-ի լիազորված պաշտոնական ներկայացուցչությունը (National Nominating Authority)
- Լեզվաբանական համալսարանի մանկավարժության և լեզուների դասավանդման ամբիոնում է գործում Եվրախորհրդի լեզվաքաղաքականության բաժնի և Ժամանակակից Լեզուների եվրոպական կենտրոնի փաստաթղթային տեղեկատվական կենտրոնը, որը սպասարկում է ոչ միայն համալսարանի ուսանողներին, ասպիրանտներին, դասախոսներին, այլ նաև Երևանի ու տարբեր մարզերի ուսումնական հաստատությունների լեզուների մասնագետներին, ինչպես նաև շահագրգիռ այլ անձանց ու հաստատություններին:
- Լեզվաբանական համալսարանի ինտերնետային կայքում տեղադրված է ժԼԵԿ-ի կայքի հայերեն տարբերակը, ինչը նպաստում է Եվրախորհրդի լեզվաքաղաքականության և ժԼԵԿ-ի գործունեության մասին տեղեկատվության առավել լայն տարածմանը:

Դրական տեղաշարժերի առկայությամբ հանդերձ դեռևս չենք կարող արձանագրել, որ Եվրախորհրդի լեզվակրթության քաղաքականության սկզբունքներն ամբողջությամբ ու լիովին ներդրվել ու կիրառվում են Հայաստանում, դրանք դեռևս համակարգային և հանընդգրկուն բնույթ չեն կրում:

12.2. Ի՞նչ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել (տեսլականը և առաջարկներ)

Իրավական կարգավորման դաշտ (Legal and Regulatory Issues)

1) Լեզվական իրավիճակի և լեզվաքաղաքականության բարելավման նպատակով անհրաժեշտ է.

- Գետևադրականորեն կենսագործել լեզվաքաղաքականությանը և լեզվակրթությանն առնչվող նորմատիվ փաստաթղթերի դրույթները (Լեզվի մասին ՀՀ օրենք, լեզվաքաղաքականության պետական ծրագիր և այլն):
- Ստեղծել տվյալների բազա և վերլուծական-տեղեկատվական կենտրոն՝ լեզվակրթության և լեզվաքաղաքականության մասին տեղեկությունները հավաքելու, մշակելու, վերլուծելու և հանրությանը ներկայացնելու նպատակով:

2) Առաջարկել փոփոխություն մտցնել Կրթության մասին ՀՀ օրենքում և տարրական դպրոցում օտար լեզուների դասագրքերը նույնպես երեխաներին հատկացնել անվճար, ինչպես այլ առարկաներին:

3) Որոշ ուսումնական հաստատություններում առանձին առարկաներն ու մասնագիտական հատուկ դասընթացներն օտար լեզուներով վարելը, ինչպես նաև մի շարք բուհերում դասավանդումն օտար լեզուներով կազմակերպելը չի համապատասխանում գործող օրենսդրական պահանջներին, ինչը հաղթահարելու նպատակով անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ:

4) Հստակեցնել լրացուցիչ կրթության և մեծահասակների կրթության օրենսդրական դաշտը: Այդ ոլորտն ապահովել համապատասխան բովանդակությամբ, ՀՀ ԿԳՆ-ին կից ստեղծել մեծահասակների լեզվակրթությամբ զբաղվող կենտրոն:

Չափորոշիչներ, ծրագրեր և դասագրքեր

5) Ոչ լեզվական առարկաների ուսումնական չափորոշիչներում և ծրագրերում պետք է հստակորեն հաշվի առնվեն դասավանդման լեզվի առանձնահատկությունները, դերը և յուրաքանչյուր առարկայի դասընթացում հատուկ ուշադրություն դարձվի տվյալ մասնագիտությանը բնորոշ բառաշերտին, տերմինաբանությանը, լեզվի գործառնական ոճերին, կառուցվածքային առանձնահատկություններին և լեզվամտածողությանը:

6) Հայոց լեզվի ուսումնական չափորոշիչները, ծրագրերը համապատասխանեցնել լեզուների ուսուցման/ուսումնառության համաեվրոպական համակարգի պահանջներին:

7) Միասնական քննությունների և թեստերի ներդրումը դրական քայլ է հայոց լեզվի ուսուցման համակարգի բարելավման գործում, սակայն, անհրաժեշտ է այնպես կազմել լեզվական առաջադրանքները, որ դրանք քերականական գիտելիքներից բացի նաև հաղորդակցական կարողությունների ստուգման նպատակ ունենան:

8) Հանրակրթական դպրոցում օտար լեզուների ուսուցման առաջադրված նպատակներին և չափորոշիչներին հնարավոր չէ հասնել հենքային ուսումնական պլանում օտար լեզուների ուսուցման համար նախատեսված ժամաքանակի պայմաններում (շաբաթական 2 ժամ), որը չի կարող ապահովել հանրակրթական դպրոցի շրջանավարտների համար օտար լեզուների իմացության նույնիսկ պարտադիր նվազագույն մակարդակը:

Անհրաժեշտ է հասցնել օտար լեզուներին հատկացվող ժամաքանակը շաբաթական 3 ժամի, ինչպես նաև ավագ դպրոցում նույնպես օտար լեզվի դասերը վարել փոքր խմբերով (դասարանը կիսել 2 խմբի): Դա կնպաստի, որ աշակերտները ուսումնառության յուրաքանչյուր փուլի ավարտին հասնեն լեզուների իմացության նախատեսված մակարդակին (A1 – B1/B2):

9) Դասագրքերի (այդ թվում նաև օտար լեզուների) մրցույթը հայտարարել ամփոփումից առնվազն 1 տարի առաջ: Մրցույթով անցնող օտար լեզվի դասագրքերի ընտրության համար ստեղծել չափորոշիչներ և վերլուծական-տեղեկատվական անկախ մարմին:

10) Մագիստրատուրայի աստիճանում ոչ լեզվաբանական ֆակուլտետի ուսանողների համար առանձին մասնագիտական առարկաներ օտար լեզուներով սովորելու հնարավորություն ստեղծել:

Փաստարկներ քննարկման համար (Rationale and Debate)

11) Մտահոգում է հանրակրթական դպրոցներում և բուհերում ուսումնասիրվող եվրոպական լեզուների համամասնությունը (անգլերենի գերիշխումը մյուս լեզուների հաշվին), ինչը կարող է հանգեցնել մենալեզվության (միայն անգլերեն իմանալու) վտանգին: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է ապահովել ուսումնական հաստատություններում նաև մյուս եվրոպական լեզուների (հատկապես՝ գերմաներենի և ֆրանսերենի) ուսումնասիրությունը՝ ճշգրտելով այդ լեզուների կարգավիճակը: Այդ հարցում դրական դեր կարող է խաղալ ՀՀ ԿԳՆ կողմից առաջարկված՝ օտար լեզուների ուսուցման հայեցակարգի ներդրումը և կառավարության որոշումը հանրակրթական դպրոցում 3-րդ օտար լեզվի ուսուցման մասին: Հանրակրթական դպրոցում երեք օտար լեզուների, այդ թվում՝ երկու եվրոպական լեզուների (օրինակ՝ անգլերեն և գերմաներեն կամ անգլերեն և ֆրանսերեն և այլն) ուսուցման արդյունքում կստեղծվեն քառալեզու ուսուցմամբ դպրոցներ:

12) Համակարգել լեզուների վաղ ուսուցման (նախադպրոցական հաստատություններում) տարերայնորեն սկսված

միտումը: Մանկավարժների, հոգեբանների և լեզուների մասնագետների կողմից պետք է մշակվեն հատուկ նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված ուսումնական և մեթոդական նյութեր, ինչպես նաև կազմակերպվի համապատասխան մանկավարժների վերապատրաստում՝ օտար լեզուների ուսուցումը վաղ տարիքում ճիշտ և արդյունավետ հիմքերի վրա դնելու նպատակով:

13) Ավագ դպրոցի նոր հայեցակարգում նախատեսված հոսքային ուսուցման պայմաններում իրականացնել տարբերակված ուսուցում մի կողմից՝ լեզվաբանական, մյուս կողմից՝ մյուս հոսքերի համար (օրինակ՝ բնագիտական), որտեղ օտար լեզուների խորացված ուսուցումը կիրականացվի նաև կոնկրետ մասնագիտական խնդիրների լուծմանը նպաստելու նպատակով:

14) Ընդլայնել լեզուների խորացված ուսուցմամբ դպրոցների ցանցը:

Ուսուցիչների վերապատրաստում

15) Համաշխարհային կրթական համակարգին ինտեգրվելու համար վերանայել ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման համակարգը՝ **բազմալեզու ուսուցիչներ** պատրաստելու նպատակով:

16) Ոչ լեզվաբանական ֆակուլտետներում կազմակերպել օտար լեզուների տարբերակված ուսուցում՝ ըստ լեզուների իմացության մակարդակի:

17) Լեզվաբանական ֆակուլտետներում դասավանդող դասախոսներին հնարավորություններ ընձեռել վերապատրաստվել նաև արտերկրում, մասնակցել միջազգային գիտաժողովների:

18) Բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների դասախոսներին (հատկապես ոչ լեզվական մասնագիտացման բուհերի) ընդգրկել վերապատրաստման պարբերական դասընթացներում:

19) Ստեղծել մեխանիզմներ դասավանդման դրական փորձը ուսումնասիրելու, վերլուծելու, ամփոփելու և տարածելու համար:

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ

20) Օտար լեզուների բնական միջավայրի բացակայության պայմաններում իրական լեզվական միջավայր ստեղծելու նպատակով անհրաժեշտ է լայնորեն ներդնել և ճիշտ օգտագործել տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները, ընդլայնել օտար լեզուների հեռավար ուսուցման ցանցը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՈՂԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Common European Framework of Reference for Languages: Learning, teaching, assessment. Council of Europe, Modern Languages Division, Strasbourg, Cambridge University Press, 2001
2. Beacco Jean-Claude, Byram Michael. Guide For the Development of Language Education Policies in Europe. Main Version. Draft 1(rev.). Council of Europe, Language Policy Division, Strasbourg, 2003.
3. From Linguistic Diversity to Plurilingual Education. Guide for the Development of Language Education Policies in Europe. Main Version. Council of Europe, Language Policy Division, Strasbourg, 2007
4. Language Learning for European Citizenship. Final report (1989-1996). Council of Europe, Modern Languages, Strasbourg, 1997.
5. Language Policies. Plurilingual Education in Europe. Council of Europe, Language Policy Division, Strasbourg, 2006

ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐ, ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. <http://www.parliament.am>
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (Ընդունվել է 05.07.2005)
3. Հայաստանի Հանրապետության օրենքը լեզվի մասին (Ընդունվել է 17.04.1993)
4. Հայաստանի Հանրապետության օրենքը կրթության մասին (Ընդունվել է 14.04.1999)
5. Հայաստանի Հանրապետության օրենքը նախադպրոցական կրթության մասին (Ընդունվել է 15.11.2005)
6. Հայաստանի Հանրապետության օրենքը նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին (Ընդունվել է 08.07.2005)
7. Հայաստանի Հանրապետության օրենքը բարձրագույն և հետրոլիական կրթության մասին (Ընդունվել է 14.12.2004)
8. Հայաստանի Հանրապետության օրենքը հանրակրթության մասին (նախագիծ)
(Կ-101-29.08.2007-Կ-010/0)

9. Հայաստանի Հանրապետության օրենքը գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին (Ընդունվել է 05.12.2000)
10. Հայաստանի Հանրապետության օրենքը հեռուստատեսության և ռադիոյի մասին (Ընդունվել է 09.10.2000)
11. Հայաստանի Հանրապետության օրենքը զանգվածային լրատվության մասին (Ընդունված է 13.12.2003թ.)
12. Հայաստանի Հանրապետության օրենքը զովագրի մասին (Ընդունված է 30.04.1996թ.)
13. Հայաստանի Հանրապետության օրենքը մշակութային օրենսդրության հիմունքների մասին (Ընդունվել է 20.11.2002թ.)
14. Հայաստանի Հանրապետության օրենքը տեղեկատվության ազատության մասին (Ընդունվել է 23.09.2003)
15. Հայաստանի Հանրապետության լեզվաքաղաքականության պետական ծրագիրը (Հաստատվել է ՀՀ կառավարության որոշմամբ 18 փետրվարի 2002 թ. N 138)
16. Հանրակրթության պետական կրթակարգ (Ընդունվել է ՀՀ կառավարության 27.05.2004 թիվ 20 որոշմամբ)
17. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ (Ընդունվել է ՀՀ կառավարության 17.06.2004 թիվ 900-Ն որոշմամբ)
18. Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2008-2015 թվականների պետական ծրագիրը (Նախագիծ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՐԳԸ

1. Կրթությունը Հայաստանում, Աստղիկ գրատուն, Երևան, 2003
2. Կրթությունը Հայաստանում, Ձանգակ, Երևան, 2004
3. Կ.Հարությունյան Ն.Դավթյան, Կրթությունը Հայաստանում, Էդիթ պրինտ, Երևան, 2006
4. Առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ստեղծման հայեցակարգ ՀՀԿԳՆ, 2007թ.
5. Սովորողների առաջադիմության գնահատման ընթացակարգ, ՀՀԿԳՆ, Երևան, 2007թ.
6. Հանրակրթության պետական համակարգ, ՀՀԿԳՆ, Երևան, 2004
7. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության պետական չափորոշիչ, Երևան, 2006
8. Չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության պետական չափորոշիչ, Երևան 2006
9. Ս.Նաչատրյան և ուրիշներ, Կրթական վերափոխումները Հայաստանում, Մարդկային զարգացման ազգային զեկուլյց, Երևան, 2007
10. Հայաստանի բուհերը. տեղեկատու դիմորդների համար, Արաքս հրատարակչություն, Երևան, 2007:
11. Հայաստանի քոլեջները, ուսումնարարները և վարժարանները. 2007-2008 տեղեկատու, Արաքս հրատարակչություն, Երևան, 2007:
12. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ԱԿԾ, Երևան, 2007:

13. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2006թ-ին, ԱՎԾ, Երևան, 2007:
14. ՀՀ մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության զարգացման հայեցակարգային մոտեցումներ: <http://www.undp.am/docs/publications/2005publications/education.pdf>
15. www.armstat.am
16. www.edu.am
17. Չ.Ա. Григорян М.Г., Даниелян, Русский язык в Республике Армения, ИЦ Азбуковник, М., 2006

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

1. Մ.Գ. Աստվածատրյան և ուրիշներ, Անգլերեն լեզու. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, ՀՀ ԿԳՆ, Երևան, 2007
2. Մ.Գ. Աստվածատրյան և ուրիշներ, Գերմաներեն լեզու. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, ՀՀ ԿԳՆ, Երևան, 2007
3. Մ.Գ. Աստվածատրյան և ուրիշներ, Ֆրանսերեն լեզու. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, ՀՀ ԿԳՆ, Երևան, 2007
4. Стандарт и прогамма по русскому языку для общеобразовательной школы, МОН РА, Ереван, 2007

**ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԸ**

1. http://www.gov.am/armversion/staff_4/karucvacq_kron.htm
2. Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտանության մասին շրջանակային կոնվենցիա և բացատրական զեկույց, Եվրոպայի Խորհուրդ, Ստրասբուրգ, փետրվար, 1995 թ.
3. Հայաստանի Հանրապետության առաջին զեկույցը ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, Երևան, մայիս, 2001 թ. Հայաստանի Հանրապետության երկրորդ զեկույցը ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, Երևան, 2004 թ.
4. Հայաստանի Հանրապետության մեկնաբանությունները Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կարծիքի կապակցությամբ, Երևան, 2002
5. Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտե, Հայաստանի վերաբերյալ 2-րդ կարծիք, հաստատված մայիսի 12, 2006թ.
6. Հայաստանի Հանրապետության մեկնաբանությունները ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի Հայաստանի վերաբերյալ 2-րդ կարծիքի կապակցությամբ, 13 նոյեմբերի, 2006 թ.
7. «Ազգային Փոքրամասնությունների Պաշտպանության Շրջանակային Կոնվենցիայի իրականացումը Հայաստանի կողմից». Եվրախորհրդի Նախարարների Կոմիտեի և Նախարար պատգամավորների 986-րդ հանդիպման Բանաձևը (7 փետրվարի, 2007թ.)

**ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՍ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

1. European Charter for Regional or Minority Languages and explanatory report, Council of Europe, 1998
2. Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա, Ստրասբուրգ, 05.11.1992
3. Հայաստանի Հանրապետության առաջին զեկույցը Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, Երևան, ապրիլ, 2003թ.
4. Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա. Հայաստանի վերաբերյալ փորձագետների կոմիտեի զեկույցը (Ընդունվել է 2006 թվականի Մայիսի 12-ին)

5. Հայաստանի Հանրապետության Երկրորդ զեկույցը Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, Երևան, 2007.

ԵՊԼՀ-ի կողմից Եվրախորհրդի համապատասխան վարչությունների և ԱՊՀ երկրների կրթական կառույցների հետ համատեղ կազմակերպված լեզվաբանական կրթությանը նվիրված գիտաժողովներ և սեմինարներ (1998 – 2007թթ.)

1998թ. հոկտեմբեր - «Լեզվաքաղաքականությունը բազմալեզու և բազմամշակույթ Եվրոպայում», միջազգային գիտաժողով՝ Եվրախորհրդի լեզվաքաղաքականության բաժանմունքի հետ համատեղ:

1998թ. - «Օտար լեզուները Հայաստանում նոր մոտեցումներ և ուսումնական ծրագրեր»- միջազգային գիտաժողով՝ ԵԽ-ի լեզուների բաժանմունքի հետ համատեղ:

2001թ.հոկտեմբեր - Լեզուների Եվրոպական տարի. ԵԽ-ի լեզուների բաժանմունքի կողմից ԵՊԼՀ-ն ճանաչվել է Հայաստանում միջոցառումներ անցկացնող բազային կազմակերպություն:

2003թ. - «Էթնիկական փոքրամասնությունների լեզուները ՀՀ դպրոցական կրթական համակարգում», միջազգային գիտաժողով՝ ԵԽ-ի լեզուների բաժանմունքի հետ համատեղ:

2004թ. - «Լեզուների իմացության համաեվրոպական լեզվաքաղաքականությունը և թղթապանակը որպես նպատակների իրագործման կարևոր գործիք», սեմինար: Կոորդինատոր՝ Եվրախորհրդի փորձագետ **Վիլիո Կոհոնեն**:

2004թ. - Միջնակարգ դպրոցներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը- սեմինար՝ ԵԽ-ի լեզուների բաժանմունքի հետ համատեղ:

2004թ. սեպտեմբեր - Տարածաշրջանային և փոքրամասնության լեզուների եվրոպական խարտիայի տեղեկատվական սեմինարներ: Համակարգող՝ ԵԽ-ի կրթության դիրեկտորատի տնօրեն Ֆ.Բլեր:

2005թ. հունիս - «Եվրոպական լեզվական թղթապանակի զարգացումը և ներդրումը» - սեմինար: Համակարգող՝ Եվրախորհրդի փորձագետ **Դիք Մայեր**:

2005թ.սեպտեմբեր, Ծաղկածոր - «Լեզվաբանական տիպաբանություն և մարդաբանություն՝ 4-րդ միջազգային դպրոց» միջազ-

գային գիտաժողով՝ Ռուսաստանի հումանիտար համալսարանի հետ համատեղ:

2005թ. – «Լեզվաբանությունը և լեզվաբանական կրթությունը 21-րդ դարում. Լեզուների և մշակույթների երկխոսություն», ԱՊՀ մասնակից-պետությունների լեզվի և մշակույթի բազային կազմակերպության արտագնա նիստ և միջազգային գիտաժողով: /Մոսկվայի լեզվաբանական համալսարանի և բազային կազմակերպության հետ համատեղ: Նիստի շրջանակներում քննարկվող խնդիրների վերաբերյալ ընդունվեցին որոշումներ, որոնք կարելի է բնութագրել որպես կարևոր քայլ լեզվաբանական կրթության ինտեգրման և կրթական չափորոշիչների միասնականացման գործընթացում:

2006թ. - «Բազմալեզու և բազմամշակույթ հասարակություն» - սեմինար: Համակարգող՝ Եվրախորհրդի փորձագետ **Ադրիան Բաթլեր**:

2006թ. նոյեմբեր, Մոսկվա - «Միջմշակութային հաղորդակցություն» միջազգային գիտաժողով Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի հետ համատեղ:

2006թ. նոյեմբեր - «Հայ-ֆրանսիական լեզվամշակութային առնչություններ» խորագրով գիտաժողով: Հրավիրված էին ֆրանսիացի մասնագետներ:

2006թ. դեկտեմբեր, Մոսկվա - «Հայերենի դասավանդման խնդիրները ՌԴ-ում» -թեմայով սեմինար-դասախոսություն Մոսկվայում: Որոշվեց ԵՊԼՀ-ի հայագիտության ամբիոնի դասախոսների ուժերով կազմել հայոց լեզվի դասագիրք՝ Ռուսաստանում հայերեն սովորողների համար:

2007թ. ապրիլ - «Կրթություն-Մարդու իրավունքներ-Հասարակություն. Հիմնախնդիրներ և հեռանկարներ», գիտաժողով:

2007թ. ապրիլ – «Միջմշակութային հաղորդակցությունը լեզվի ուսուցիչների պատրաստման գործում», սեմինար: Համակարգող՝ Եվրախորհրդի փորձագետ **Իլդիգո Լազար**:

2007թ. հունիս, Փարիզ - «Հայ-ֆրանսիական միջմշակութային կապերը և զուգադրական լեզվաբանության խնդիրները» - միջազգային գիտաժողով, Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ինստիտուտի հետ համատեղ:

2007թ. օգոստոս,Գորիս - «Արևելահայերենի հիմնահարցերին նվիրված միջազգային աշխատանքային գիտաժողով: Գիտաժողովի կազմակերպիչներն էին ԵՊԼՀ, Փարիզի Արևելյան լեզուների և

քաղաքակրթությունների ինտիտուտը, Մոսկվայի պետական հումանիտար համալսարանը:

2007թ. հոկտեմբեր, Ծաղկաձոր - «Թարգմանությունը՝ որպես մշակույթների փոխներթափանցման ձգողական դաշտ» միջազգային համաժողով /ՀՀ Մշակույթի նախարարության, ԱՊՀ մասնակից պետությունների հումանիտար համագործակցության հիմնադրամի հետ համատեղ/: Համաժողովի շրջանակներում քննարկվեցին «Թարգմանություն և թարգմանաբանություն» մասնագիտության կրթական չափորոշիչներին և ուսումնական ծրագրերին նվիրված խնդիրները: Քննարկումների արդյունքում ընդունվեց փաստաթուղթ՝ նվիրված բարձրորակ թարգմանիչներ պատրաստելու գործում համալսարանների առջև ծառայած խնդիրների լուծմանը և հեռանկարներին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

**Օտար լեզուների ուսուցումը նախադպրոցական հաստատություններում
Կոնկրետ դեպքերի հետազոտություն**

	Մանկապարտեզը	Լեզուն	խմբեր/երեխաներ	ժամաքանակը	Ծրագիր, դասագիրք	Ուսուցիչը	Կրթություն	Վճարը
1	Կապանի թիվ 6	ռուսերեն	2 ավագ խմբերում	շաբաթը 2 անգամ	Русский язык в национальном детском саду	Մանկապարտեզի դաստիարակը	մանկավարժական	անվճար
2	Վայոց Ձոր, Մալիշկա	ռուսերեն	2 ավագ խմբեր, 45 երեխա	շաբաթը 3 անգամ	Ռուսաց լեզուն մանկապարտեզում	Մանկապարտեզի դաստիարակը	մանկավարժական, միջին մասնագիտական, ռուսական	վճարում են ծնողները
3	Էջմիածնի թիվ 14	ռուսերեն	4 խումբ	շաբաթը 2 անգամ	Методика обучения русскому языку в армянском детском саду	Մանկապարտեզի դաստիարակը	մանկավարժական, տարրական, ռուսական	անվճար
4	Էջմիածնի թիվ 10	անգլերեն	4 խումբ (նախապ.)	3 անգամ	սեփական, հարմարեցված նյութեր	Մանկապարտեզի դաստիարակը	մանկավարժ. օտար լեզուներ, ԵՊԼՀ	վճարում են ծնողները
		ֆրանսերեն	2 խումբ (նախապ.)	2 անգամ	հարմարեցված և վերապատրաստման նյութեր	Մանկապարտեզի դաստիարակը	ֆրանս. կազմ. կողմից վերապատրաստված	անվճար
5	Էջմիածնի թիվ 15	անգլերեն	5, խումբ, 150 երեխա	2-3 անգամ	Տարրական դպրոցի անգլերենի դասագրքեր, դիդակտիկական նյութեր	Մանկապարտեզի դաստիարակը	մանկավարժական, միջին մասնագիտական, օտար լեզուն սովորել է FES ուսումնական կենտրոնում	անվճար
6	Սևանի թիվ 1	անգլերեն	2 խումբ (ավագ և նախապ.)	1 անգամ 2 անգամ	Ռուսաց լեզուն մանկապարտեզում (վերափոխել են)	մասնագետ	բարձրագույն, օտար լեզուներ	

7	Սևանի թիվ 2	ռուսերեն	3 խումբ (միջին, ավագ, նախ.) 65-70 երեխա	2 անգամ	Типовая программа обучения русскому языку в национальном детском саду.	նախկին դաստիարակչուհի	մանկավարժական, միջին մասնագիտական, ռուսական	անվճար
8	Հրազդանի թիվ 13	ռուսերեն	4 խումբ 64 երեխա	2 անգամ	Обучение русскому языку в детском саду			-
		անգլերեն		2 անգամ	Անգլերենի ուսուցումը մանկապարտեզում	հրավիրված մասնագետ	մանկավարժական, բարձրագույն, օտար լեզուներ	
9	Վանաձորի թիվ 35	անգլերեն	2 խումբ, 30 երեխա	3 անգամ	-	անգլերենի ուսուցիչ	մանկավարժական, բարձրագույն, օտար լեզուներ	վճարում են ծնողները
10	Վանաձորի թիվ 19	անգլերեն	1 խումբ	2 անգամ	Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա	դաստիարակ	բարձրագույն, մասնագիտական	անվճար
11	Վանաձորի թիվ 15	ռուսերեն	2 խումբ, 16 երեխա	2 անգամ	Русский язык в национальном детском саду. Букварь в картинках.	դաստիարակ	բարձրագույն	-
		անգլերեն		2 անգամ	Օտար լեզուների ծրագիր նախադպրոցական ցանցի համար	անգլերենի մասնագետ	բարձրագույն	-
12	Արտաշատի թիվ 4	ռուսերեն անգլերեն	8 խումբ 140 երեխա	2 անգամ 2 անգամ	նախկին ծրագր. նյութեր	մասնագետ (ունեն հաստիքներ)	բարձրագույն, մասնագիտական	անվճար
13	Երևանի թիվ 188	ռուսերեն	3 խումբ 20-25 երեխա	2 անգամ	Կրթության բաժնի կողմից նշակված նյութեր	մասնագետ	բարձրագույն, մասնագիտական	անվճար
		անգլերեն		2 անգամ		մասնագետ	բարձրագույն, մասնագիտական	անվճար

Համակարգչային ձևավորումը՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան
ՊԼՀ-ի համակարգչային կենտրոն (ղեկավար՝ դոց.
Վ.Վ.Վարդանյան)

Համակարգչային էջավորումը՝ Զ.Ս.Էլչակյան
Ս.Վ.Առաքելյան

Ստորագրված է տպագրության՝ 18.06.08
Հանձնված է տպագրության՝ 22.07.08

Տպաքանակ՝ 1000

«Լինգվա» հրատարակչություն
Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական
համալսարան
Հասցեն՝ Երևան, Թումանյան 42
Հեռ.՝ 53-05-52

Web: <http://www.brusov.am>

E-mail: [ysl@brusov.am](mailto:yslu@brusov.am)